

12733

A. G. Brewster

Ypsilanthus pulcherrimus
Bullock

Boston 1915

308(43925)

4-42

ՀՅԱՆ ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՃՈՎՃԱՆԻՍԻԱՆՑԻ


ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԱԿԱՆ ՄԱՆՐՈՒԹ

Ա. Ա. ԶԻՆ ԳՐՔՈՅՑ

Արտադպած 1906 թ. «Հովհան» շաբաթաթերթից

գ ր ե ց


ԵՂԻՇԵ ա. քահ. ԳԵՂԱՄԵԱՆՑ



Публицистическая мелочь. Протоиерея Егише Гегамянца.
Перепеч. изъ журнала «Овивъ» за 1906 г.



Գիւլ ՅՕ ԿՈՊ.



Բ Ա Կ Ս

Типографія „Труженикъ“ А. А. Куинджи. Телефонъ 20-12
1915.

1 DEC 2009
25 SEP 2006

Հրատարակութիւն ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՎԿԱՆ

ՄԱՆՐՈՒՆՔ

Ա. Ա. ԶԻՆ ԳՐՔՈՅՑ

Արտատպած 1906 թ. «Հովհան» շաբաթաթերթից

6
5
4
3
2
1
0
0
6

գ լ ե ց
ԵՂԻՇԵ ա. քահ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

Публицистическая мелочь. Протоиерей Егише Гегамянца.

Перепеч. изъ журнала «Овивъ» за 1906 г.

8527
X



Տիպոգրիա „Տրյուճնիկ“ Ա. Ա. Կումարէ, Տелефոն 20-12
1915.

18 MAR 2013

12733

ՄԵՐՍՈՎԱԿԱԳՐԻՑ

Պ Տ Բ Ո Ւ Յ Ց

Ց Ա Ն Կ

1. Հողային հարցը 1
2. Հրէից կառավարութեան եղանակը 8
3. Հայրենիքի պաշտպանութիւնը . 12
4. Պարտքը կամ փոխառութիւնը . 16
5. Ամէնքս միասին 21
6. Մի խոնարհ առաջարկ 60
7. Ընթացիկ հարցեր 65
8. Մեր յառաջադիմութիւնը յետա-
դիմութեան մէջ 73
9. Ընտրական գիտակցութիւն 86
10. Եկեղեցական յանձնաժողով 138
11. Ծխական ժողովների շուրջը 141
12. Ծխական դպրոցների շուրջը 150
13. Կրօնուսոյցների հարցը 154

առաջը միշտ գույքան և մաս-մասով
շահակ պայմանագրամ միշտ մանելուց
ունակութաց բանը մշտի և յայտնութեա-
-րու մասը ի երանուած զանուի և
-այլաւ 8001-1001 այս և դանձաւ

Հ Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ս Ա ն ա ղ մ ա լ լ ո ւ թ ե ա մ բ ե ս ս կ ս ե ր ե մ պ ա- -րապել Խալիքեան դպրոցը թողնելուց ան- -միջապէս յետոյ 1864-ին:

Առաջին գրւածքս եղել է «Զէնիաթ-
-Ղէնիաթ» վերնագրով մի դրամայ, և «Մեռ-
-նեմ իրեն՝ խոստցեր եմ» վերնագրով մի
փողեվիլ, որոնք միասին տպւել են նոյն
1864 թւին Թէոդոսիայում:

Երկու գրւածքն էլ Ախալցխայի կեան-
-քիցն են վերցրած և գրւած տեղական բար-
-բառով:

Լրագրութեան մէջ առաջին անգամ
գրել եմ Խորէն վ. Ստեփանէի «Հայկական
Աշխարհ»-ում 1865-1868 թ.թ.

Էջմիածնի «Արարատ» ամսագրում
գրած եմ 1870 և 1886 թւականներում:

«Մեղու Հայաստանի» լրագրի թղթա-
-կիցն եմ եղել 1870-ին և ապա մշտական
աշխատակիցը մինչև 1887 թիւը:

«Մշակ»-ի մէջ հրատարակման առաջի
տարին և եթ մի քանի անգամ գրեցի, բայց
յետոյ թողի:

«Փորձ»-ին և «Արձագանք»-ին հրատարակման առաջին տարիներիցն սկսած՝ աշխատակցել եմ մինչև նրանց դադարումը:

«Հումայ» հանդէսում մի քանի յօդւածներ եմ պրել 1901—1908 թւականներում:

«Հովիւ»—«Հովիտ» շաբաթաթերթերին նոյնպէս աշխատակցել եմ նրանց հրատարակման առաջին տարուց սկսեալ՝ 1906-ից մինչև այսօր։

Այս բոլոր թերթերում տպւած յօդւածներիս շատ քչերն են եղել իմ իսկական անունը և ազգանունը^{*)}) կամ դրանց սկզբնատառերը^{**)}) կրողը, միւս բոլոր մնացածները այլ և այլ կեղծանուններ են եղել, ինչպէս, «Զէնիաթքէր», «Թոխմախ», «Սլաք», «Բզնունի», «Հայկունի», «Քաղաքացի», «Ընթերցող» և «Հարց ու պատասխան»^{***)}):

Բոլոր այս գրւածներիցս 18 կտորն միայն յաջողել եմ առ այժմ առանձին հրատարակել արտատպութեամբ, իսկ մնացածներն, որոնք գրածներիս մեծագոյն մասն են կազմում, իբրև 42 տարիների աշխատանք, ցարդ ցրւած մնում են թերթերում, և ես չունեմ ոչ նրանց օտտիսկ—

^{*)} Յովակիմ Գեղամեանց։

^{**) Յ. Գ.}

^{***)} «Հովիւ»—«Հովիտ»-ում միայն իմ իսկական քահանայական անունովն եմ պրել։

ներն, ոչ էլ պիտեմ թէ ո՞ր թերթի և ո՞ր տարեթում և ԱՆ-ներումն են եղել տրաւած։ Նոյն իսկ ցարդ հնարաւորութիւն չունեցայ յիշեալ թերթերն ամբողջովին ձեռք բերելու, և իմ գրածներն նրանց միջից հանելու, կամ արտագրելու։

Այդ կողմից ինձ համար բացառութիւն են կազմել միմիայն «Հովիւ»—«Հովիտ»-ը, որոց տարեկանները պահած լինելով՝ այժմ ձեռնարկում եմ նրանցից արտատպել իմ մանր մունը գրւածներն և առանձին գրքոյներով հրատարակել։

Ներկայ գրքոյկը՝ առաջինն է՝ 1906-ին գրւած յօդւածներով։

1864 թւից սկսեալ մինչև այսօր գրել եմ ձրիաբար։ Ոչ մի թերթից, ոչ մի կոպէկ վարձ կամ հօնօրար չեմ ստացել, որովհետև խմբագիրները իրանք էլ ձրիաբար են գրել միշտ, և դեռ յաճախ իրանց գրպանիցն էլ են վեր եկել առաւել կամ նւազ չափով։

Առանձին տպագրւած գրքոյներիցս էլ ոչ մի նիւթական օգուտ չեմ ունեցել, այլ նւիրաբար ուղարկել եմ ծանօթներիս ու բարեկամներիս, և այլ և այլ ընկերութիւնների և հաստատութիւնների մեզանում և արտասահմանում^{**)}։

^{**)} Ամէն մի գրքոյկի փոստայի և փոխադրութեան այլ ծախքերն՝ հոգացել եմ Բագւի մի քանի Փիրմաների վրայ մի երկու հարիւր օրինակ վաճառելով։

Այսպէս վարւելն՝ ես արդար եմ համարել, վասն զի արտատպութիւններն էլ կրատարւել են սկզբներում խմբագրութիւնների հաշով, իսկ վերջերում՝ այլ և այլ անձինքների հաշով, որոց անունները տպւած են զրբոյկներիս ճակատում:

ԵՂԻՇՔ ա. ք. ԳԵՂԱՄԵԱՆՑ:

10 յուլիսի 1915թ.

Решение

յառ-օօօչ - յառաւան ցըրցով լորիս
ապրումանի յու կ կոչ կոչ կոչ կոչ
յառ զույն աշակե բանցի բանցի բանցի
-ու մ մ չ ա ցըրցով մ մ մ ա ցըրցով մ մ
-ու ցըրցու մ մ զուհուս կոչ կոչ կոչ
զուհուս կ կ կ զուհուս կ կ կ զուհուս
-ու զուհուս կ կ կ զուհուս կ կ կ զուհուս

卷之三

Հայութիք և Պատմութեալ պահոցը մէ մէան (2)
վեց մէ չըսո՞ւ և յացարու նկածուն յանձնու
առաջ բաժիշտ դժուան ափամ մէ շայ պահանջման
պահուածուն

ՀՈՂԱՑԻՆ ՀԱՐՑԸ

(Lumin. U. p. n. g.)

三

Յայտնի է, որ Հրէից ազգի կառավարութիւնը Աստուածական էր, այսինքն՝ հրէայք միմիայն Աստծուն (Եհովային) էին ընդունում իրանց համար թագաւոր, և ամեն մի հրէայ, անխտիր, անդամ էր Եհովայի թագաւորութեանը։ Նա,—Եհովան,— էր, որ ազգին օրէնքներ էր տալիս և պաշտպանում, երբ պահւում էին օրէնքներն և, ընդհակառակը, բարձի թողի անում, պատժում, երբ ազգը խորշում, խուսափում էր օրէնքներից։

Արդ՝ այս տեսակէտով՝ հողը կամ երկիրը, պատկանում էր Աստծուն, իբրև նրան Ստեղծողի, այլ ոչ թէ մարդուն, որ իւր հերթում, նոյնպէս ստեղծուած էր։ Սեպհականութեան իրաւունք չունենալով՝ ուրեմն մարդը կարող չէր հողը առևտրի առարկայ դարձնել։ Նա իրաւունք չունէր հողը գնել կամ վաճառել անդառնալի կերպով։ Մի գիտնական ասում է, որ հրէից հին լեզուի մէջ՝ հողի սեպհականութեան խմատ արտայայտող բառ չկար։» Երկիրը

իմս է, ասում է Եհովան, —իսկ դուք ինձ
մօտ պանդուխտներ և հիւրեր էք «(ղետ.
իե. 23):

Բ.

Հրէից մէջ դասակարգեր չկային այն
մտքով, ինչ մտքով որ կային և դեռ կան
շատ ազգերի մէջ: Եհովայի հպատակները
համահաւասար ձայն և իրաւունք ունեին:
Ուստի և խոստացեալ (Աւետեաց) երկիրը
տրուեցաւ 'ի շահեցողութիւն ամբողջ ազ-
գին: Եւ որպէս զի տուչութիւնը արդարու-
թեամբ և հաւասարութեամբ կատարուի՝
նախապէս ցեղերը, ապա ցեղեր կազմող
ճիւղերը, ազգակիցները, գերդաստները և
ապա դրանց ամէն մինը կազմող առան-
ձին անհատները՝ մանրամանօրէն ցուցա-
կագրւեցան: Եւ ապա ամբողջ երկիրը, վի-
ճակով, մասնատրւեցաւ, բազմաթիւ ցե-
ղին՝ շատ, սակաւաթիւին քիչ:

Հողը տրուեցաւ 12 ցեղերից (*) ամեն
մէկի ցեղապետի անունով: Այսպիսով՝ ա-
մէն մի հրէայ ունէր իւր հողաբաժինը,
որից և շահւում էր անարգել և առանց կա-
խումն ունենալու ում և իցէ կողմից:

Երկրագործութեամբ պարապող ժողո-
վրդի համար ինչպէս որ հրէաներն էին, հո-

*) 13. բդ ցեղը, ղետացիք, հողաբաժին չ ստա-
ցան: Նրանց կրօնային պաշտօնավարութիւնը վարձա-
տրում էր բերքերի տասանորդներով:

զի այս տեսակ բաշխումը ահագին նշանա-
կութիւն ունի: — Նա չի թոյլ տայ, որ ժո-
ղովրդի տնտեսութեան մէջ խոշոր զանա-
զանութիւններ, անհարթութիւններ առաջ
գան: Մովսիսի օրէնքների մէջ հրահանգներ
կան թէ՝ ինչպէս պէտք է վարուել, որ թէ
ցեղերի, թէ ազգակիցների, թէ գերդաստ-
ների և թէ նոյն իսկ անհատների հողաբա-
ժիններիցը՝ մէկզ մէկու չանցնին, մինին
հողը, 'ի վսաս միւսի, չաւելանայ:

Գ.

Սակայն այլ և այլ բնական հարուած-
ներ, ազգայնական, գերդաստանական և
անհատական գժբախտութիւններ, մի ցեղի,
մի գերդաստանի և մի անհատի շանասի-
րութիւնը, տաղանդը, խնայողութիւնը, ա-
ճեցողութիւնը, իսկ միւսի՝ ծուլութիւնը,
անշնորհքութիւնը, վատնողութիւնը, նուա-
զացումը և այն, վերջ 'ի վերջոյ, անշուշտ
խոտորումն և անհաւասարութիւն է առաջ
բերում մարդկանց մէջ: Եւ ահա երկան են
գալիս հարստութիւնն ու աղքատութիւնը
իրանց յարակից ամէն տեսակչարիքներով:

Այդ չարիքների առաջն ևս, հնարեղա-
ծին չափ, առնուած է ս. զբքի, այսպէս
անսւաննեալ, Շաբաթական և Յորեկեան տա-
րիների համար սահմանուած օրէնքներով:

Դ.

Ամեն մի վեց տարուայ հետևեալ տա-

ըմբ Շաբաթական էր կոչւում, երբ հողը
պէտք է հանգստանար: Հողի որ և է տեսակ
մշակումն բացարձակաբար արգելուած էր:
իսկ ինքնիրան բուսած բերքերն՝ հասարա-
կաց սեպհականութիւն էին համարւում: Ա-
մեն ոք, ամէն մարդ ու կենդանի, լիսկա-
տար իրաւունք ունէր երկրի բերքերիցը
օգտւել անձամբ: 'Ի շնորհս այս օրէնքի
նախ՝ հողը կը հանգստանար, որ, ինչպէս
յայտնի է, մի կարևոր հանգամանք է զիւ-
ղատնտեսութեան մէջ. երկրորդ՝ արածող
բազմաթիւ կենդանիների արտադրած աղ-
րով՝ երեխը որոշ պարարտութիւն. կստա-
նար, երրորդ՝ հողատէրը զրկուած կը լինէր
մի տարուայ արդիւնքով և աւելացնել
իւր գանձր, միւս կողմից՝ աղքատներն ու
տնանկներն որոշ չափով օգտուում էին,
չորրորդ, և զիստորապէս, եհովայի թափա-
ւորութեան անդամների հաւասարութեան,
եղբայրակցութեան գաղափարը, որ կարող
էր նախընթաց վեց տարիներում, թուլա-
ցած լինել, եօթներորդ տարում նորից կը
զարթնէր, կարծարծւէր մարդկանց մտքի
և որտի մէջ:

Ե.

Յորելեան կոչւում էր ամեն մի յիս-
ներորդ տարի, որ փողեր հնչեցնելով աւետ-
ուում էր ժողովրդին ամեն տեղ իրքն ազա-
տութեան տարի: Առաջին ինն օրն՝ ժողո-
վուրզը ուրախութեան հանդէսներ էր կա-

տարում՝ ամէն ոք զիսին պսակ կրելով:
Բոլոր ծառաները արձակ էին համարւում,
զերիները՝ ագատ թողնւում, դրամական
պարտքերը՝ ընծայւում, տացուածքները,
հողերը իրանց նախկին տէրերին, կամ նրանց
ժառանգներին էին վերադարձնւում, իհար-
կէ առանց որ և փոխարինման կամ պայ-
մանի:

Շաբաթական տարուայ նման Յորե-
լեան տարին ևս՝ երկիրը անմշակ էր թող-
նւում և նրա ինքնաբոյս բերքերն՝ հասա-
րակաց տրամադրութեան տակ էր դրւում:
(ղետ. իե. 8—14):

Այսպիսով, 'ի շնորհս Յորելեան տա-
րուայ, ժողովրդի տնտեսական կեանքի մէջ՝
նախորդ 49 տարիների ընթացքում տեղի
ունեցած բնական և արւեստական անհար-
թութիւններն, զգալի չափով, կոկւում յար-
դարւում և ամէն մի ցեղ, ամէն զերդաս-
տուն և ամեն մի անհատ՝ տնտեսապէս և
բարյապէս վերակենդանում, վերանո-
րոգում և վերադառնում էր իւր նախնա-
կան, հաւասար և ազատ անդամակցական
վիճակին Աստուծոյ թագաւորուտեան մէջ:

քաղէս անկարելի էր պարտուպատշաճ արագութեամբ և արդարութեամբ դատաստան տեսնել:

Ուստի և Մովսէսը ժողովրդեան միջից տամնապետներ, յիսնապետներ, հարիւրապետներ և հազարապետներ ընտրել տւեց: Դրանցից՝ իւրաքանչիւրը իւր շրջանում՝ քննում և վճռում էին այն սովորական, մանր մունք գործերն, դատերն, որոնք ծագում էին իւրաքանչիւր ցեղը կազմող գերդաստանների մէջ, որոնցից որ իրանք ընտրուած էին: Իսկ զիսաւոր գործերն՝ վերապահում էին Մովսէսին, (Ել. Ժը. 14 23):

Գ.

Սակայն Մովսէսին վերապահուած գործերն էլ՝ այնքան շատ էին դարձեալ և բազմակողմանի, որ նրան երբեմն վհատեցնում էին: Ուստի մարդարէն, Եհովայի հրամանաւ, 70 ծերեր ընտրել տուեց իրան օգնական: Դրանցից 12-ը՝ հրէից ցեղերի ներկայացուցիչներն էին, իսկ 58-ը ցեղերի առանձին ազգատոհմերի ներկայացուցիչները: Դա հրէից ծերակոյար, կամ այժմեան լեզուի, Սենադն էր, որոյ անդամների փորձառութիւնը՝ տարիքը և միւս բարեմասնութիւնը՝ ժողովրդեան աչքում գրաւական էին նրանց պաշտօնի մեծութեանը:

Դ.

Ամեն մի ցեղապետ՝ ցեղի իշխանն էր

ՀՐԵՒՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

(Բ. ս. ս. Ս. գ. բ. ո. ց.)

ա.

Յայտնի է, որ 15 դար նախքան Քրիստոս՝ հրէայք Եգիպտոսից Աւետեաց երկիրը գաղթեցին Մովսէս մարդարէի առաջնորդութեամբ: Մովսէս ահազին ազգեցութիւն ունէր ժողովրդեան վրայ, իբրև նրա թագաւորի, - Եհովայի, - ներկայացուցիչ, իբրև նրա թագաւորի մէջ միջնորդ և իբրև Եհովայի օրէնքների գործադրութեան վրայ հսկող:

Գաղթականների թիւը՝ երկու միլիոնի էր հասնում, որոնցից 600.000, -ը՝ զէնք կրէլու տարիքումն էին: Այս ահազին բազմութեան մէջ տեղի ունեցած ամէն տեսակ վէճեր քննողն և դատաստաններ կտրողն՝ ինքը Մովսէսն էր, մէն մէնակ: Ուստի և նրա վրանի շուրջը (քանի որ ժողովուրդը գեռ անապատումն էր). առաւոտից մինչև երեկոյ, մեծ բազմութիւն էր խոնուած: (Ել. Ժը. 13):

Բ.

Շատ հասկանալի է, որ մի մարդու համար, թէկուզ նա լինի Մովսէսի նման հոյակապ, «առտուածախօս» անձն Փիզի-

համարւում։ Նա էր ողջ ցեղի գործերի կառավարող, նրա ամեն տեսակ դատերը քընչնողը ու վճռողը, բաց ոչ թէ միայնակի ինքնապուխ, ոչ այլ, այսպէս ասած, ցեղ դական ժողով, որին նա միայն նախապահում էր։ Իսկ ժողովի անդամներին էին ցեղում եղած առանձին ազգատոհմերի և առանձին գերդաստների ընտրեալ ներկայացուցիչները։ Նոյնպէս և ցեղի տասնապետներն, յիսնապետները, հարիւրապետները և հազարապետները։

Աւասիկ սոյն այս ցեղական ժողովն էր, որ վարում էր ցեղի ամեն տեսակ քաղաքական գործերը, պաշտպանում էր ցեղի շահերն ոչ միւս ցեղերի՝ այլ նաև օտարների, հարևան ազգերի տուած։ Ցեղական ժողովը կարող էր, հարկաւոր դէպքում, մինչև իսկ պատերազմ հրատարակել օտարների դէմ, (Յես. Նաւ. Ժէ. 14—18։

Կառավարիւթեան այս եղանակից ընթերցողը տեսնում է, որ հրէից 12 ցեղերը, առանձին առանձին վերցրած, մի մի ինքնափար փոքրիկ տէրութիւններ կամ հասարակութիւններ էին կազմում, որոնք իրանց ցեղական թէ ներքին և թէ արտաքին գործերն անօրինում էին ամենայն ազատութեամբ և ինքնուրոյնութեամբ նման այժմեան Զուեցերիայի կանոններին։

Ե.

Սակայն, ինչպէս ամեն ազգի, նոյն-

պէս հրէից մէջ, կային բաց ՚ի ցեղային, մասնաւոր ինդիրներից նաև ընդհանուր, ազգային խնդիրներ, ընդհանուր ազգի կառավարութիւն։ Սրան էլ վարում էր, այսպէս ասած ազգային ժողովը, որին մասնակցում էին 12 ցեղերի ներկայացուցիչները (իշխանները), ծերակոյտի անդամներն և ամբողջ ազգի տասնապետներն, յիսնապետներն, հարիւրապետներն և հազարապետներն։

Ազգային ժողովի իրաւասութեանը ենթարկում էին ազգի թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեանը վերաբերեալ ամեն տեսակ գործերն։

Ազգային ժողովը, սովորաբար, երկումաս էր բաժանում և ունէր իւրիսորհուրդը, կամ այժմեան լեզով, պալատը։ Խորհուրդը, իւր ներթում, բաժանում էր երկու մաս, — մինը՝ որ մշտապէս էր գործում և միւսը՝ որ պէտք եղած ժամանակ էր գումարւում։ Նոյն իսկ գումարման համար կային որոշ եղանակներ, ինչպէս անապատում, նմանապէս վերջերումը և Պազգեստինում։ Իմ նպատակն էր միայն «Հոգուի» ընթերցողներին ցոյց տալ, որ տընտեսական, ընկերութական և քաղաքական շատ հարցեր, որոնք երբեմն ամբողջ աշխարհներ են սասանեցրել և զեռ սասանեցնելու են, ոչ թէ, իբրև սկզբունքներ միայն կան և, գրքի մէջ, այլ նաև ՚ի շնորհս այդ գրքի օրէնքների՝ խաղաղ և բաւարար վը-

ճիռներ են ստացել և ամբողջ դարեր իրաւութեածել են Եհովայի թագաւորութիւնը կազմող ազգի կեանքի մէջ:

Վերցրէք, օրինակ, հրէից տպային ժողովի կազմն ու իրաւասութիւնը և համեմատեցէք Ամերիկայի մեծ հասարակապետութեան կազմի հետ: Զանազանութիւնն զրեթէ չկայ: Մինչդեռ դրանց մէջ եղած ժամանակի հեռաւորութիւնը՝ շատ պատկառելի է, ամբողջ 24 դար:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Հ. ս. Ս. Գ. Բ. Պ. Պ. Հ.)

ա.

Աւետեաց երկիրը՝ այնքան էլ էժան չնստեց Հրէից վրայ: Եղիպտոսից սկսեալ նրանք ճանապարհին շարունակ նեղութիւն և զրկանքներ էր, որ կրում էին, մինչեւ որ, վերջապէս, երկրի սահմանն հասանաբայց որովհետև Քանանացւոց (Աւետեաց երկրի ընիկներն) մասին իրանց ստացած տեղեկութիւնները նրանց վրայ մեծ երկիւղ և սարսափ էին ազգել, ուստի և Մոփսէսը, Եհովայի հրամանաւ, ստիպւած եղաւ նրանց կրկին յետ դարձնել անապատը: Եւ այնքան պտտացրեց (ամբողջ 39 տարի) մինչև որ թուլասիրտ և երկչոտ էին սեւ

բունդին՝ յաջորդեց անապատային կեանքում կուած, կոփած մի նոր, երիտասարդ և պատերազմելու ընդունակ սերունդ:
«Դուք այս անապատի մէջ պիտի մեռնիք, ջնջւիք, ասաց Եհովան: Դուք չպիտի մտնէք այն երկիրը, որ ձեզ խոստացել էի, այլ ձեր որդիքը: Ձեր չհաւանած երկիրը՝ նրանք պէտք է տեսնեն»: (Թւոց Ժդ. 29—32):

բ.

Եւ, արդարեւ, նոր սերունդը մտաւ Յեսու Նաւեայի առաջնորդութեամբ և կարճ ժամանակում ընկճեց Քանանացւոց: Ընկճեց, սակայն դեռ չնւաճեց իսպատ: Բացի դրանից Քանանի հարեան ազգերը՝ շատ խորթ, անհաշտ աչքով էին նայում Հրէից վրայ, որովհետև նրանք տեսան, որ անապատներից եկող այդ թափառաշրջիկ հովիւ ժողովուրդը՝ ընդունակ է զէն ՚ի ձեռնին կուելու: Եւ ահա մասամբ այդ երկիւղից, մեծ մասամբ էլ իրանց աւազակային, արիւնառուշտ, ընազգներից թերապուած՝ Հրէից հարեան ազգերը յաճախակի և անակնուելի յարձակումներ էին գործում նրանց վրայ: Եւ թէպէտ չէին կարողանում ընկճել, նւաճել, սակայն նիւթական մեծամեծ վեամներ էին հասցնում: Ահազին բազմութեամբ՝ երբեմն այս կողմից, երբեմն այն կողմից՝ նրանք թափում, լցուում էին Հրէից սահմանները.

փչացնում էին նրանց ցանքսերը, այլում
էին հաց հատիկների տեղերը, յափշտակում,
քշում տանում էին ոչխարները, արջառ-
ները և էշերը: (Դատ. Զ. 3—7):

Արդ՝ բնակւելով մի այսպիսի երկրում,
շըջապատւած լինելով այսպիսի հարևան-
ներով՝ չըէաները, բնականաբար, հարկա-
դրւած էին միշտ կազմ և պատրաստ լի-
նել իրանց նոր ձեռք բերած հայրենիքը,
իրանց անձը և իրանց գոյքը պահպանելու
համար: Եւ այսպէս էլ անում էին նրանք:

գ.

Որովհետև օրէնքի առաջ՝ ամեն մի
չըէայ համահաւասար ձայն և իրաւունք
ունէր՝ «ցեղապետից սկսեալ մինչև փայ-
տատն ու ջրկիրը» (Երկո. Օր. իթ. 10—12):
Որովհետև մի և նոյն համահաւասար իրա-
ւունքը, անխտիր փայլում էին նաև չըէից
հետ բնակւող օտար ազգերը (թւոց ժե.
16—29. ել ժբ. 49. դատ. իդ. 29),—
ուստի և հայրենիքի պաշտպանութիւնը
պարտագիր էր ամեն մի հրէայի և ա-
մեն մի նրա հետ կենացող օտարազ-
գու համար: Այս հիման վրայ՝ ամեն մի
ցեղի, ամեն մի ազգատոհմի և ամեն մի
գերդաստանի մէջ եղած արուն (բացի
կետացւոց արուներից, որոնք հողարաժին
չունէին), երբ 20 տարեկան էր դառնում,
պարտաւոր էր զինուր գրուել: (թւոց Ա.

2—3): Եւ հարկաւոր դէպքում, պատերազ-
մի դաշտ դուրս գալ:

Երկու տեսակ զինուրակոչութիւն է
լինում, — մինը՝ 20 տարեկաններ, միւսը՝
20-ից աւելի տարիքաւորների: Նայած կա-
րիքին, հանգամանքներին՝ կազմւում էին
բանակներ՝ փոքր կամ մեծ բանակ և երի-
տասարդ կամ աւելի տարիքաւոր զինուր-
ներից: Իսկ երբ կարիք չկար, կամ կարի-
քը անցնում էր, այնուհետև ամեն մի
զինուր ու զօրապետ իրանց տնային գոր-
ծերին էին նւիրւում:

Զինուրագրութեան վերաբերմամբ, ՚ի
հարկէ, արտօնութիւն վայելողներ ևս կա-
յիր: Արտօնութիւն վայելում էր նա, որ
ա) տուն էր շինել, բայց դեռ նաւակատի-
քը չէր կատարել. բ) այզի էր տնկել, բայց
պառւզը չէր վայելել, որ սովորաբար, հինգ-
երորդ տարումն էր լինում. գ) նշնւած
էր, բայց դեռ պակւած չէր. դ) թէն
պակւած էր, բայց կնոջը հետ անբաժան
կենակցելու մի տարին դեռ լրացած չէր.
(Երկո. Օր. ի. 5—10 և իդ. 5): Վերջապէս
ե) նա, որ երկշոտ ու թուլասիրտ է: Թող
այդպիսին, ասում էր օրէնքը, «Իւր տու-
նը գտանայ, որ չինի թէ իւր եղբայրների
սիրտն էր իւր սրտին պէս թուլացնէ»:
(Ծնդ. ի. 8):



ՊԱՐՏՔԸ ԿԱՄ ՓՈԽՍՏԻՌԻԹԻՒՆԸ

(Հ. ս. Ս. դ. բ. ո. ց.)

ա.

Մովսէս մարգարէի միջոցաւ Հրէից տրւած օրէնքների հիմնական նպատակն այն է, որ մարզկանց մէջ՝ թէ իրաւունք և թէ պարտականութեան նկատմամբ՝ եղբայրակցութիւն, հաւասարութիւն լինի: Իսկ իդէպս խախտման՝ վերականգնի, վերահասատուի հաւասարութիւնը: Եւ առ մի ձևականութիւն, մի անրմբոնելի գաղափար չէր, այլ ներքին, հոգեկան պահանջ, կեանքի մէջ գործադրութիւն ստացած մի բնոյթ, սովորութիւն: Ի թիւս այլոց, հէնց մի և նոյն գաղափարի վրայ էր հիմնւած նա և պարտքի կամ փոխատութեան օրէնքը:

Բ.

Հրէից մէջ, երբէք երկրագործ ժողովրդի գրամք չէր կարող առևտրական շահատակութիւնների նիւթ դառնալ: Մանաւանդ որ այդ մասին մարդիկ՝ հին ժամանակ՝ գաղափար էլ չունեին: Երբ մի հրէայ դրամի կարիք ունէր՝ իւր այս կամ այն անհրաժեշտ պէտքը հոգալու, բնական կամ

արւեստական այս կամ այն պատճառից առաջացած վտանգի առաջն առներու, դիմում էր դրամ ունեցողին և նա էլ տալիս էր, օրէնքը պարտաւորեցնում էր նրան տալ:

«Եթէ եղբայրներիդ մէջ՝ մինը աղքատանայ, խստասիրտ մի լինիր. ձեռքդ նրա առաջ մի զոցել: Այլ անպատճառ ձեռքդ բաց նրան և նրա կարօտութիւնը լրացներու չափ՝ դրամ փոխ տուր նրան»: (Երկր. Օր. Ժե. 8—9): Բայց դրամի փոխատութիւնը պիտի լինէր առանց տոկոսի: — «Եթէ քո եղբայրը աղքատանայ, ու անոր ձեռքը տկարանայ, նրան պիտի օգնես՝ օտարականի ու պանտուխտի պէս, որ քո մօտը ապրի: Բայց նրանից վաշխ կամ տոկոս չպիտի առնես, հապա քո Աստուծուց վախենաս, որ եղբայրդ մօտդ ապրի: Բո դրամը նրան վաշխով չպիտի տաս, ոչ էլ քո հողը:»

Գ.

Դրսեցի օտարականներից, ընդհակառակը, օրէնքը թոյլատրում էր տոկոս վերցնել (Երկր. Օր. իգ. 20) այն պարզ պատճառաւ, որ ա) օտարականը, օրինակ վիւնիկեցի վաճառականը, երբ մի հրէայից փող էր վերցնում և նրանով, առևտրի մէջ վաստակ էր անում, շատ բնական և արդար կը լինէր, որ վաստակի մի մասն էլ փողի տիրոջը համելը: բ) տալով օտարին

իւր զրամը առանց տոկոսի՝ հրէայ զրամատէրը ոչ մրայն ինքն էր զրկւում, այլ նաև իւր ազգակցին. կամ հայրենակից օտարականին զրկած կը լինէր իւր զրամից օգտւելու առիթից: գ) իւր ազգակիցն կամ հայրենակցին առանց տոկոսի զրամ փոխ տալով՝ հրէայ զրամատէրը՝ իւր ազգային օրէնքի նրբութեամբ պահած, պատւած կը լինէր առանց, սակայն, փոխ տւած զրամից, կամ նրա մասից, զրկւելու երկիւղն կրելու: Որովհետեւ պարտապանը միշտ իւր աչքի առաջն էր, նրա գործի զրութիւնը, նրա կենցաղավարութիւնը իրան քաջայտնի էին: Վերջապէս, եթէ կամենար, կարող էր զրաւական վերցնել: Մինչդեռ օտար երկրացուն փոխ տալով՝ հրէայ զրամատէրը որոշ ըիսկ էր անում՝ իւր զրամը, նրա մասը կորցնելու, կամ ստացումը ջանջալի ձգելու:

Դ.

Եթէ որ զրամատէրը, իրան յայտնի որ և է պատճառաւ, անհրաժեշտ էր համարում փոխ տուած զրամը զրաւականով ապահովելու՝ կարող էր: Օրէնքը տալիս էր նրան այդ իրաւունք:

Այն պայմանաւ, սակայն, որ ա) առաջին հարկաւորութեան առարկաներն զրաւ չպիտի վերցնելին և բ) միւս առարկաներն էլ՝ միմիայն այնպիսիներն, որոնց ընտրում և որոշում էր պարտապանը, այլ

ոչ թէ պարտատէրը: Վերջինս, այդ առ թիւ, առաջինի շեմքը ոտք կոխելու՝ անզամ իրաւունք չունէր: Մի գուցէ չլանար, ազանութեան կրքով տոգորւէր:

«Եթէ քո զրացուն մի բան փոխ աաս, ասում է Եհովան, զրաւ առնելու համար՝ նրա տունը չմտնես, այլ դուրսը կաց և փոխ առնող մարդը՝ զրաւը քեզ դուրս կը բերէ»: (Երկր. Օր. Իդ. 10): «Եթէ զրացուդ հանդերձը (վրայի վերարկուն աղքատների համար վերմակի պաշտօն էր կատարում գիշերները) զրաւ առնես, արեւ մայր չը մտած՝ իրաս պէտք է յետ դարձնեա: Որովհետեւ նա է նրա ծածկոցը, ինչով պիտի պառկի»: (Ել. Ժր. 27): «Այրիին հանդերձը՝ զրաւ չառնես» (Երկր. Օր. Իդ. 18): Զլինի թէ մի մարդ ընկերին աղօրիքը (որով կանայք իրանց առօրեայ հացն աղուն էին անում) կամ նրա վերևի քարը զրաւ առնէ: Դրանով նա ընկերին կեանքը, նրա հոգին զրաւ վերցրած կը լինիս: (Երկր. Օր. Իդ. 6):

Ղ.

Չսայած օրէնքի այս պարզ ու զրական պահանջին, այնուամենայնիւ գտնւում էին զանցառուներ: Եւ ուրեմն՝ ազահութիւնը, զրկանքը, կեղեքումը որոշ գեր խաղում էր նոյն իսկ Եհովայի թագաւորութիւնում: — Դա երեւում է Յովիմի խօսքերից՝ չար, անօրէն մարդկանց նկատմամբ, որ ասում է. «որբերի էշերը քշում, տանում են, այրիի

եղը՝ զրաւ են վերցնում» (Յոք. Իգ. 3):

Այսպիսով՝ «Երկրի մէջ աղքատը պաշակաս չէր լինում» (Երկր. Օր. Ժե. 11): Եւ ուրեմն, տնտեսական հաւասարութիւնը՝ քանդում էր:

Է.

Այդ շարիքը ոչ եթէ իսպառ խարանելու, գէթ նրա ծաւալման առաջն տոնելու համար՝ օրէնսդիրը «թողութեան տարի» էր սահմանել, որ մի և նոյն Շաբաթական տարին էր: Այդ տարին բոլոր պարտքերը միանգամայն կրցնում էին իրանց ոյժը: «Ամեն հօթներորդ տարին, ասում է Եհովան, թողութիւն պիտի անես: — «Ամեն պարտատէր, որ իւր դրացուն մի բան փոխէ տւած, պիտի թողնէ. իւր դրացուց կամ իւր ընկերից չպիտի պահանջէ փոխ տւածը, վասն զի յանուն Աստուծոյ թողութեան տարի է»: (Երկր. Օր. Ժե. 1—3):

Բ.

Օրէնսդիրը մինչև անգամ նախատեսել է, որ դրամատէրը կարող է հրաժարւել փոխ տարուց, ուստի և սահմանել է՝ «զգոյշեղեր՝ չլինի թէ սրտումդ չար խորհուրդ անցկացնես և հօթերորդ տարին մօտ է ասելով աղքատ եղբօրդ վրայ անգութ աշքով նայես և նրան փոխ չտաս և նա էլ քողէմ Տիրոջը աղաղակէ և դու մեղքի տէր լինես»: (Երկր. Օր. Ժե. 9): *)

(*) Այս 4 յօդւածները գրելիս՝ օդուել եմ պրօֆ. Լոբովինից

ԱՄԷՆՔՍ ՄԻԱՍԻՆ

Հոգեսրականութեան վրայ յարձակւիլն՝ նրան անւանարկել վարկաբեկ անելն՝ նոր բան չէ մեր լրագրութիւնում: Վերջինս այդ առթիւ՝ լի ու լի ազատութիւն էր վայելում՝ վերջերումս մամուլին տրւած ազատութիւնից տակաւին շատ առաջ:

Բայց ինչպէս առաջ՝ նոյնպէս և այժմ հոգեսրականութեան անողոք դատաւորներն՝ ոչնչով չեն ապացուցել թէ՝ հայ ազգի կրած վսամն իւր հոգեսրականութեան կողմիցն՝ ի՞նչ է եղել: Ապացուցւած չէ թէ՝ երբ և ինչպէս հայ կղերը հակառակել, խոչընդոտներ է հանել այս ու այն օգտաւէտ, հանրաշահձեռնարկութեան հանդէպ. արդեկը և խափանարար է հանդիսացել ազգային յառաջադիմութեանը. օգտւելով իւր կոչումից կղերը այս ու այն դէպքում խաւարամիտ ամբոխին լարել, գրգռել է այս ու այն ազգային հիմնարկութեանն, անձնաւորութեան դէմ. յափշտակել և իւր դասակարգային շահերին կամ նպատակներին է ծառայեցրել այս ու այն եկեղեցւոյ կամ վանքի սեփականութիւնը, շարժական կամ անշարժ գոյքը և այլն:

Այս ամէնը, սրանցից ոչ մինը, այն, ապացուցած չէ ոչ պատմական և ոչ ժամանակակից հոգևորականութեան նկատմամբ։ Եւ ի՞նչպէս կարելի է չեղած բանը ապացուցանել։ Մենք աւելին կասենք՝ այդպէս բան հայ հոգևորականութիւնը չէր էլ կարող անել։

Պատճառը պարզ է և ակնյայտնի։

Մեր եկեղեցւոյ հիմնական օրէնքը՝ ընտրական սկզբունքը, — չի թոյլ առայ, որ աշրամտեան եկեղեցւոյ նման՝ մեր մէջ ևս կղերականութիւն, կղերական դասակարգ կազմւի իրան յատուկ միտումներով, իւր առանձին շահերով, իւր որոշակի ուղղութեամբ։ Հայ հոգևորականութիւնը՝ ի շնորհս իւր կոչման՝ ժողովրդի հայրն է, ի շնորհս իւր գործունէութեան՝ եկեղեցւոյ՝ այսինքն ազգի, ժողովրդի ծառան է և սպասաւորը, ճիշտ այնպէս, ինչպէս որ ամէն մի ընտանիքի հայրը՝ միւնոյն ժամանակ այդ ընտանիքի ծտռան էլ է։ «Հոգևոր իշխանութիւն» տիտղոսը նորամուտ է մեր մէջ։

Բարեբախտաբար ինչ որ մեր կեանքի, մեր եկեղեցւոյ մէջ չկայ, մեր լրագրութեան մէջ, դժբախտաբար, կայ։ Եւ ահանա, — լրագրութիւնը՝ անշուշտ անգիտութեամբ, այլ ոչ որկ է չար նալատակով անդադար թմբուկներ է զարնում, զանգակներ զօղանչեցնում, որպէս զի ժողովուրդը զարթնի, սթափւի և իրը իրան գոյութեանը սպառնացող վերահաս վտանգի

առաջն առնի, այսինքն՝ հայ կղերի ձեռքիցը եկեղեցական հաստատութիւնները յետ վերցնի, նոյն իսկ իսլի։ Հանգուցեալ եանովսկու հայատեաց ոգին անշուշտ կըցընծայ՝ երբ լսէ, որ իւր ցանած սերմերն այսպէս շուտ ծլեցան ու ծաղկեցան... ազգասէր հայ գրողների սրտերում և ուղեղներում։

Դառնանք հարցին։

Մէկի ձեռքիցը մի բան խլելու համար՝ պէտք է որ նախապէս նրա ձեռքումը, նրա մօտ լինի այդ բանը։ Բայց արի տես, որ թէ պատմական ժամանակներումը և թէ ներկայումս մեր ազգային եկեղեցական ամէն տեսակ հաստատութիւններն՝ ժողովրդի, ծխական համայնքի ձեռքին են եղել։ Նրանց տէրերը, նրանց կառավարիչը, նրանց արգիւնքներն հայթայթողը և մատակարարողը՝ ժողովուրդն է եղել ի գէմս իւր ընտրած երեցփոխանների, ինսամակալների և հոգաբարձուների։ Մեր թէ ծխական, թէ հոգևոր դպրոցների, մեր միակ ձեմարանի ուսուցչական մարմինները՝ կազմւած են եղել ամենամեծ մասամբ՝ աշխարհականներից։ Այդ ամեն կարգի դպրոցների ծրագիրներն և զասագրքերն՝ կազմել են աշխարհիկ մանկավարժներ։ Տեկտօրներն, տեսուչներն և աւագ միւս ուսուցիչներն՝ եղել են, ըստ մեծի մասին, նոյնպէս աշխարհականներն։

Մեր ծխական դպրոցների թեմական

տեսուչներն՝ թւով հոգևորականներից աւելի աշխարհականներն են եղել: *)

Գալով հոգևորականութեանը, — նա եղել է միմիայն հսկող, — և պէտք է ասենք, շատ թոյլ հսկող. — և գլխաւորապէս՝ իրաւաբանական պատասխանատու մարմին պետութեան առաջ:

Այսպէս է եղել ցարդ, կարծում ենք՝ որ այսպէս պէտք է լինի և այսուհետեւ, երբ որ մենք՝ մեղ՝ և մեր չափը ճանաչելու առաքինութիւնն ունենանք և եթէ որ մեր ոտքի հաստատուն հողը, մեր կողքի թև ու թիկունքը թողած՝ երկնքում՝ նորանոր պատւանդաններ և աստղերում՝ նորանոր նեցուկներ չը որոնենք մեզ համար:

Հարկաւոր է, անհրաժեշտ է մեղ՝ զէթ փոքր ինչքաղաքական հասունութիւնն ունենալ և իմանալ, որ այս, ինչ որ բոնութիւնն ու բրտութիւնը իւր ձեռքերովն էր ուզում անել, բայց չը յաջողւեց, մինոյնը կարող էր անել այժմ, այսուհետեւ աղասութիւնը, քնքութիւնը, մեղմութիւնը: Եւ կանի... մեր ձեռքով: Լրագրական արտասոց յարձակումներով, փուն ու փծուն բացականչութիւններով, մնապարծ յոխորտանքներով, անհեթեթ, սանձարձակ պահանջմերով հարկ չկայ ժողովրդին մոլո-

*) Մակար կտթողիկոսի կարգադրութեան և նրա մասին մեր յօդւածներում խօսք կը լինի:

րեցնել նրան հրապուրել և իրան ազգային հիմնարկութիւններից երեսը շուռ տալու գայթակութեան մէջ զորել:

Ո՞չ մի լուրջ հիմունք, ո՞չ մի էական պատճառ չունի մեր լրագրութիւնը՝ հոգևորականի և աշխարհականի շահերի մէջ խարութիւն հակագրութիւն քրքրել ու հնարել. մազի չափ օգուտ չի բերիլ աղգին՝ հոգևորականն ու աշխարհականը միմիանցից հեռացնելու, միմիանցից անջատելու, հարկազգային գաղափար ու միտումները երևան հանել: Ի հակառակ դէպը մենք ինքներս, հակառակ մեր ցանկութեան ու ակնկալութեան, մեր մէջ կղերականութիւն առաջ կը բերենք, այն դասակարգը, որից իբրև թէ խորշում են մեր ժողովրդական հոգևորականութեան հալածողներս :

Իշխան Գալիցինը մեր հոգևորականութեանը արգելում էր մեր բարեգործական, Աստւածածոյ հաստատութիւններին մասնակցելու, նրանց մէջ զորելու: Իշխանը այժմ չը կայ: Սակայն, ինչպէս երևում է, նրա ոգին սաւառնում է լրագրական մեր մի կարգի զրոյների վրայ, որոնք իշխանի հետ համաձայն և համամիտ են երևում, միայն այն զանազանութեամբ, որ կովկասի նախկին կառավարչապետին քաջայայտ էր իւր կարգադրութեան նպատակը, մինչդու մեր լրագրական յօդուածագրերին՝

անյայտ է իրանց վարմունքի նպատակն և
հետևանքը:

Ոչ, պարոններ, ամեն մի ազգային ե-
կեղեցական հաստատութիւններում մենք
պէտք է միասին լինենք, միասին գործենք,
միասին ուրախանանք և միասին լանք,
միասին բանտարկւենք, միասին աքսորւենք
և միասին մեռնենք, նահատակւենք:

Այսպէս են ընթացել մեր նախնիք մեր
ինքնուրոյնութեան օրերում (եթէ միայն
ունեցել ենք). այսպէս են ընթացել մեր
հայրերը՝ ոչ հետու անցեալում, այսպէս մեր
եղբայրներն ու քոյրերը՝ երէկ. այսպէս
պէտք է ընթանանք և մենք այսօր միա-
սին. միշտ միասին, ամէնքս միասին:

II

Մեր հոգևորականութիւնը առաւելա-
պէս քահանայութիւնը՝ լրագրութիւնում
նախատեսմ կշտամբում է գլխաւորա-
պէս իւր տգիտութեանը պատճառաւ։ Եւ
թէպէտ քննադատներ էլ կան, որոնք անար-
գում են բարձրագոյն, մասնագիտական ու-
սում ստացած հոգևորականներին էլ, երկի
նրանց էլ նրանց գիտնականութեանը հա-
մար, — բայց այդ քննադատներն կամ բա-
ցառութիւններ են կազմում և կամ ըովէա-
կան տպաւրութիւններով և կամ անձնա-
կան հաշիւններով գրողներ են լինում։ Ըստ-
հանուր հասարակացը այն է, որ հոգևորա-
կանութիւնը մեղադրում է տգիտութեան

անհամապատասխանաւութեան, անպատ-
րաստականութեան մէջ։

Այս մեղադրանքների տակ մենք ևս
երկու ձեռքով կստորագրենք։ Մի և նոյն
ժամանակ այս ևս գիտենք, որ տգէտին
տգէտ անւանելով, նրան ծաղրելով և ան-
ւանարկելով՝ նրա տգիտութեանը վերջ
տուած չենք լինիլ, նրան գիտնական չենք
դարձնիլ։ Տգէտ հոգևորականի, — և ինչու
մենակ հոգևորականի, անհասկացողութիւ-
նից, միամտութիւնից, յիմարութիւնից ա-
ռաջացած այս ու այն իրողութիւնը՝ լրա-
գրական էջերի նիւթ շինելն, — այն էլ շա-
րունակ, մշտապէս, մի և նոյն է թէ տա-
կառի մէջ ջուր թակել։ Դրանից ոչ մի օ-
գուտ ձեռք չեն բերիլ ոչ տգէտ անձր և ոչ
էլ նրան ըրջապատղները։

Միջանկեալ մի բան պատմեմ։

Կարբեցի Յովհաննէս կաթուղիկոսը ո-
րոշած է եղել մի երիտասարդ վարդապետի
եպիսկոպոս ձեռնադրել։ Մի այլ, բայց ձե-
րունի վարդապետ խնդրում է, որ իրան էլ
ձեռնադրէ, բայց կաթուղիկոսը մերժում է։
Ծերունին վշտացած դիմում է... ինչ էք
կարծում ում, — ուղղակի Նիկողայոս Ա. Կայ-
սեր։ Մի շարք մեծ-մեծ ածականներ և
տիսղոսներ կայսեր շռայելուց յետոյ՝ վար-
դապետը նրա միջնորդութիւնն է խնդրում
«Հոգևոր Տիրոջ» առաջ՝ իրան եպիսկոպո-
սացնելու։ Ձեռնադրութեան օրերը մօտե-
նում են բայց գեռ կայսրից տեղեկութիւն

չկայ: Ծերունին նեղանում է և երկրորդ
հայերէն նամակն է ուղղում կայսեր: Բայց՝
ածականների և տիտղոսների թիւն այս
անգամ բաւականին քչացել են և նամակ-
կագիրը ո. գրքից բերած վկայութիւննե-
րով՝ տքնում է ապացուցանել, որ կայսրը
եթէ պարտական չէր իւր խնդրած միջնոր-
դութիւնն անել, պարտական էր՝ գոնէ իրան
որ և է մի պատաժան տալու: — Բայց այ-
ժըմ, աւելացնում է նամակը, պատաժան
տալն ևս չարժէ. արդէն ուշ է. օրերու-
մը ձեռնադրութիւնը կայանալու է:
Ի վերջոյ համոզուած լինելով, որ եթէ
թագաւոր կայսրը՝ իւր պարտքը չէ կատա-
րել՝ պատճառը անշուշտ շատ զբաղւած
լինեն է, հայ վարդապետը՝ մի վերջին
խնդիրք ևս անում է կայսրից, որ սա
խնդրի «Հոգեոր Տիրոջից» կարգադրելու,
որպէս զի նորոգ ձեռնադրած եպիսկոպոսը՝
տաճարի միւս դասում կանգնի, այլ ոչ
նախկին դասումը՝ ծերունի վարդապետից
բարձր: Ծերունու վերջին խնդիրը կայսրը
յարգել է... վերագարձնելով նրա նամակ-
ները կաթուղիկոսին: Սա էլ, երկի, ձգել է
մինօդի արխիւր, ուր մենք 80 թուին պա-
տահմամբ գտանք ու կարգացինք:

Հայ վարդապետի այս նամակներն,
ի հարկէ, մեզ համար շատ բնորոշ են և
նետարրիր, Բայց բանն այդ չէ, բանն այս
է, որ կայսրը վարդապետի խելքն ու հաս-
կացողութիւնը նրա նամակներիցը չափե-

լով ոչ մի նշանակութիւն և ընթացք չէ
տւել:

Ո՞րքան լաւ բան արած կլինէին մեր
լրագրապետներն, եթէ որ նիկողայոս Կայ-
սեր վեհանձն օրինակին հետևելով՝ հոգևո-
րականութեան առթիւ իրանց ուղղւած
բազմաթիւ նամակների, թղթակցութիւն-
ների մեծագոյն մասը՝ իրանց զամբիւղը
ձգէին: Որովհետև ինչ միտք ունի հազար
ու մի դարձւածքներով և յերիւրածքնե-
րով հրապարակ հանել այն, ինչ որ ամեն-
քին յայտնի է: Էլ մի կողմ մնայ այն, որ
մեր լրագիրների աշխատակիցների, մանա-
ւանդ թղթակիցների մեծ մասը՝ աչքեռի
հիւանդութիւն ունենալով՝ առարկաներն
իրանց իսկական գոյներովն չեն տեսնում,
այլ տարբեր, խառնակ և կրկնակ գոյներով
ու պատկերներով:

Այս խօսքերից չպէտք է հետևացնել,
թէ մենք ուրեմն ցանկանում ենք հոգևո-
րականութիւնը ազատ պահել մամուլի հըս-
կողութիւնից: Ոչ, քաւ լիցի: Ընդհակառա-
կը՝ անհրաժեշտ է խատութեամբ և ամե-
նայն անաշառութեամբ հարւածել այն
հոգևորականին, որ գիտմամբ, գիտակցա-
բար՝ եսական որ և է շարժառիթից թելա-
դրւած՝ այսպէս կամ այսպէս իւր պար-
տականութեան դէմ մեղանչում է: Թող
այդպիսի հոգևորականը իմանայ, որ բացի
իւր անմիջական իշխանաւորից, որին գու-
ցէ նա մոլորեցնելու կամ կաշառելու մէջ

վարպետէ, իւր գլխին կայ և մի այլ իշխանաւոր, մի այլ հակող, պատժող ու վարձատրող—դա մամուլն է, եթէ միայն դա էլ իւր կոչման բարձրութեան վրայ է կանգնած լինում։ Կրկնում ենք մեր խօսքը՝ մեր, թող ներուի ասել, պաշտպանութիւնը այդպիսի հոգևորականներին չէ վերաբերում, ոչ։ Այլ մտաւորապէս և բարոյապէս տնանկներին և սնանկներին, որոնց դատելու և դատապարտելու՝ մենք ոչ հիմունք ունինք և ոչ էլ իրաւունք։ Պատճառը շատ պարզ է։

Հայ հոգևորականը ընտրւում է ժողովրդից Եթէ ընտրուածը՝ իւր կոչման համապատասխան չէ, նշանակում է՝ այդպիսէ և նրան ընտրող ժողովուրդը, ծուխը։ «Ծառն՝ իւր պտղից է ճանաչւում»։ Եւ իրօք՝ մեր ժողովուրդը, ի հարկէ ընդհանուր առմամբ, շատ տգէտ է, անզարգացած, խաւար, նրա մտքի հորիզոնը դեռ նեղ է՝ սահմանափակ։ Մեր ժողովուրդը դեռ չէ հասկացել և ըմբռնել այն գոհարի արժէքը՝ որ իւր նախնիքը իրան ժառանգութիւն են թողել։ Այդ գոհարը, մեր ազգի այդ պարձանքը, նրա ընտրական, ինքնավար սկըրունքն է, նրա ընտրական իրաւունքն է։ Ահա թէ որտեղ պէտք է որոնել և գտնել մեր հոգևորականութեան տղիտութեան արմատը, բունը։

Մեր շուրջը լաւ դիտենք։ Մեր գիւղերից ոչ մէկում՝ ոչ մի փոքր

ինչ զարգացած քահանայ չկայ։ (Իսկ եթէ կայ՝ ընտրւած չէ իսկապէս)։ Եւ ինչպէս կարող ենք ունենալ, քանի որ այդ արժանիքի տէր գիւղացի ընտրողներ չունենք։

Աւելին կասենք՝ այդ արժանիքի տէր քաղաքացի ընտրողներ էլ մենք չունենք։ Այս է ահա պատճառը, որ քաղաքների մեր քահանաներն եթէ մի առաւելութիւն ունեն, դա այն, ամեն մի քաղաքացու յատուկ, բացասական յատկութիւններն են, որոնցից, բարեբաղդաբար, զերծ են և ազատ իրանց գիւղացի կարգակիցները։

Ընդհակառակը՝ այն քաղաքները, որտեղ ընտրող ժողովրդի մէջ՝ թէկուզ աննշան տոկոս զարգացած, բարեխիղճ ծխականներ կան, այդտեղ քահանաները՝ փոքր ի շատ է աչքի ընկնող մարդիկ են լինում։ Սրանցից էլ պերճախօս էլ ինչ փաստ, որ հոգևորականութիւնը բարձրացնելու համար, նախ և առաջ հարկաւոր է ժողովրդին բարձրացնել, նրան կրթել, նրան դաստիարակել, նրա մտքի և սրտի վրայ թանձրացած խաւարը փարատել։ «Լիյս, լիյս, ոչինչ աւելի քան լոյս», բացագանչում էր գերմանացի մեռնող բանաստեղծը։ Գեօթէից առաջ՝ մի և նոյն բացագանչութիւնը արել է հոգևորական հայ բանաստեղծը՝ «և այս ամենայն չարիք, — գրել է եղիշէ վարդապետը, մտանեն ի միտս մարդոյ յանուսումութենէ անտի։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական և տգիտու-

թիւնն՝ ի կատարեալ կենացը»։ Լաւ է կոյր
ողոք, քան կոյր մտոք»։

Միւս անգամ կը տեսնենք՝ թէ ժողովրդի կրթութեան համար մենք ինչ ենք
արել ցարդ։

III

Ժողովրդին կրթելու, նրան լուսաւորելու միջոցներից մէկը՝ դասախոսութիւննէ։ Մեր ինտելիգենտ տարրից ոմանք դասախոսութիւններ կարդացել են և հիմայ էլ կարդում են։ Բայց դա լինում է պատահաբար՝ դէպքի, ըուպէի պահանջին բաւարարութիւն տալու համար։ Բաց ՚ի դրանից դասախոսութիւնները կարդացւում են նահանգական քաղաքներում, առաւելապէս Թիֆլիզում։ Մինչդեռ դասախոսութիւնները նոյնը լինելով ժողովրդի, ևս առաւել մեծահասակների համար՝ ինչ որ դպրոցները փոքրահասակների համար՝ անհրաժեշտ էր, որ նրանցից օգտւէին գաւառական քաղաքների մասնաւորապէս գիւղերի ժողովրդը։ Եւ օգտւէին պարբերաբար, կանոնաւոր կերպով, որոշ սիստեմով և ուղղութիւնով։

Մեր ժողովուրդը կենսունակ ժողովրդ է, շուտ համակերպող, յառաջադիմութեան շուտ ձգտող, շուտ ըմբռնող ու իւրացնող։ Անհրաժեշտ է նրա այդ ընտիր յատկութիւնները զարգացնել, աճեցնել։

Փորձենք մի քանի ժողուցիկ կամ շարժական խմբեր ուղարկել գաւառը՝ երկրա-

գործական, տնտեսական, իրաւական, արհեստագիտական, առողջապահական և այլն նիւթերի մասին դասախոսելու և կը տեսնենք թէ որքան մխիթարար հետեանքի կը հաննենք։ Մենք հաւատացած ենք, որ դաւագի, գիւղի ժողովուրդը դասախոսների վրայ կը թափւի այսպէս՝ ինչպէս ճանձը՝ մեղրի վրայ և ոչխարը աղի վրայ։ «Հունձ բազումք, մշակը՝ սակաւք» պարոններ։

Հոգևորականը պատրաստութիւն չունի դասախոսի պաշտօն ստանձնել։ Եւ եթէ իւր կոչումը ըմբռնել է՝ նա ժողովրդին պիտի քարոզէ, նրան դասախոսէ հոգևոր, կրօնական—բարոյական նիւթերի վրայ։ Շնորհակալութիւն՝ եթէ նա այդ խիստ մեծ պարտքը կատարելու հոգ տանի։ Իսկ մնացած, այսպէս ասած՝ աշխարհիկ նիւթերի մասին դասախոսելն՝ ուղղակի աշխարհականների պարտքն է։ Զէ որ մեր եկեղեցին ժողովրդական եկեղեցի է։ Զէ որ մենք ամենքս հաւասար իրաւունքներ ունինք։ Հապա ինչի հաւասար պարտականութիւններ ևս չունենանք։ Վերջապէս դա, ի՞նչ տգէտ, ի՞նչ յետաղէմ միտք և ցանկութիւն է՝ ամեն բան միմիայն հոգևորականութիւնից ակնկալել։ Եւ փարիսեցաբար ուրիշի զգին և եթ դնել ծանր—ծանր բեռները։

Վերջերումս շատ մօգա է դարձել պահանջելու, որ գիւղական քահանան սովորի, ծանօթութիւն ունենայ և երկրագործութեան և անասնապահութեան և բժշկու-

թեան և փառտաբանութեան հետ և այն, եթէ մի տգէտ ժողովրդի տգէտ քահանան կարող է այդ ամենի հետ փոքր ի շատէ ծանօթութիւն ունենալ՝ շատ լաւ. ով կարող է զրան հակառակել: Բայց մի քահանայ այդ գիտութիւնները սովորի, որպէս զի իւր հօտին ևս սովորացնի, այդ մենք չենք հասկանում: Եւ երբէք չենք ընդունում, որ մի և նոյն հաւատարմութեամբ և մի և նոյն արդիւնաւէտութեամբ կարելի լինի երկու տէրերի ծառայել: Աւելի լաւ չէ աշխարհիկ գիտութիւններից տարրական տեղեկութիւններ ժողովրդի հաղորդելըն թողնել մեր շարժուն դասախոսների վրայ, կամ այդ մասին մի այլ եղանակ մտածել ու գործել:

Դասախոսների շրջիկ խումբ՝ կարելի էր մտածել կազմել առաջ էլ: Բայց մենք չենք արել: Փոյթ չէ: Հիմայ ձեռնարկենք, փորձենք, դրա համար մի բիւրօ կազմենք: Թող նա մի ծրագիր մշակէ, եթէ անհրաժեշտ է, թող կառավարութեանը հաստատել տայ և հրաւիրէ գործողներին ասպարէզ դուրս գալ: Բաւական է, որքան խօսիցինք, գրեցինք, հիմի էլ գործենք, «գիրն սպանանէ և հոգին կեցուցանէ».

Երբ շրջիկ դասախոսների օգուտը, ժողովրդը տեսնի, այնուհետև շուտով կը սպառին մեր էժանագին ժողովրդական գրքերն՝ որոց մի մասը և եթ ցարդ քաղաքներումն է ծախւում: Իսկ գիւղերումը

դեռ ոչ: Եւ դա ոչ այնքան գիւղացու անգրագիտութեան, որքան նրա ճաշակը գաղափար չունենալու պատճառաւ: Եւ սա ընական է: Նոյն իսկ զարգացած մարդը՝ իսկոյն մի գիրք, մի յօդուած վերցնում է կարդալու, երբ նրա հետաքրքիր, օգտակար լինելը՝ ուրիշից լսում է:

Այդ՝ որպէս զի ժողովուրդը կարդայ, նա դեռ պէտք է լսէ: Եւ երբ լսածովը հետաքրքրւեց, անշուշտ կը կարդայ, կարդալ կուտայ, կարդալ կը սովորի, եթէ ինքը չսովորեց, անպատճառ իւր զաւակին սովորեցնել կուտայ: Դուք միմիայն առաջին զարկը տւէք, այնուհետև զարկերակը ինքնիրան կը խփէ:

Աւելորդ է ասելն՝ որ դասախոսներ պիտի լինեն գեղեցիկ սեռի ներկայացուցիչներն ևս յատկապէս իրանց զաւառաբնակ սեռակիցների համար:

Երևակայեցէք ձեզ մի կանանչազարդ դաշտ, մի ծաղկաւէտ սար, որոնց մի կողմում, լանջում, տօնի պատճառաւ, հաւաքւած և ծալապատիկ նստուած են գեղջկուհիք: Առանձին առանձին ամբիոնների վրայից դասախոսում են ինտելլիգէնց հայ տղամարդն ու կինարմատը. որպիսի իգիլիա:

Հապա ձմեռը երբ գիւղացին դաշտային գործերից ազատ է, նոյն դասախոսութիւնները շարունակել կարելի է գիւղական

մեծ-մեծ մաշագներում, մեծամեծ գոմե-
րում, նոյն իսկ եկեղեցիներում:

Դասախոսների կացարանն ու մնունդը
գիւղացին սիրով կը հոգայ: Մնում է ճա-
նապարհածախքի և վարձատրութեան լորն-
դիրը, որոց մասին՝ իւր տեղում՝ մենք
մեր կարծիքը կը յայտնենք:

IV

Ժողովրդի կրթութեան գործօններից
մէկն էլ թատրոնն է: Այս ամենքին յայտ-
նի է: Սակայն մենք կարծում ենք, որ
թատրոնական գործը՝ գաւառում, նա մա-
նաւանդ գիւղերում, առ այժմ անկարելի
է առաջ տանել: Թատրոնը մեր գիւղերի
համար շուայլութիւն և, թերևս, գայթա-
կղութիւն կը լինի: Քինան ջերմտենդի հա-
մար փորձւած դեղն է, բայց շատ կազ-
մուածքներ կան, որ չեն վերցնում: Ուրիշ
բան է՝ եթէ գիւղական կեանքին, գիւղա-
ցու հոգեբանութեանը յարմար ուեպեր-
տուար մենք ունենայինք: Միւս կողմից՝
բաւականին ծախս կը հարկաւորի: Իսկ
մենք՝ հայերս առհասարակ աղքատ ենք,
աղքատ՝ ոչ միայն «հոգւով», այլ և գըր-
պանով:

Սակայն ինչ որ գիւղերի համար շուտ
է, քաղաքների, մանաւանդ մեծ քաղաք-
ների համար ուշ է: Ամօթ և նախատինք
մեզ, մեր հարուստներին, որ մինչ օրս
մենք չունենք հայկական թատրոնական

շինութիւններ գոնէ Թիֆլիսում ու Բագ-
տում:

Մենք մեր հարստների երկրպագունե-
րը չենք:

Ոչ էլ նրանց խունկ ծխել ենք ուզում:
Բայց այն կարդի մարդիկներից ևս չենք,
որ հարստների՝ ազգին մատուցած զոհաբե-
րութիւնները չտեսնելու համար՝ աչքերս
փակենք: Չենք ժխտում, որ մեր մոմոնայի
հայրերը՝ հաւատի հօր նման՝ իրանց մէ-
կուճար իսահակներին չեն զոհում և կամ
«տառապեալ այրի» նման իրանց վերջին
երկու լումաներն չեն, որ ազգին գանձա-
նակ են ձգում: Բայց և այնպէս փաստը
մնում է փաստ: Մեր ազգի մէջ գոյութիւն
ունեցող բարեգործական և կրթական
հաստատութիւնները ամենուրեք, — թէ չնդ-
կաստանում, թէ Պարսկաստանում, թէ
Տաճկաստանում և թէ Ռուսաստանում՝
բացառապէս մենք մեր փաճառականական
հարուստ դասակարգին ենք պարտական:
Չենք ասում թէ՝ նոր սերունդը ձեռքները
ծալած նստել է: Բայց եթէ ժողովրդի կը ը-
թութեանը համար մեր նոր սերունդը մի
բան արել է, նա այդ արել է ի հաշիւ հայ
փաճառականի: Մենք դեռ նրանց փարած
ու ցանած արտերն ենք հնձում, դեռ նը-
րանց ամբարած ցորեններն ենք աղուն ա-
նում ու վայելում: Թող ներւի ասել, որ
որ հայ փաճառականը հայ ազգի կթան
կովս է եղել: Մինչև այսօր՝ շարունակ

մենք միմիւսյն նրան ենք կիթում։ Կիթում, և միւնոյն ժամանակ, նրան աքացում։ Սա մենակ մեր ապերախտութեանը հետևանքը չէ, այլ և, առաւելապէս, մեր անգիտութեանը, մեր անմտութեանը։

Հա, այն էի ուզում ասել։

Հոգու փրկութեան, թէ փառասիրութեան և կամ ժամանակի անդիմաղբելի պահանջի բաւարարութեանը համար էին մեր հարուստները այս ու այն Աստուածահաճոյ բարեգործական կամ կրթական հաստատութիւնը կառուցանում, նրան շատ ու քիչ ապահովացնում, — դա իրանց գործն է։ Բայց նրանք արդեօք երբ պէտք է հասկանան, որ թատրոնը ևս մի կրթական հաստատութիւն է։ Եւ նոյնպէս Աստուածահաճոյ։ Նրան ձեռնարկելը՝ նոյնպէս ժամանակի պահանջ է։ Վերջապէս եթէ փառքի էք ձգուում, զրանից էլ ի՞նչ մեծ փառք, հայկական գեղարուեստի տաճար կառուցանել։ Միթէ ամօթ չէ մեզ համար, որ Թաղիեվ թուրք փաճառականը շատ փառց ՚ի վեր թատրոն ունի շինած, իսկ հայ Թաղիւները գեռ չեն էլ մտածում այս մասին։ Թուրք փաճառականի շինած թատրոնից՝ հակառակ հիմնարկողի ցանկութեանը՝ (ինչպէս և նրա շինած ուսումնարաններից) գժբախտաբար թուրք տարրը չէ կարող օգտել, անընդունակ է։ Մինչդեռ մեր ժողովուրդը թատրոն սիրող է և յաճախող և մեր խեղճ գերասանները ամեն անզամ

կաշուց դուրս են գալիս մի բեմ գտնելու, և չգտնելով ցան ու ցրիւ են գալիս։ Թերեւս ասեն թէ՝ Թաղիեվը վաճառականական հաշուով է թատրոն շինել։ Դիցուք, դուք էլ նոյնպէս վարւեցէք։ Սկզբի տարիներում ձեր ծախսած փողին՝ մի քանի տոկոս էլ պակաս ստացէք։

Պարոններ, «մինչդեռ ժամանակը ձեռներումդ է, բարի գործեցէք», եթէ ոչ մի և նոյն է, ձեր մեռնելուց յետոյ ձեր հարստութիւնը մնալու չէ։ Ձեր ժառանգները ձեր հարստութիւնը՝ չպիտի ուտեն։ Ընդհակառակը ձեր հարստութիւնը՝ ձեր ժառանգներին պիտի ուտէ։ Սրդէն փաստ է, որ հայի հարստութիւնը ընդհանրապէս, երրորդ սերնդին չի համարի։ Իրողութիւն է, այլ ոչ անեկոտ, որ ազգի համար անկելանոց շինող հայ միլիոների որդին՝ հօր շինած անկելանոցում փչեց իւր հոգին։ Եւ այս ու սրա նման օրինակները եզական չեն, մենակ կալկաթայում չէ, որ տեղի են ունեցել։ Բաց ՚ի անշարժ կալուածներից՝ կէս միլիոնից աւելի կանխիկ զրամ ժառանգութիւն ստացող մի հայ երիտասարդ էինք ճանաչում Թիֆլիզում, որ մի քանի տարուց յետոյ՝ իւր հօր նախկին գործակալի մօտ՝ գործակատար ընդունւեցաւ, այն ևս ՚ի պատիւ և յիշատակ իւր հօրը։ Բագւում ևս մի որդի տեսանք, որ հօր թողած կալւածներից տարեկան 80 հազար րուբլի եկամուտ էր ստանում։ Բայց երեք

տարուց յետոյ՝ ինքն էլ մեռաւ, կալւածքն էլ
ձեռքիցը դուրս եկաւ, և այն:

Թող ասենք՝ թէ հայ հարուստը, դըք-
բախտաբար, թատրոնի նշանակութիւնը
տակաւին չէ հասկանում. թող ընդունենք՝
որ նրա կողքին դեռ չեն երևում ինտելի-
վէնտներ, որոնք նրան այդ բանն հասկա-
ցնէին, ինչպէս որ, օրինակ, հանգուցեալ
Եղեանցը՝ Սանասարեանցին դպրոցի նշա-
նակութիւնը հասկացրեց: Բայց հապա որ-
տեղ են ժամանակակից մեր ինտելիգենտ-
ներն, ինժիներներ, ճարտարապետներ, բր-
ժիշկ ու բժշկապետներ, փաստաբաններ,
դրամատների և դրասենեակների կառավա-
րիչներ, առևտրական մեծ ֆիրմանների ներ-
կայացուցիչներ: Զէ որ դրանք՝ թատրոնի
նշանակութիւնը, նրա անհրաժեշտութիւնը
մեզանից լաւ են հասկանում և իմանում:
Եւ չէ որ, միենոյն ժամանակ դրանցից ա-
մենից քիչ ոռօնիկ կամ հատոյթ ունեցողը՝
էլի 5-ից մինչև 10 հազար ըուբլի է ստա-
նում, իսկ 10-ից մինչև 20 հազար ստա-
ցողներն ևս՝ բացառութիւններ չեն կազ-
մում. հարցնում ենք, դրանք ի՞նչու ընկե-
րովի մի հայկական թատրոն չեն կառու-
ցանում: Երբ ընտրութիւններ կան՝ դրանք
հրապարակ են գալիս, ճառում ու ճոռու-
մաբանում, ընտրում, մանաւանդ թէ ըն-
տրովում. Երբ չաղ օժիտ ունեցող հարս-
նացուներ երեան են գալիս՝ դրանք իրանց
փայլուն կոճակներն ու ակադեմիքական

նշանակներն իսկոյն հանդէս են բերում:
Իսկ երբ ժողովրդի կրթութեան, նրա լու-
սաւորութեան համար հարկ է լինում գըր-
պան շարժել, քսակի բերան բաց անել
այն ժամանակ՝ այդ պարոնները՝ հարուստ
վաճառականների գրասենեակներն են վա-
զում, նրանց տների հասցէները ինդրում:
Ամծիթ դրանց նախատինք այնպիսիներին:
Դառնանք հայ դպրոցին:

V.

Միակ հաստատութիւնը, որ պատահա-
կանութեան, դէպքի կամ անհատների առ-
ժամանակեայ գործունէութեան արդիւնք
չի եղել մեզանում, այլ ժողովրդի գիտակ-
ցութեան, նրա ինքնովի, ինքնարեր և մըշ-
տական, բնական, կանոնաւոր գործունէու-
թեան արդիւնք, որին երկնել, ծնել, սնու-
ցել և փայփայել ու մեծացրել է հայ ժո-
ղովրդը իւր ամեն խաւերով,—ի հարկէ
ամեն մէկը իրան վերաբերեալ մասումը,
—դա անշուշտ մեր դպրոցն է, —ուստահա-
յերիս ազգային գործունէութեան գլուխ
գործոցը:

Կովկասի տիրապետութիւնը տակաւին
վուխ չէր բերած տէրութիւնը, որ հայ
եպիսկոպոսը՝ հայ համքարի գլուխն անցած՝
թիֆլիսում առաջին կանոնաւոր դպրոցի
հիմքն ոչ միայն օրհնում, այլև նախ ին-
քը փորում և ապա վետաղը՝ ժողովրդին
էր առաջարկում: Եւ փառք ու պատիւ թէ

այդ բանւոր հովկին և թէ հօտին, որոնք
եկեղեցիներում և փողոցներում, շաբթէ
շաբաթ հանգանակւած գանձանակաղըրամ-
ներով, օրհնութեան և քաջալերութեան
ալէլուեաներով և քրտնաթաթախ աշխա-
տանքով՝ կարճ ժամանակում՝ կրթական
այն հոյակապ հաստատութիւնը կանգնե-
ցին, որ անցեալ տարի, աւաղ, մի քանի
ըոպէում ցրիւ տւեց մարդկային բարբա-
րոսութեան գործին—թնդանօթը:

Մինչդեռ Կովկասեան աշխարհում զին-
ւորների սւիններն էին շողշողում և սրերը
շառաչում. մինչդեռ տէրութիւնը աւագա-
կաբարոյ, խուժուղուժ տարրը սանձահա-
րելու, նրա միմիայն մարմինը անուրների
մէջ կաշկանդելու համար՝ միլիօններ էր
վատնում ապարդիւնօրէն—հայ ժողովուր-
դը՝ իւր լումաներով, իւր գանձանակնե-
րով, իւր մանկակին կրթելու, նրան «պիր
ու ղալամ» սովորեցնելու ջանքերն էր թա-
փում ամենուրեք:

Ժողովրդի բաղդից՝ վրայ է հասնում
Մատթէոս կաթողիկոսը:—Մակար եպիսկո-
պոս, Պետրոս Շանշեանց, Պետրոս Սիմէօ-
նեանց, Գրիգոր Իզմիրեանց և այլք օգուտ
են քաղում «ժողովրդասէր» (հայ եկեղե-
ցու Պետր ուրիշ կերպ չի էլ կարող լինել)
ոգուց՝ և ահա Ներսիսեան և ծխական դըր-
ոցների յայտնի կանոնադրութեան հրա-
տարակումը:

Կրթական դպրոցի ասպարէզը լայնա-

նում, կարդ ու կանոնի տակ է ընկնում:
Ծխական դպրոցների թիւը աճում է:

Եկեղեցական դրամների անբաւարա-
րութիւնը ի նկատի առնելով ինտելիգենտ
երիտասարդութիւնը Թիֆլիսում և գաւառ-
ներում ձեռնարկում են օրիորդաց դպրոց-
ների բացմանը: Եւ տասնեկաւոր տարի-
ներ անընդհատ, կամ փոխ առ փոխ, ձրի
դասեր աւանդում: Այսպէս են առաջ
եկել և ծաղկել մեր մէջ Մարիամեան, Գա-
յիանեան, Սահականուշեան, Եղիսաբեթեան
Հովհանիմեան և այլ դպրոցներն Թիֆլիսում
և գաւառական քաղաքներում:—

Մեր այժմեան ազատամիտ երիտա-
սարդները, որոնք «իրանց բերանը երկըն-
քումն են դրել, իսկ իրանց լեզուն երկըի
աւել շինել» և որոնք առանց վարձի մի
քայլ անդամ չեն ուղում անել, թող լաւ
խմանին, որ իրանց նախորդների հետ ձեռք
ձեռքի տուած ընթացել է և հովեռակա-
նութիւնը: Ամեն մի թեմում եղել է մի
Մակար եպիսկոպոս, մի Սուքիաս և Արիս-
տակէս վարդապետներ և այլք, և ամեն մի
քաղաքում եղել են մի մի տէր Պօղոսներ
ու տէր Մինասներ, որոնք հովանաւորել,
աջակցել և աշխարհականների հետ լծւած՝
առաջ են վարել ժողովրդի կրթութեան
արօրը:

Մեզ համար միանգամայն անհասկա-
նալի է, որ եթէ Խոսրովեան, Քիշմիշեան,
Քաթանեան, Նահապետեան, Սիմէօնեան,

Գրիգորեան, Սուլեան և այլք (Գայիանեան դպրոցի հիմնադիրներն և ամենքն էլ բարձրագոյն ուսում ստացած մարդիկ) հարկաւոր և օգտակար էին համարում՝ իրանցից կազմւած խնամակալութեանը նախագահ ունենալ մի Յարութիւն աւագ քահանայ Սուլանաշեան, այժմեան մեր, մեծ մասմբ, թերուս, դեռ ազգին ոչ մի ծառայութիւն չմատուցած, դեռ միմիայն ճառելու և ճամարտակելու վարժւած երիտասարդներն ազգի համար՝ ինչ միաս են գոնում, եթէ որ դպրոցական հոգաբարձութիւնների կողքին նստած լինի նաև մի հոգևորական, — ի հարկէ արժանաւորը, արժանաւորագոյնը և ժողովի ընտրածը: — Եթէ աշխարհականները առաջ են գնացել, ընականաբար, հոգևորականներն էլ պէտք է որ առաջ գնային: Եւ գնացել են: Միթէ հայ հոգևորականութիւնը, թէ կուսակրօնը և թէ քահանան, այժմ ևս այն է, ինչ որ 20—25 տարի առաջ էր:

Հարցին դառնանք: —

«Վշտալի» Մատթէոս կաթուղիկոսը անակնալ կերպով թէև մեռաւ, բայց նրա դպրոցական կանոնագրութիւնը մնաց: Հիմքը հաստատուն հողի վրայ էր դրած:

Գէորգ Դ. աւելի ոյժ ու կենդանութիւն տւեց ժողովրդի կրթական դործին: Մի և նոյն ժամանակ՝ շինեց և հրդեհուելուց յետոյ վերաշնեց Ս. Էջմիածնի ճեմարանը, — ի դէպ. դարձեալ հայ վաճառա-

կանի կտակած դրամով: Գաբրիէլ վարդ. Այլվազեանը յայտնի ուսումնականի անուն և համբաւ ունէր, բայց Թէոդոսիայում անգործ նստած էր «որպէս Ճնճղուկ միայն ՚ի տանիս»: Որովհետև Խալիբեան դպրոցը փակւած էր և «Մասեաց աղաւնին» դադարած: Գէորգ Դ. նրանից յարմար տեսչացու չէր կարող գտնել: Այլվազեանը թէև հրաւիրւեցաւ, բայց ինքն էլ, կաթուղիկոսն էլ լաւ տեսան, որ «Երկու տէրերի չէ կարելի ծառայել»: Հոգևորական տեսչին փոխարինեց աշխարհականը: Եւ այսպէս մինչև այսօր փոփոխակի և հոգևորական և աշխարհական արժանաւոր անձինք՝ միամին աջաւտել, միասին գործել են:

Վերջապէս Գէորգ Դ. եկ.-ծխ. դպրոցների համար թեմական տեսչութիւնը հաստատեց, որ այնքան կարեոր էր դպրոցական կեանքում տիրած անկերպարանութեանը՝ որքան և իցէ կերպարանք տալու: Մեր անդրանիկ թեմական տեսուչներն եղան՝ Պերճ Պոօշեանց Երևանեան թեմում: Իսկ Ստեփաննոս ա. քահ. տէր Ստեփանեանց Վրաստ. և իմեր. թեմում: Այս արժանաւոր քահանան կազմեց իւր թեմի դպրոցների առաջին ուսուցչական ժողովը: Եւ նրան ընտրող ու հաստատել տւող արժանաւորագոյն Մակար եպիսկոպոսն էր, որ 1873—74 տարնապալից տարին, (մեր դպրոցները վերցնելու հրովարտակը արդէն դուրս էր եկել և տեղ տեղ գործադրւում

էր) հոգաբարձու Նեվերովի թուղթը՝ թեմի դպրոցներն յանձնելու համար՝ մի բնորոշ, սրամիտ պատասխանով Գոգոբերիձէին յետ դարձնելով՝ ինքը գնում էր և անձամբ անձին ուսուցչական ժողովը բաց անում:

Դէորդ Դ. հրամանաւ՝ թեմական տեսուչ Դէորդ Բարխուտդարեանցի նախազանութեամբ Թիֆլիսում 1882-ից բացւած ընդհանուր ուսուցչական ժողովը առիթ բռնած՝ Եանովսկին լուսաւորութեան նախարարին գրեց, թէ հայ դպրոցների գոյութիւնը վասակար է ոչ միայն մանկավարժական, այլ նաև քաղաքական տեսակէտով:

Դպրոցները փակւեցին: Իսկ մեր լրագրութիւնը, որ մինչև այդ՝ յանուն ազատամտութեան՝ էլ կուժ ու կուլայ չէր թողել, որ մեր անմեղ դպրոցների գլխին չը ջարդէր, և այդպիսով յիմարաբար՝ մի կողմնակի ծառայութիւն էր մատուցոնում Եանովսկուն, — այդ ազատամիտ լրագրութիւնը, կրկնում ենք, ձայն, ծպուն չհանեց, այլ միանգամայն լոեց, պապանձւեց: — Բայց նրա լեզուն մի օր էլի յանկարձ բացւեց, երբ սինօղի պրօկուրօրը ուզում էր Մանկունու մնդուկի միջից մի քանի թղթեր հանել և չէր կարողանում, — ահա այդ ժամանակ հայ ազատամիտ մամուլ՝ անմտաբար պրօկուրօրի և Շալիկօֆ նահանգավետի թալակն ընկնելով՝ սկսեց երկինք գետինք իրար խառնել՝ հայ, հառայ, հայ ժողովուրդ, ոտքի ել, Մանկունի եպիս-

կոպոսը... Վանքի մասունքները Պօլիս է փախցնում: Եւ ժողովուրդը, արդարե, ոտքի ելաւ: Մանկունու մնդուկը կալանաւորւեցաւ Երևանում: Առաջնորդարան տարւեցաւ, սինօղի երկու անդամների և Շալիկօֆի ներկայացուցչի ներկայութեամբ բացւեցաւ... Վանքին ոչ մասունքը և ոչ մի ասեղը չգտնեցաւ: Բայց պրօկուրօրի պահանջած թղթերն՝ մնդուկի միջից հանելով՝ դարձեալ հնար չեղաւ: Իսկ ազատամտութիւնը անդադար շարունակում էր իւր արշաւանքը, իւր հայիոյանքը՝ առանց այն էլ Կոմիսարեան կառավարութեանը աւելի, նրանից հալածուած ու տարագրւած Մանկունու դէմ, մինչև որ... Տաճկաց հիւպատոսարանի կնքով Թիֆլիզում կնքւած տաճկահպատակ Մանկունու մնդուկը Պօլիս հասաւ, արտաքին գործոց մինիստրի, կարծեօք Սայիդ փաշայի, դիւանատանը՝ ի ներկայութեան Ռուսաց գետպանի և Հայոց պատրիարքարանի՝ բացւեցաւ և՝ ի պաշտօնէ հրատարակուեցաւ, որ Մանկունի եպիսկոպոսի մնդումը՝ վանքապատկան ոչինչ չի եղել:

Բայց մի և նոյն մամուլը՝ դարձեալ Զաքարիայի վիճակին ենթարկւեցաւ, երբ Գէորգ Դ-ի մահից յետոյ՝ Եանովսկին «Կավказ» թերթի էջերը զարդարում էր իւր պաշտօնական... զրպարտութիւններով, իրը թէ՝ հայ հոգեւորականութիւնը դպրոցների մասին իրան հաշիւ չէ տւել, իբր թէ՝

իւր բոլոր օրինաւոր պահանջները՝ արհամարհել է, անպատասխան է թողել։ Այս, այդ ժամանակ ազատամիտ լրագրութիւնը լուելով լուռմ էր, իսկ «յետաղէմ» «կղերական» Արարատը մի առ մի ցոյց էր տալիս, թէ որ թւականում, որ ամիսում և Նովինչ տեղեկագիր է ուղարկել հոգևորականութիւնը պ. հոգաբարձւին։

Զարմանալի նմանողութեամբ՝ մեր ոչ միայն ազատամիտ աշխարհականներն այդպէս են եղել, այլ ճիշտ այդպէս են եղել և մեր ազատամիտ հոգևորականներն։ Արանք էլ լուել են, խորշել են, խոյս են տւել ճիշտ այն ժամանակներին, երբ, անհրաժեշտ էր ձայն բարձրացնել, բողոքել կամ գոնէ բողոքելու պատրաստող եկեղեցական համագումարին մասնակցելուցը՝ չհրաժարուել, չփախչել, կարծեօք 1884 թւին։—

Ներողութիւն, ընթերցող, ես դարձեալ հարցից շեղւեցայ։ Միւս անգամ Մակար կաթողիկոսի դպրոցական «կանոնք»-ին հետ կը ծանօթանանք։

VI

Ոչ 1874, ոչ էլ 1882 թուականների ուսուցչական ժողովներում մշակուած եկեղ. ծխ. դպրոցների ծրագրերը գեռ ևս հաստատուած չեն մինչև 1883 թուականը, երբ կառավարութիւնը փակեց այդ դպրոցները։

Թեմական գպրոցներին և Մայր Աթոռի ձեմարանին՝ թէպէտ և տակաւին ձեռը

տրւած չէր, սակայն նրանց ծրագրերի հաստատումը ձգձգւում էր։ Այդ առթիւ կառավարութեան հետ ունեցած բանակցութիւնը չվերջացած։ Գէորգ Դ. ՚ի Տէր հանգեաւ։

Նա մահւանից յետոյ Հայոց կաթողիկոսութեան նկատմամբ՝ կառավարութիւնը ձեռնարկեց գործազրել իւր այն նոր քաղաքականութիւնը, որ Գէորգ Դ-ի կենդանութեան վերջին տարիներումն էր մշակել ու պատրաստել։

Մեր ընաբանից դուրս է այդ քաղաքականութեան վրայ կանգ առնել՝ այսքանը միայն կասենք, որ եթէ Գէորգ Դ-ին Մակար արքեալիսկոպոսը չյաջորդէր՝ ամենայն հաւանականութեամբ մեր դպրոցները չեն բացւիլ։ Իսկ եթէ բացւէին էլ՝ կաթողիկոսի իրաւասութեանը տակ չեն լինիլ։ Եւ, ՚ի հարկէ, ոչ էլ հայ ժողովրդի իրաւասութեանը։ Այդ տեսակ երազ, գուցէ, այժմ մարդիկ կարող են տեսնել, որ անշուշտ «՚ի բարին չի կատարիլ»։ Իսկ այն ժամանակումը դա բացարձակ ցնորք կը լինէր։

Դպրոցների բացման հետ՝ Մակար կաթողիկոսը՝ յաջողեցաւ նաև վեց տարի յետածգել տալ վարկի, ցենզի հարցը, որ Դամոկլեան սրի նման կախւած էր մեր ուսուցիչների վկին։

Բայց դպրոցական գործում՝ Մակար կաթողիկոսի և նրա ժամանակակից աշխար-

հական ինտելիգետների՝ զլուխ գործոցը պէտք է համարել նրա «Կանոնք եկեղեցական ծխական ուսումնարանաց Հայոց», որ 1889 թ. հրատարակուեց:

Այս կանոնադրութեամբ՝ միանդամայն վերջ դրւեցաւ այն թոհ և քոհ, —քառային վիճակին, որի մէջ, ուսքից ցվլուխ, ընկղմել էր մեր եկեղ. ծխական դպրոցը իւր թէ ուսումնական, թէ վարչական և թէ անտեսական մասերով:

Իւր գոյութեան օրից սկսեալ՝ այս առաջին անգամն էր, որ մեր եկեղեց. ծխական դպրոցը վերւ ծնւռւմ էր որոշ տիպի և կերպարանքի. ստանում էր ուսման հասաստուն և միանման ծրագիր, դասագրքերի և ուսուցչացուների անւանական ցուցակ, ուսուցիչների վարձատրութեան մինիմալ սահման — կոպար. հոգաբարձութեան պարտքի և իրաւունքի սահման. Նրանց ընտրութեան եղանակի ճշգրտումն, հաշուետուութեան կարգ ու կանոն, թեմակալ Առաջնորդի և հոգաբարձութեան յարաբերութեան և իրաւասութեան որոշումն:

Եւ որովհետեւ Առաջնորդները՝ միքանի յարգելի պատճառներով՝ անձեռնաս էին լինում կանոնադրութամբ իրանց վրայ դրբուած պարտականութիւնները ճշտութեամբ կատարել, — ուստի Մակար կաթողիկոսը փութաց վերականգնել թեմական վերատեսչութիւնը՝ կարգելով այդ պաշտօնի համար միմիայն հոգևորականներ, ինչ-

պէտք որ պահանջւռւմ էր տէրութեան օրէնքը: — Իւր հերթում՝ թեմականներն ու թեմական տեսուչները՝ ենթարկուեցան այսպէս անուանեալ «Մայր Աթոռի ուսումնարանական յանձնաժողովին», որ կազմուած էր հոգևորականներից և աշխարհականներից:

Պէտք է աւելացնենք, որ 1889 թ. կանոնադրութեամբ ժողովի, ծխական համայնքի իրաւունքը խլած չէ: Իրաւաբանական պատասխանատու մարմնի-հոգևորականութեան իրաւունքը միայն ուժեղացրած է: Եւ, — այս մեր խորին համոզմունքըն է, — շատ լաւ է արած: Նախորդ տարիների փորձերը ցոյց են տալիս, որ մեր դպրոցների հոգաբարձուները՝ շնորհիւ իրանց ինտրիվների, իրանց քմահաճութեան, բաւականին զգալի հարուածներ են տուել մեր դպրոցներին: Թէպէտ և, միւս կողմից, դպրոցների հոգաբարձուներին՝ եկեղեցիների երեցիուսանների համեմատութեամբ, փառք ու պատիւ պէտք է համարել:

Անտարակոյս թէ դպրոցներին և թէ եկեղեցիներին հասած վնասների մէջ ժողովը դիմայնքի հաւատարմատարների հետ մեղակից են նաև հոգևորականները, — նըրանք, որոնք պէտք է հակէին, չթոյլ տային զեղծմունքներ գործելու: Բայց այս չէ նըշանակում, որ եթէ մեր դպրոցներն ու եկեղեցիները միմիայն աշխարհականների ձեռքով կառավարւեն, ամեն բան կարգի

կընկնի։ Անցեալը գոնէ դրա հակառակն է վկայում։

Ինչ ասել կուզի, որ օգտուելով ժամանակի պատեհութիւնից, մենք պէտք է փութանք մեր եկեղեցական-ազգային հաստատութիւններում ցանկալի, ժամանակին համապատասխան բարեփոխութիւններ մտցնել, բայց այդ ամենը պիտի անենք միասին։

Ինչպէս որ անմտութիւն և մեր եկեղեցու սկզբունքին հակառակ վնասակար բան կը լինէր՝ մեր դպրոցները միմիայն հոգմուրականութեան յանձնել, նոյնքան անմիտ, վնասակար և հակա-եկեղեցական կը լինէր այդ դպրոցները միմիայն աշխարհականներին յանձնելը։

Եթէ ցարդ, երբ հոգևորական և աշխարհական միասին են գործում, տեղի թէ անտեղի կերպով՝ կղերական սերտովի բառը մատներին փաթաթան արած՝ մարդիկ ուղում են ամեն բան տակն ու վրայ անեն, գիտէք քանի տեսակ ականներ դուրս կը գան մեր մէջ, երբ դպրոցները բացառապէս աշխարհականների ձեռին լինի։

Եւ այդ ականներից իւրաքանչիւրը՝ ամեն մի ներելի և աններելի միջոցներով, ներս կը խծկուի մեր դպրոցի մէջ, իւր ուղղութիւնը, իւր ցանկութիւնը կուզէ անպատճառ փաթաթել դպրոցի շնքին։

Եւ այնուհետեւ... մոռք բարով հայոց եկեղ.-ծխական դպրոցներ...։

1860 թուականներին՝ երբ Ալի փաշան պատրաստում էր տաճկահայերին սահմանադրութիւն տալ և տաճկաց յետադէմ կառավարութիւնը՝ իւր արտաքին գործոց այդ մինիստրին նկատում էր նրա մտադրութեան անտեղութիւնը՝ վնասակարութիւնը պետական շահի տեսակէտից, Ալի փաշան մօտաւորապէս այս էր պատասխանել. «Հայերին տուածս սահմանադրութիւնը նման կը լինի այն քառակուսի անիւկն, որ ինչ կառքի էլ որ լծէք, առաջ չի գնալ»։

Գուցէ մենք սխալում ենք, և Աստւած տայ, որ սխալած լինենք, — բայց մեզ թւում է, որ ուստահայերիս համար էլ նոյն ձեր քառակուսիներ են պատրաստում։ Եւ ինչպէս որ տաճկահայերը՝ իրանց սահմանադրութեամբ առաջ չգնացին, միևնոյն, — եթէ ոչ աւելի վատթար, — վիճակի կարող ենք ենթարկուել և մենք՝ ուստահայերս։

Բայց կը յառաջադիմենք թէ կը յետադիմենք, կ'երջանկանանք թէ կըթշւառանանք, ոտքի կը կանգնենք թէ կը զորւենք, — ի սէր Աստուծոյ, միասին, միշտ միասին լինենք, միասին գործենք։

Որքան էլ որ մարդկանց գաղափարները փոխեն, որքան էլ որ յառաջադիմելու, զարգանալու եղանակ ու միջոցները տարբերին, — ի վերայ այսր ամենայնի կան մտքեր, զարգափարներ, զարգանալու եղանակներ, որոնք թէն անփոփոխ են, բայց յաւիտեանս ճշմարիտ են և անսխալ։

Դրանցից մինն էլ այս հինաւուրց առածն է՝ «զուգութիւնն է մայր բարեաց, անզուգութիւնն՝ ծնող չարեաց»:

Միւս անզամ կասենք թէ ինչ նիւթական միջոցներով կարելի է պահպանել մեր կրթական հաստատութիւնները:

VII

Մեր եկեղ. ծխական դպրոցների ամենամեծ տոկոսը, մօտ 90-ը կազմել են երկշրագործ, արհեստաւոր և մանր վաճառականների զաւակները՝ երկու իսկ սեսից։ Հաւանականաբար այսուհետև էլ՝ նոյնը կը լինի։

Նոյն դպրոցների շրջանաւարտների շատ փոքր տոկոսը, միմիայն մտել է բարձրը դպրոցներ՝ ուսումը շարունակելու համար։ Իսկ մեծ մասը մտել է կեանքի մէջ։ Հաւանականաբար այսուհետև էլ նոյնը կը լինի։

Նշանակում է, որ մեր եկեղ. ծխական դպրոցը հայ մասսայի մէջ սկզբնական, տարրական կրթութիւն տարածող միակ հաստատութիւնն է եղել ցարդ։ Կարծում ենք, որ այսուհետև էլ այդպէս կը լինի։

Այդ դպրոցները մինչև հիմա պահպանուել են՝

ա) Եկեղեցիների նպաստներով.

բ) Աշակերտների մոշակադրամներով և

գ) Կամաւոր նուէրներով։

Դժբախտաբար արդիւնքների այս երեք

տեսակ աղբիւրները ևս՝ այնքան նուազ են եղել, որ նաև չի եղել ցանկալի թուով և երկու իսկ սեռի համար դպրոցներ ունենալ մէն-մի հայարնակ վայրում։

Ցիշողութեամբ, այլ ոչ հաւաստեաւ, մտարերում ենք, որ եկեղ. ծխական դրպրոցների թիւը, ամենայաջող տարիներում 200-ից չէ անցել, իսկ նրանց տարեկան բիւղճէն՝ միլիօն րուբլու էլ չի հասել։

Արդիւնքների նուազութիւնիցն էր, անշուշտ, որ ուսուցիչների ոռնկի մինիմալ քանակն այնքան քիչ էր սահմանուած Մակար կաթուղիկոսի կանոնադրութեամբ։

Եւ բացի դրանից՝ առարկաների մէջ ևս խտրութիւն էր դրած, որ ոչ միայն ինքը ըստ ինքեան անարդարութիւն էր, այլ և մի քանի չարիքի գլխաւոր շարժառիթ։

Եկեղեցիների արդիւնքներն այժմ, այսուեետև եթէ չպակասեն՝ չեն էլ աւելանալ։ Մի և նոյնը կարելի է ասել և թոշակադրամի և կոմաւոր նուէրների համար։

Ուրեմն ի՞նչ անենք, որ մենք նախ և առաջ մեր դպրոցների թիւը շատացնենք և երկրորդ՝ որ նրանցում աւարտող և կեանքի մէջ մտնող մեր տղայ և աղջիկ պատանեակները ոչ միայն գրագէտ լինեն, այլ և ուամկութիւնից, գոեհկութիւնից դուրս եկած՝ փոքր ի շատէ զարգացած մարդիկ ինքնուրյանաբար զարգանալու տրամադրուած, պատրաստուած։

Վերջին նպատակին համենը հեշտ է։

Հարկաւոր է միայն նպատակայարմար ծրագիր մտցնել դպրոցում։ Իսկ առաջին նըպատակի իրազործումը կարող է դժուարութիւններ առաջ բերել։ Թէպէտ և այդ դժուարութիւնները անյաղթելի չեն։

Ժամանակաւոր կանոններից տրամադրութեամբ՝ եթէ եկեղեցւոյ արդիւնքները ծխի պէտքերը լրացնելու հերիք չեն անում, ծխական հոգաբարձութիւնը իրաւունք ունի ծխականների նախընթաց համաձայնութեամբ և որոշմամբ՝ միանուագ կամ մըշտական տուրք նշանակել ծխի վրայ։ Այս տուրքի վճարումը՝ պարտաւորական է դառնում «համաձայնողների համար»։

Մեր վերաբացուած զպրոցների հոգաբարձութիւնները, տեղ տեղ, պինդ կպչելով այդ յօդուածին՝ արդէն մեծամեծ նախահաշիւններ են կազմել։

Սակայն ինչ որ տեսականօրէն դիւրին է երևում, գործնականօրէն այն չէ դուրս գալիս։

Բաց ՚ի այն, որ նոր օրէնքը առհասարակ, որքան էլ որ, ինքնըստինքեան, լաւ լինի, գոնէ սկզբներում լաւ ընդունելութիւն չէ գտնում և այլ ու այլ մեկնութիւնների տեղիք է տալիս, — կայ մի այլ հանգամանք ևս։

Հայ ժողովուրդը ընդհանրապէս՝ դեռ ևս զարգացման այն աստիճանին չէ հասել որ իւր հարևանի օգտին ևս՝ որ և է զոհութիւն անելն իւր բարոյական պարտքն

համարէ։ Նա մանաւանդ որ ծխական տուրքի տուչութիւնը պարտաւուական չէ լինելու, այլ կամաւոր, միմիայն համաձայնութիւն յայտնողների համար։

Իսկ չհամաձայնողներ կը լինեն անշուշտ։ Եւ զրանք իրանք չհամաձայնելով՝ միւսներին կը գայթակղեցնեն, վատ օրինակ կը գանձնական կը մօտիկից ծանօթ է մեր հասարակ ժողովրդի հոգեբանութեանը՝ յուսով ենք որ մեզ հետ կը համաձայնի։

Միւս կողմից հաւանական է, որ ծխական ժողովի որոշմանը համաձայնողների ու ստորագրողների մէջ ևս՝ դուրս գան մարդիկ, որոնք իրանց խոստումը և ստորագրութիւնը դժրեն, չկատարեն յարգելի թէ անյարգելի պատճառաւ, երբեմն սոսկ և մանր պատճառաբանութեամբ։

Այսպիսի դէպքում, — մի իրաւաբան հոգաբարձու մի անգամ ասում էր, — թող հոգաբարձութիւնը դատարանին դիմէ։ Գուցէ այդ կարծիքն ունեն և ուրիշները։ Սակայն մենք գոնէ՝ այդպիսի կարծիքը զբանում ենք թէ անիրագործելի և թէ խիստ վսասակար դպրոցի՝ ինչպէս նիւթական, նոյնպէս և բարոյական շահերի տեսակէտից։

Մեր եկեղեց. ծխակ. դպրոցների պահպանման համար մենք երկու միջոց ենք գնում ընթերցողի առաջ։ Եւ պատրաստ ենք այդ առթիւ լսել ամեն մի կարծիք և քննադատութիւն։ Գուցէ մենք առիթ

տուած կը լինենք այտղիսով, որ ուրիշները աւելի լաւ և օդտակար միջոցներ առաջարկեն:

Մեր միջոցներից տուաջինը այս է՝
Դպրոցների արդիւնքներին ախլին աղբիւները, այն է՝ եկեղեցոյ նպատառ,
թոշակագուամը և կամաւոր նուէրները պահելով համարելով, նուէրների մի այնպիսի եղանակ ևս սահմանել, որ ա) ժողովրդի համար նորութիւն չլինի և որը նու արդէն վճարելիս լինի՝ թէ ոչ կըթութեան անունով, բ) որը սահմանելու իրաւունք և արտօնութիւն արդէն ունի հոգեոր իշխանութիւնը ցայսօր գործող օրէնքի արամագրութեամբ. գ) որ վճարողի համար զրեթէ ոչ մի գժուարութիւն չէ ներկայացնում և դ) որի հանգանակելը՝ աւելի հեշտ կը լինի և առանց որ և է ծախքի, քան ծխական տուրքի հանգանակելը:

Նուէրները սրանք են լինելու.

ա) Ամեն մի եկեղեցում և ամենայն շաբաթ, կիւրակէ և աօն օրերին՝ գանձանակ շրջեցնել. բ) Ամեն մի մկրտութիւնից, նշանից, պսակից և ննշեցեալից կամ կամաւոր կամ նախապէս որոշեալ նուէր ստանալ տպագրեալ անդորրագրերով. գ) Հոգեոր Ատեաններից գործակալներից և ծխական քահանաներից տրուած ծննդեան, պսակման և թաղման վկայագրերից և քաղուածքներից կամաւոր կամ որոշեալ նուէր ստանալ տպագրեալ անդորրագրե-

ըով. դ) Եկեղեցիներում և տներում գործածուելիք մեղրամոմի վաճառումը՝ մասնաւոր մագաղիններում արգելել տալ, — և այդ իրաւունքը օրէնքով հայ եկեղեցուն տրուած է, — և ամեն մի թեմում ևս ամփոփել ծխական հոգաբարձութեան ձեռին:

Չեռքի տակ վիճակագրական հարկաւոր տեղեկութիւններն չունենալով, դժուար է ասել, թէ այդ աղբիւրներից տարեկան որքան գումար կարելի կը լինի հայթհայթել յօգուտ դպրոցի: Բայց անուրանալի է, որ հայթհայթւած գումարը աննշան չի լինի:

Երկրորդ միջոցը, որ աւելի ժամանակակից է և աւելի պատւաբեր մի ժողովրդի համար, այս է. օրէնսդրական ճանապարհով իրաւունք ձեռք բերել, որ ծխական իրաւունք վայելող ամեն մի 21 կամ 25 տարեկան հայ մարդ՝ պարտաւորւի իւրաքանչիւր տարի, յօգուտ ժողովրդի կրթական գործին, վճարել մի որոշ գումար:

Մովսէս մարգարէի սահմանած 2 արծաթեայ սիկղը՝ յօգուտ Երուսաղէմի տաճարին՝ ամենքին յայտնի է: Հոռմի ս. Պետրոսի լուման՝ նոյնպէս յայտնի է: Թողմենք՝ հայերս էլ, մեր կուսաւորչի լուման ունենանք:

Լումայի քանակութիւնը պէտք է որոշվի, հարկաւ, փոխադարձ և համերաշխ խորհրդով՝ վիճակագրական թւանշաններ և ամեն մի վայրում ապրող հայ ժողովրդի

սրբական վիճակը՝ ի նկատի առնելով և
ուսումնասիրելով:

Մեր առաջարկած երկու միջոցներն ևս՝
իբրև հում նիւթ ենք առաջարկում՝ ի մշա-
կումն ձեռնհաս անձանց և հայ լրագրու-
թեան:

Ամեն տեղ և ամեն ժամանակ նկա-
տած է, որ ազգի յառաջադիմութեան
նախանձախնդրութեամբ ոգերուած՝ մե-
զանում մարդիկ անդադար պահանջներ են
անում: Բայց կամ չեն ուզում, կամ,—որ
աւելի հաւանական է,—չեն կարողանում
ցոյց տալ թէ ինչ ու ինչ միջոցներով կա-
րելի է այդ պահանջներին կատարումն
տալ: Չատ և շատ ցանկալի է, որ գէթ այ-
սուհետեւ մեր գրողները, ժողովրդին ղեկա-
վարելու վստահութիւն ստանձնողները՝
այնպիսի հարցերով և պահանջներով զբաղ-
ւէին և ընթերցողներին էլ զբաղեցնէին, որ
ոչ միայն օգտակար է, այլ և հնարաւոր է,
զլուխ գալու բան է: Ի հակառակ դէպու-
ափսոն, շատ ափսոն կը լինի մեր լրագրու-
թեան այսքան մեծ եռանդի և ժամանակի
ապարդինօրէն վատնումը:

ՄԻ ԽՈՆԱՐՀ ԱՌԱՋԱՐԿ

Հայ-թաթարական ընդհարումներից տա-
ռապող մեր ազգակիցների օգտին հաւաք-
ւած զրամական նպաստները՝ իրանց կարի

սակաւութեամբ՝ ծովային կաթիների են
նմանում:

Մի տարուց աւելի է, որ մեր զաւակ-
ները, մեր եղբայրներն ու քոյրերը, նեն-
գամիտ քաղաքականութեան այդ անմեղ
զոհերը,—ի միջի այլ տառապանքների՝
տառապում և հեծեծում են նաև նիւթա-
պէս. սակայն իւր կարծեցեալ քաղաքակըր-
թութեամբ պարծեցող Ծուսահայը՝ մինչ
օրս չկարողացաւ էական, զգալի օգնու-
թիւն հասցնել իւր ազգակցին, որի գլխին
եկած պատուհասի հետևանքներից,—սով,
հիւանդութիւն, աւազակութիւն,—անշուշտ
իրան ևս փոքր կամ մեծ բաժին պիտի
հասնի ժամանակին, որ արդէն եկել հա-
սել է:

— Կարծում էք թէ բոլոր Գալիլիացի-
ներից միմիայն նրանք էին մեղաւոր, որոց
արիւնը Պիղատոսը խառնեց նրանց զոհերի
հետ: Ոչ, ասում եմ ես ձեզ. բայց եթէ
չապաշարէք *), զուք նոյնպէս կը կորչէք:
(Ղուկ. Ժգ. 2—4):

Ճշմարիտ է Ծուսահայ ժողովուրդը
հարուստ չէ, բայց այնքան էլ աղքատ չէ,
որ չկարողանայ զոնէ մէկ միլիօն լրուրի
մատակարարել այդ նպատակի համար:
Մէջտեղում զիտակցութիւն չկայ, —ահա

*.) Ապաշխարել նշանակում է՝ վարքը, բարքը,
հասկացողութեան եղանակը փոխել. գոնէ յունա՝ ան
ըսոփի միտքը այդ է նշանակում ըստ վկայութեան մի
յանարէնագէտի:

թէ ի՞նչ է մեր ամենամեծ դժբաղու-

Եթէ Փրանսիացիք հինգ միլիարդ Փրանք
պատերազմական տուգանքը կարողացան
ժամանակից առաջ հատուցանել Գերմա-
նիային, — դա նրանից չէ, որ Փրանսիացի-
ների գրպանները լիքն էր այդ ժամանակ,
ոչ։ Այլ նրանից, որ Փրանսիացիք քաղա-
քակրթւած, գիտակից ժողովուրդ էին և
այն սոսկալի գումարը ազգովին և այնպի-
սի դիւրին եղանակներով հանգանակեցին,
որ իրանք էլ զգացին, չիմացան։

Բայց... քաղաքակրթութիւնը, գիտակցութիւնը ոչ զօրով կրլինի և ոչ էլ ապրութիւնքով:

Դառնանք մեր կրեսուներին:

Ճեռաց, մատների վրայ կարելի է
համբերել, որ Ռուսաստանում 100-ից աւելի
հարուստ հայեր կան: Դրանցից 30-ը՝
առանձին առանձին վերցրած, այնքան կա-
րողութիւն ունին, որ իւրաքանչիւրի հա-
մար միանուագ 10.000 լուբլի տակն այն-
քան հեշտ է, ինչպէս յետին արհեստաւորի
համար 5 կոպէկ տալի:

Ամ ձեզ 300.000 բուրպիթ:

Մասցեալ 70 հոգին նոյնապիսի հեշտութեամբ կարող են 5000-աման.

Այս էլ ձեզ 350.000 ըուբին:

Սակայն այդ կրեսուները այսօր Եւրոպայում նստած՝ հանգիստ և զւարճալի ժամեր և օրեր են անցկացնում։ Բայց չ

որ դրանք ժամանակին Ռուսաստան պիտի
վերադառնան. հայ ենք՝ պիտի ասեն, հա-
յերի հետ նիստ ու կաց և այլ և այլ յարա-
բերութիւն պիտի սկսեն, հայ եկեղեցի պի-
տի յաճախեն, իրանց բազուկները դէպի
հայի Աստուածը պիտի պարզեն:

— Ի՞նչ երեսով, ի՞նչ իրաւունքով:
Բայց... գուցէ կը եսում երը իրանք էլ
մեղաւոր չեն, որ քաղաքակրթւած ու գի-
տակից չեն:

Ս. Երուսաղէմի վլայ ծանրացած պարտ-
քը թօթափելու համար մեր պատրիարքնե-
րից մինը, — «Ղթայակիր» մականւանեալը՝
մի ժամանակ շղթան վզին ձգած՝ հայ-
բնակ վայրեն էր շըջում:

Այժմ ժողովրդի մտքին և սրտին այն-
քան հասկանալի և մօտիկ է տառապեալ-
ների վիճակի ծանրութիւնը, որ հարկ չկայ
արտաքին նշանով. շղթայով, շարժել նրա
գորովը, բաւական է խօսքով, կենդանի «ի
խորոց սրտի» բղիսած խօսքով՝ անմիջապէս
հայ կրեսուների ականջին հասցնել մեր
թշուառ հայրենակիցների հառաչանաց
ձայնը, սրտի հեծութիւնը, ողբերի աղաղա-
կը» (Նարեկացի): Հարկաւոր է խօսքի մուր-
ճերով նրանց սրտի գուները բաղիսել, նրանց
լեարդերի և երիկամունքների թելերը շար-
ժել, ցնցել:

Հանգուցեալ Խորէն եպիսկոպոս
փառէն մի ամսուայ ընթացքում կարողա-
ցաւ Բագուի կը եսուներից 300.000 ըուբ-

Եւ ստորագրութիւն ստորալ թեմական
դպրանցի համար: Զէ որ հայ թշւառնե-
րի կեանքից և ապագայից աւելի թանգ
բան չի կարող լինել մեզ համար այժմ:
Նոյն եպիսկոպոսը՝ տակաւին վարդա-
պետ՝ Գէորգ Դի յանձնարարութեամբ՝
Ռուսաստան ճանապարհորդելով՝ մի կլո-
րակ ու մեծկակ գումար հայթայթեց ճե-
մարանի օգտին: Եւ ահա ճեմարանի ցա-
վից՝ հազար անգամ մեծ ցաւի մէջ ենք
կանգնել մենք այժմ:

Շատերին յայտնի է թէ՝ նոյն Ստե-
փանէն ինչպէս յաջողեց՝ իրան խնդիրը
մերժող թիֆլիզեցի յայտնի կրեսոսներից
մէկին ձեռաց խելքի բերել և իր առաջար-
կը, խնդիրը խելքին և կատարել տալ:
Իսկ Ստեփանէի գէնքը ոչ այլ ինչ էր,
եթէ ոչ խօսքը, միմիայն և միմիայն խօսքը,
կենդանի խօսքը:

Չենք կարծում, որ Ստեփանէի մահ-
ւամբ՝ մեր հոգևորականների միջից՝ խօ-
սելու, քարոզելու ձիրք և ընդունակութիւն
ունեցող հոգևորականների թիւը սպառե-
ցաւ: Համոզւած ենք, որ մեր թէ վարդա-
պետների և թէ քահանաների մէջ այժմ ևս
կան երիտասարդներ, որոնք նոյն առաքե-
լութիւնը կարող էին անել գէպի հայ ժո-
ղովրդի ամեն մի խաւը, նոյն իսկ գէպի ար-
ևտասհման փախչող մեր հարուստները:
Հարկաւոր է միայն մի այդպիսի կանոնա-
ւոր առաքելութիւն կազմակերպելու լուրջ

կարգադրութիւն անել: Իսկ այդպիսի կար-
գադրութիւն կարող է անել մեր եկեղեցու
Պետր, որի հայրական բարեհայեցողութեան
ենք մատուցանում՝ որդիական վստահու-
թիւնից բղիած մեր այս խոնարհ առա-
ջարկը:

ԸՆԹԱՅԻԿ ՀԱՐՑԵՐ

Կարծեօք բարեյիշատակ Մակար կա-
թուղիկոսիցն է մկուել այն գեղեցիկ սովո-
րութիւնը, որով Մայր Աթոռի ճեմարանի
շրջանաւարտներից երբեմն-երբեմն արտա-
սահման և Բուսաստան են ուղարկում
բարձրագոյն ուսում ստանալու համար: Եւ
եթէ մեր երիտասարդ հոգևորականների
մէջ այսօր աչքի ընկնող լուսամիտ՝ մաս-
նագէտ հոգևորականներ կան, յիշեալ սովո-
րութեան հետևանքն են:

Բացի ճեմարանի սաներից, մենք ունե-
ցել ենք և ունենք բարձրագոյն ուսում
հացած և այնպիսի հոգևորականներ, — թէ
ստացած և պատճենաւոր. որոնք հա-
կուսակրօն և թէ ամուսնաւոր. որոնք հա-
մալսարանը աւարտելուց զինի՝ եկեղեցւոյ
նւիրապետութեանն են նւիրել իրանց:

Բարձրագոյն ուսում ստացած այս եր-
կու կարգի հոգևորականների մէջ մենք ու-
կու կարգի հոգևորականների մէջ մենք ու-
կու կարգի հոգևորականների մէջ մենք ու-
կու կարգի հոգևորականների մէջ մենք ու-

բայց... ոչ մի գիւղատնտես, եթէ միայն
մեր յիշողութիւնը մեզ չի դաւաճանում:

Դրա պատճառը, մեր կարծիքով, այն
է, որ ինչպէս ամեն մի բանում, նոյնպէս
և այս բանում մենք հետեւել ենք ուսւաց
օրինակին: Իսկ գիւղատնտեսութեան ար-
ժեքը, նրա հասարակական և պետական
մեծ նշանակութիւնը Ծուսաստանում դեռ
այսօր էլ լաւ չէ ըմբռնւած: Եւ հէնց այդ
պատճառաւ էլ՝ ինչպէս նրանցում, նոյն-
պէս և մեզանում, գիւղատնտեսութիւնը
ոչ մի շահեկանութիւն, ոչ մի գրաւչու-
թիւն չունի երիտասարդ մարդկանց հա-
մար:

Բայց, կարծես, եկել հասել է ժամա-
նակը, որ Ծուսաստանը իւր ուշն ու ու-
շուշը առաւելապէս դէպի այդ կողմը շուռ
տայ...

Դարձնենք և մենք մեր ուշադրութիւ-
նը մեր ազգի եկեղեցական - վանական
կալւածների վրայ:

Եթէ այդ կալուածները ցարդ ցանկալի
արդիւնք չեն մատակարարել, դրա առա-
ջին և ամենազիստոր պատճառը՝ մեր
երկրի տնտեսական ընդհանուր անկեալ
վիճակն է, ճանապարհների բացակայու-
թիւնն է և այն:

Եւ հէնց ընդհանուր պատճառների վե-
րանալուց կախւած կը լինի նաև մեր ազ-
գային կալւածքների արժեքի և եկամուտի
բարձրանալը կամ չբարձրանալը:

Այնու ամենայնիւ ինչպէս ամեն մի
խելացի կալւածատէր անհատ, նոյնպէս և
մեր վանքերը՝ անշուշտ պիտի ունենան
իրանց սեպհական, մշտական գիւղատնտես-
ները, որոնք կարող են, ի հարկէ, աշխար-
հականներ ևս լինել, ինչպէս որ եղել են
մինչև հիմա և այժմ էլ կան: Թող այսու-
հետեւ ևս լինեն:

Բայց մեր հոգևորականները և մասնա-
ւորապէս մեր կուսակրօնները, բարձրա-
գոյն գպրոց գնալիս՝ ինչու գիւղատնտեսա-
կան մասն ևս չեն ընտրում: Զէ որ գիւ-
ղատնտեսութեամբ պարապող վարդապետ-
ժամանակութիւնների մեջ ունեցել մենք
ժամանակաւ:

Մեր կարծիքով հոգևորական գիւղա-
տնտեսը՝ մեր վանական կալւածքների հա-
մար աւելի արդիւնաւէտ կը լինի, քան
աշխարհականը:

Վերջինս նախ և առաջ մեծ ոռճիկ պի-
տի ստանայ, որպէս զի իր ընտանիքը վան-
քերի կամ գիւղերի անկիւններում ապրե-
լու զոհաբերութիւնը յանձն առնի: Երկ-
որդ աշխարհական գիւղատնտեսը չէ կա-
րորդ՝ աշխարհական գիւղատնտեսը չէ կա-
րորդ, եթէ ոչ միշտ, զոնէ երկար տարիներ,
ըոդ, եթէ ոչ միշտ, զոնէ երկար տարիներ,
եթէ ոչ միշտ, զոնէ երկար տարիներ:
Հոգևորական գիւղատնտեսը, ընդհակա-
ռակը, ա) վանքում կամ գիւղում ապրելը՝
բարձրանալը կամ չբարձրանալը: բ) կամ առանց
իրան զրկանք չի համարիլ.

ոռձկի, կամ սակաւ ոռձկով ծառայելու
պատրաստ կը լինի. գ) եթէ բացառիկ դէպ-
քեր չեղան՝ մինչև իւր մահը կարող է կալ-
ւածքի գլխին մնալ և հետզհետէ բարզաւա-
ճեցնել. դ) ի շնորհու իւր կոչման առիթ և
յարմարութիւն ունի՝ շփւել հարևանների,
համարիւնների հետ և իւր փորձառութիւ-
նիցն ու գիտութիւնից նրանց ևս մասն և
բաժին հանել, նրանց սովորեցնել խօսքով
և գործքով, օրինակով:

Մեր եկեղեցական վանական կալւած-
ների բարգաւաճումից և նրանց արդիւնքի
շատանալուց մեծ, շատ մեծ կախում ունի
և մեր դպրոցների բարգաւաճումից:

Կրթական տուրքի և այլ նորանոր միշտական տուրքի որոշումով մենք պատրաստում շոցների որոշումով մենք պատրաստում ենք մեր դպրոցները բարեփոխել, նրանց տնտեսական վիճակը բարձրացնելու գէմունչն չունենք և մեր նոր սերնդից ոչ պակաս անկեղծութեամբ փափազում ենք, որ այդ ամենը իրագործուի, բայց... շատ և շատ հանգամանքներ, թէ ներքին և թէ արտաքին, 'ի նկատի առնելով՝ մենք խորապէս համոզւած ենք որ, մեր դպրոցները ոչ միայն հոգևորականութեան իրաւասութեանը տակ պէտք է գտնեն, այլ և, ամենամեծ մասամբ, պիտի պահպանեն եկեղեցական և վանական եկամուտներով։ Եւ այդ՝ ոչ թէ ներկայ ուժիմի ժամանակ միմիայն այլ և ամենաապատ և ամենաինքնափար ուժիմի ժամանակ եւ,

Մենք դառնում ենք մեր նոր սերնդին,
մեր չունեցած ազգային ժողովի ինքնարնակիր
երեսփոխաններին և յիշեցնում նրանց ծե-
րունի Տիէրի այն խորհրդաւոր բացագան-
չութիւնը, որ նա 1870-ին արաւ նապա-
լէօն Գ. ծուղակն ընկած՝ Փրանսիական
պարլամենտի՝ «գէպի Բերլին» որոտացող
անդամներին. «Պարոններ, դուք Բերլին չեք
հասնիլ, իսկ պրուսացիք Փարիզ կը հաս-
նեն»:

II

Եկեղեցական-ծխական դպրոցների պահ-
պանման հարկաւոր գումարը ձեռք բերե-
լու համար՝ մեր մամուլի մէջ այլ և այլ
միջոցներ են առաջարկվել։ Մենք ևս մի
քանի միջոցներ առաջարկեցինք։ Սակայն
բացի ծխական դպրոցներից՝ մենք ունենք
նաև թեմական դպրոցներ և մի ճեմարան,
առանց որոց ծխական դպրոցը չէ կարող
գոյութիւն ունենալ և որոնք, սակայն ա-
մենքն էլ, —բացի Ներսիսեան դպրանոցից,
—նիւթական հաստատուն միջոցներից նոյն-
պէս զուրկ են։

պէս զուբկ են:
Ուստի մեզ թւում է թէ՝ զպրոցների
մասին առհասարակ խօսելիս՝ առաջին տե-
ղը պիտի բռնէ Նրանց նիւթական կողմը:

Եթէ ֆիզիքական պատրազ է, և ամառ, անհրաժեշտ է, ըստ Մեծին նապօ-
լէօնի, փող, դրամ և ստակ, մի և նոյնը, և
աւելի մեծ չափով, անհրաժեշտ է՝ մտա-

ւոր և խաւարի դէմ պատերազմելու համար:

Մեր նախընթաց յօդւածներից ընթեր-
ցողը արդէն ծանօթ է մեր դպրոցների նր-
կատմամբ՝ մեր ունեցած հայեցակէտի հետ:
Մենք ասել ենք, հիմա էլ կը կնում և երեք-
կնում ենք, որ մեր ազգային, ժողովրդա-
կան դպրոցները պէտք է գտնուեն հոգևոր
իշխանութեան իրաւասութեան տակ և կա-
ռավարւեն թէ հոգևորականների և թէ աշ-
խարհականների ձեռքով համաձայն մեր
եկեղեցւոյ սկզբունքին, ոգւոյն և ժամանա-
նակիս պահանջներին, որոց մէջ ոչինչ հա-
կագրութիւն մենք չենք գտնում:

Այս հայեցակէտովն էլ է ահա, որ զըպ-
ըոցների նիւթական վիճակի մասին խօսե-
լիս՝ մենք ծանրանում ենք աւելի հոգեսր
հիմնարկութիւնների վրայ և աւելի նրան-
ցից և նրանց հասոյթներից ենք ակնկա-
լում մեր դպրոցների համեմատական ա-
պահովութիւնը:

Մի և նոյն հայեցակէտով՝ այս անգամ
մենք մի այլ դպրոցական հասոյթի վրայ
ենք մատնանիշ լինում:

Յայտնի է, որ մեր եկեղեցւոյ մշտական և կանոնաւոր, հաստատուն հասոյթների մէջ ամենուրեք, գիւղերում և քաղաքներում, առաջին տեղը բանում է մոմավաճառութիւնը։ Առանց թւանշանների էլ կարելի է պնդել, որ հայկական եկեղեցիներում բաւականին մոմ է գործածւում

Աստուածպաշտութեան ժամերին: Քիչ չէ
գործածում նաև տներում՝ կրօնական ծէ-
սերի կատարման ժամանակ:

Բայց... հայկական եկեղեցիներում և
տներում սպառւած մեծաքանակ մոմերի
արդիւնքի խոշոր մասը մտնում է... Որու-
սաստանի մի քանի գործարանների և մեր
երկրի բազմաթիւ վաճառականների գրպա-
նը։ Մեր երեցփոխանները յիշեալ գործա-
րաններից են բերել տալիս եկեղեցիներին
հարկաւորեալ մոմը, իսկ մեր ժողովրդա-
կանները՝ փողոցի վաճառականներից են
գնում ծէսերի կատարման հարկաւորը, և
առաւել ծաղկաւոր, թանկագին մոմեր
պսակի ժամանակ։

Թիֆլիզի թեմը, իսկապէս Թիֆլիզի
եկեղեցիները, այդ կողմից նախանձելի են:
Թէպէտև այստեղի կապալառուն, իր հեր-
թում, չը որ ինքն էլ մի տեսակ ընկեր է
դառնում Ներսիսեան գպրանոցին, որոյ
գանձարանն է մտնում մոմավաճառու-
թեան կապալաղբամը:

թեան կապալովառւ.
Յիշում ենք, որ բարեյիշատակ Մակար
կաթողիկոս՝ վճռել էր ո. Էջմիածնում
մեղրամոմի գործարան կառուցանել և հայ-
եկեղեցիներին այնտեղից մոմ մատակա-
րարել:

բարեկ՝ էջմիածնի շինութիւնների մէջ մոմա-
տուն անունով մի շինութիւն ևս տեսել
ենք, բայց չգիտենք Մակար կաթողիկոսի

շինել տւածն է, թէ նրանցից առաջ էլ է
եղել այդ շինութիւնը։ ինչ և իցէ։
Սրդեօք անակնունելի, յանկարծական
մահը թէ այլ հանգամանքներ խոչընդուռ
հանդիսացան Մակար կաթողիկոսի մտա-
դրութեան իրագործմանը, — չգիտենք։ Բայց
համոգւած ենք, որ այդ մտադրութիւնը
իրագործելը դժւար չէ։ Թերևս զրա հա-
մար այնքան մեծ գումար էլ հարկաւոր
չէ։ Թերևս Մայր Աթոռը, կամ բանիմաց
հայ մարդիկ փոխադարձ խորհրդակցու-
թեամբ կը կարողանային այժմեանից
ի զուկի հանել հանգուցեալ կաթողիկոսի
այս գեղեցիկ և այնքան շահաւէտ
դործը։

Մենք կարող էինք մատնանիշ լինել և
մի քանի այս բաների վրայ, որոնցից նախ
և առաջ մեր ազգային կրթական հիմնար-
կութիւնները՝ շնորհիւ Մայր Աթոռի՝ կարող
էին նիւթական զգալի օգուտ ունենալ և
երկրորդ՝ հայկական Եկեղեցիներից կա-
մաց-կամաց կը վերանայ՝ տձևութիւնը,
խայտաբղէտութիւնը, անձաշակութիւնը,
կոյր և անիմաստ օտարամոլութիւնը, որոց
այնքան սիրահար ենք մենք ամենքս՝ աշ-
խարհական թէ հոգևորական։

Խօսքս մեր եկեղեցիներում գործած-
ւած և պատկերների, զգեստ և անօթների
մասին է, որոնք խմապէս պէտք է, որ
Մայր Աթոռում և կամ միւս վանքերից
մէկում պատրաստելով՝ ի վաճառ հա-

Նւէին ժողովրդական եկեղեցիների և անհատների վրայ:

Բայց զիս համար՝ բացի գրամից, մենք
չունենք նաև պատրաստւած նկարիչներ և
արհեստագէտներ, ուստի դրանց մասին
չարժէ երկարաբանել։ Այսքանս միայն կա-
սենք, որ մենք նոր բան չենք առաջար-
կում, այլ այն՝ ինչ որ ճնումը մեր վան-
քերն ունեցել են։ Օրինակի համար՝ Տաթևի
վանքում մի ժամանակ մի խումբ կունա-
կրօններ եկեղեցական պատկերահանու-
թեամբ էին զբաղուած միշտ, մինչդեռ մի
այլ խումբ գրականութեամբ և այլն։

ՄԵՐ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ... ՅԵՏԱԴԻ-
ՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա.
Ոուսական լայնածաւալ պետութեան
140 միլիօն ժողովրդի հանդէպաշտակըր-
թութեան, լուսաւորման արև է ծագում:
Եյդ վիթխարի ազգաբնակութեան մէկ
չնչին մասն ենք կազմում մենք—Ծուսա-
հայերս:

Հայերս: Արդ՝ մենք ևս, իբրև մի առանձին ազգ,
մի ժողովուրդ՝ ապագայ ունենալու ենք
Ուռաստանում: Եւ եթէ ունենալու ենք՝
ինչ տեսակ ապագայ է լինելու. արդեօք
յառաջադիմական թէ, գուցէ, յետադիմա-
կան: Ուռաստանում ծագող արկը ար-

գեօք մեղ ևս պիտի լուսաւորէ, ջեռուցա-
նէ ինքնուրոյնօրէն աճելու և ուռաձանտ-
նալու համար, թէ, գուցէ, կուրացնէ, խան-
ձէ, այրէ: Որուսաստանում եռ եկող, պըճ-
պըճացող ծովի ահեղ ալիքները՝ մեր փոք-
րիկ բուրաստանի կողքովս արդեօք պիտի
սահին, անցնին, թէ կաշելով նրան ջարդ
ու փշուր անեն, հողի հետ հաւասարա-
ցնեն:

6

Բոյսի աճման և զարգացման համար՝
լոկ լոյսն ու ջերմութիւնը բաւական չեն,
զուգընթացաբար հարկաւոր է նաև պա-
րարտ հող, խոնաւութիւն, այսինքն այն
անհրաժեշտ պայմաններն, առանց որոց
արեի դրական յատկութիւններն՝ բացասա-
կանի կը վերածւին. Այսպէս էլ՝ մի ժողո-
վըրդի արւած կամ ձեռք բերած իրա-
ւունքներն ու արտօնութիւնները՝ դրակա-
նի փոխանակ անշուշտ բացասական հե-
տևանքներ կարտադրեն, եթէ որ այդ ժո-
ղովուրդը նախապատրաստած, տրամա-
դրած չէ իւր ստացած իրաւունքներից
օգտուելու, նրանց ըմբոննելու և իրացնելու
համար.

Ունի՞նք արդեօք Ռուսահայերա՝ մեր
ինքնուրոյնութիւնը չկորցնելու և նրա
դարգացնելու համար՝ պատշաճաւոր նա-
խապատրաստութիւն, տրամադրութիւն.
այդ առթիւ՝ մենք յառաջադիմել ենք ար-

Դեօք թէ յետադիմել, —ահա մի հարց, և
ըստ իս, մի շատ կարեոր հարց, որի պա-
տասխանն եկ, ընթերցագ, որոնենք մեր
կեանքի և իրականութեան մէջ:

q

Ինքնուրոյնութիւնից զգրկւելու և ա-
նարդել կերպով նրան զարգացնելու հա-
մար՝ նախ և առաջ պէտք է, որ մի ազգ,
մի ժողովուրդ ամփոփւած լինի մի վայ-
րում:

Այդ վայրը կարող է լինել և տիրապետող պետութեան երկրից թէև անբաժան, բայց առանձին, յասուկ մի մասը՝ ինչպէս են, զոր օրինակ, Վրաստանը, Ֆինլանդիան և Լեհաստանը մեզանում:

մէկ: Վրայ երկրորդը՝ մեր այս բաժան-բաժան կացութեան մէջ ևս՝ յիշեալ երեք պետութիւնների երկրում՝ մենք ոչ մի առանձին, յատուկ վայր չունինք, որ տեղի աղքարնակութեան գոնէ ամենամեծ տոկուր կառավագիր:

Քազմէինք։ Քառրդ դար առաջ, Զշմարիս է, Տաճ-
կաստանում ճայաշատ մի քանի վիլայէթ-
ներ կային, բայց այժմ գրանք ևս գատար-
կւած են և ճետպհետէ գատարկւում են։

Պատճառ: — Պատճառը՝ նախ և առաջ
նենդ քաղաքականութիւնը և երկրորդ՝ մեր
ամենախայտառակ, ամօթալի տհասութիւ-
նը առհասարակ՝ քաղաքական խնդիրնե-
րում, որով միշտ և հանապազ գործիք ու
խաղալիք ենք լինում մեղանից խելօքների
ձեռին: Ինչ և իցէ:

Մի և նոյն երեսյթը նկատում է Ռու-
սաստանում, կովկասում ևս: Այստեղ էլ
որովհետև հայաշատ նահանգներն՝ տիրող
տարրի հետ աննկատելի կերպով ձուլե-
լու հակամտութիւն ցոյց տվին, ինչպէս
որ վերջին տարիներում ծրագրւած էր,
ուստի և քաղաքականութիւնը՝ այդ նա-
հանգներում ևս հայ տարրի քանակը՝ մեղ-
մօրէն խօսելով՝ նօսրացնում է:

Գալով պարսկահայերին՝ նրանց դրու-
թիւնը հօ ափ-աշկարայ է, ամենքին յայտ-
նի: Եւ եթէ չինի պարսիկ կառավարու-
թեան քաղաքական գիտակցութեան հետ՝
նաև որոշ չափով նրա մարդասիրութիւնը,
պարսկահայերը մի ժամուայ նախաճաշիկ
կարող են լինել պարսիկ խուժանի համար:
Եւ ի՞նչ գրաւական, ի՞նչ երաշխաւորու-
թիւն կայ, որ մի դժբաղդ օր այդպէս էլ
չինի, քանի որ պարսիկ կառավարութիւնը
ինքը, դժբաղդաբար, թոյլ է և շրջապա-
տւած է հզօր հարիաններով, որոց քաղա-
քական բառարաններում՝ մարդասիրու-
թիւն, խիզճ, ամօթ և այլ այսպիսի բառե-
րն ոչ գոյութիւն ունեցել են և ոչ էլ ունին:

Այսպէս ահա՝ հայերս մեր ինքնուրոյ-
նութիւնը պահելու, զարգացնելու ամենա-
զլիսաւոր միջոցներից մէկից, ինչի՞ ոչ հէնց
ամենազլիսաւորից, զրկւած ենք եղել, զուրկ
ենք և հետզհետէ էլ զրկւում ենք ամե-
նուրեք:

Եւ ուրեմն այդ կողմից միսիթարական
մենք ոչինչ չունենք: Եւ մի շատ խոշոր,
շատ զգալի յառաջադիմութիւն ենք գոր-
ծել... յետադիմութեան մէջ:

Բայց շարիքը դրանով չէ վերջանում:

Դ.

Մի քաղաքամստես ասել է՝ թէպէտ և
աշխարհը կառավարողը թւերը չեն, սակայն
թւերը ցոյց են տալիս, թէ աշխարհը ինչ-
պէս է կառավարւում:

Երկրագնդիս վրայ ապրող հայերի ճիշտ
թիւը ես չգիտեմ: Եւ կարծեմ ոչ ոք Ճ-
գիտէ:

Թողնենք երկրագունդը:
Ինձ թւում է, որ Տաճկա-հայերի,
Պարսկա-հայերի, և նոյն իսկ Ռուսա-հայե-
րի ճիշտ թիւն ևս մենք չգիտենք:

Մենք ունենք մեր Սինօղի, մեր Պա-
րիսիարքարանների, Առաջնորդարանների
(Պարսկ. և Հնդ.), եւրոպական դեսպանա-
տների պաշտօնական և անպաշտօն աեղե-
տների որացոյցների թւերն. բայց նը-
կազերի և օրացոյցների թւերն.

բանց ճշտութիւնը ոչ ոք կարող չէ երաշ-
խաւորել։ Սակայն բանը գրանում չէ,

b.

Ենթապիենք, որ այդ թւերը ճիշտ են և
ստոյգ:—Ընդունենք, որ հայերի թիւը, որ-
քան էք ուզում, թող ասենք 4, 5, 6 մի-
լիօն է:

Բայց առնելով ի նկատի, որ այդ մի-
լիօնաւոր բազմութիւնը ցաք ու ցըիւ է
եկել ամեն տեղ և ուշ կամ շուտ հայու-
թեան համար նրա կէսը պիտի կորչի, ուս-
տի վերցնենք միայն հայկական ամենամեծ
հատածները Ռուսիայում, Տաճկաստանում
և Պարսկաստանում:

Ենթադրենք, որ գլանց թիւն է 3, 4
միջիօն:

Բայց որովհետեւ ամեն մի հատւած ապ-
րում և գործում է անկախ, ինքնուրոյն և
միանալու, միասին գործելու համար հնա-
րաւորութիւն չունի, — նշանակում է այդ
հատւածների գոյութիւնը՝ ընդհանրութեան
համար՝ ոչ մի օգուտ չունի։ Նրանք կարող
են միմեանց օգնել նիւթապէս և բարոյա-
պէս, բայց ազգայնութեան տեսակից՝ գործ-
նական, դրական ոչ մի օգուտ չեն կարող
հասցնել հարկաւոր դէպքում։

Նացիոնալ նորմա 2. Առաջարկ զետէ

Արովինետև ամեն մի հատւած՝ տռաւել
կամ նւազ չափով՝ ենթարկում է տիրող
կառավարութեան ազդեցութեանը, ուստի
այդ հատուածները երբեմն այնպիսի գոր-
ծունէութիւնների են ձեռնարկում, որ ուղ-
ղակի ինքնասպանութեան է տանում ի-
րանց:

Երբեմն էլ պատահում է, որ մի հատւածին տիրապետող տէրութիւնը՝ նրանգործիք է շինում մի այլ հատւածը տապալելու համար:—Կամ նրա միջոցաւ նրան տիրողի վրայ՝ ինքը տէր դառնալու համար: Եւ այլ այսպիսի հարիւրաւոր դիւանագիտական, քաղաքագիտական խաղեր, որոնք դարերից ի վեր կրկնւել են և դեռ կրկնւում են մեր գլխին ամենայն օր և ամենայն տեղ:

իսկ մենք դեռ զլլի չենք ընկել, մեր
գրութիւնը և մեզ դեռ չենք ճանաչել:—Եւ
թիթեռնիկի նման որտեղ որ մի լոյս, լու-
սոյ նշոյլ տեսանք, իսկոյն վրայ ենք թափ-
ւում և... վերջ ի վերջոյ, ի հարկէ, այս-
ում մեռնում:

—
—
—

Կարող են առարկողներ լինել, որ մեր
ոյժից, մեր կարողութիւնից, մեր ըմբռնու-
մից բարձր եղած ասպարէզներում եթէ

մենք սխալում, մինչև անզամ մեղանչում
ենք, դա մեզ ներելի է:

Համաձայն եմ: Գիտեմ և ընդունում
եմ, որ մեզ նման մի անզօր տկար և ցը-
րուած ազգի հանդէպ՝ երբեմն քաղաքակա-
նութիւնը այնպիսի խնդիրներ է զնում,
որոնք մեզ համար մի մի ֆօրս մաժօրներ
են, որոց դիմադրել չենք կարող: Բայց իմ
խօսքս այդպիսի երեսյթների մասին չէ,
այլ այն երեսյթների, որոնցից մենք կարող
ենք խուսափել, որոց ազգեցութեանը մենք
կարող ենք չենթարկուել: Բայց թէ են-
թարկում ենք և թէ չենք խուսա-
փում:

Ի վերայ այսր ամենայնի ընդունում
եմ, որ արտաքին հարցերի վերաբերմամբ՝
մենք յաճախ ենթակայ ենք փորձութեան,
անդիմադրելի հանզամանքների, ուստի և
այդ կողմից աւելի կարեկցութեան ենք
արժանի, քան յանդիմանութեան, կշամբ-
ման:

Իսկ ի՞նչ անուն տանք մեզ՝ երբ մեր
ներքին, առ օրեայ խնդիրներում, մեր առ-
տնին կենցաղավարութիւնում այնպիսի
դիրք ենք բոնում, այնպիսի գործողու-
թիւնների ենք ձեռնարկում, որոցմով ուղ-
ղակի դերեզման ենք փորում մեզ համար:
Փաստեր էք ուղում, համեցէք, որքան
կամենաք:

Այս կողմէն կամ ամուսնութիւնից
խուսափում է: Դա նրա կողմից, ի հարկէ,
լոկ մի կապրիզ, քմահամոցյք չէ, այլ դա,
մեծ մասամբ, հետեւանք է տնտեսական և
ընկերվարկան պայմանների: Բայց դրա-
նով իրողութիւնը չէ փոխւում, իսկ այդ
իրողութիւնը գալիս է հաստատելու, որ
ժողովրդի աճեցողութիւնը՝ ենթակայ է
ամենափանգաւոր վտանգի: Ուրեմն այս
կէտում ևս՝ յետագիմութիւն:

Թ.

Նոր օրէնքների արամադրութեամբ՝
դաւանափոխութիւնը, ինչպէս յայտնի է,
շատ դիւրացաւ: Ամենալաւ դաւանանքը,
կըօնը, չենք ժխտում, խղճի ազատութիւնն
է: Բայց, ասացէք խնդիրն, միթէ խղճի
ազատութեան համար է, որ, օրինակի հա-
մար, Բագուի նման քաղաքում (գուցէ և
միւսներում) օտարազգի աղջկերք և այրի
կնանիք՝ մեր եկեղեցւոյ գիրկն են գալիս
մտնում անզաղար:

Ի հարկէ ո՞չ:

Այդ օրիորդները և այրիները՝ ձեփ հա-
մար հայանում են, որպէս զի հայերի հետ
պսակւին: Եւ մեր երիտասարդները (թէ
ինտելիգենտները և թէ վաճառական ու
արհեստաւորները՝ անխոտիր) նրանց հետ ոչ
միայն պսակւում են, այլ և պարծենում,

ազգի վրայ դեռ մուննաթ էլ են անում,
որ նրա թիւը՝ մի օտարականով աւելա-
ցրին։ Իսկ գալով այն բանին, որ օտար-
ազգի մօրից ծնած զաւակը, նրա հոգևով
էլ կը մեծանայ, որ օտարազգի կին տուն
բերելով՝ օտարազգի զոքանչի և աներոջ,
խնամիի և ազգականի ազգեցութիւնը հայ
ընտանիքում հետզհետէ կը զօրանայ, որ
որ մեղ նման համակերպող, թեթևոմիտ
պիտով առանուվրայ կը լինի, — այս ամենը
մեր նոր սերնդի համար արժէք, նշանա-
կութիւն չունի։

Այս մէկ։ — Վրայ երկրորդը՝ երբէք չենք
ուզում ի նկատի առնել, որ այս գրու-
թիւնը, վերջ՝ ի վերջոյ, հայ օրիորդին և
հայ այրոյն կը տանի և անդնդի զլիսին կը
հասցնի։ Եւ մի գժրազդ օր մենք մեղ կը
դանենք մի կատարեալ այլասեռման մէջ։
Նեղ ազգասիրութիւնը, ազգամոլու-
թիւնը կամ կենցազավարութեան տպիտու-
խոսելու, ոչ, քաւ լինի։ Այլ յետադիմու-
թեան մէջ մեր գործած մի նոր յառաջա-
ռիմութիւնը երևան հանելու տիսուր պար-
ականութիւնը։

Ժ.

Չնայած մեր հարուստ վաճառական-
ների այս և այն, մեծ ու փոքր պակասու-
թիւններին, նրանք ահազին ծառայութիւն

են մատուցել մեր ազգային ինքնուրոյնու-
թեան գործին։ — Բայց արդեօք նկատում
էք, որ վաճառականութիւնը հայի ձեռքից
դուրս է գալիս։ Արդիւնաբերական մեծ
առևտուր ունեցող հայերն ամեն տեղ ա-
րագ-արագ տեղի են տալիս (օրինակի հա-
մար Բագւում) ոչ միայն եւրոպացու, ոչ
միայն հրէի, այլ նաև և... թուրքի, թաթարի
առաջ։

— Պատճառ։ — Ինձ այստեղ հետաքրք-
րողը՝ պատճառը չէ, ընթերցող։ Այլ այս
կէտում ևս՝ մեր կատարեալ յետադիմական
երևոյթի արձանագրելին է միմիայն։

Ի.

Հայ գիւղացին... նա առաջ մի կտոր
տափի, հող ունէր, որ նրան մի քիչ ցորեն
գարի էր տաղիս, խաղող հասցնում, ար-
մտիք բուացնում։ Այսպիսով հայ գիւղա-
ցին ապրում էր և ապրեցնում էր իւր ըն-
տանիքը։

Ճշմարիտ է՝ նրա ապրուստը ոսկի չէր,
ոչ էլ արծաթ, այլ երկաթ, գուցէ և պող-
պատ, բայց գոնէ գիւղացու հոգին՝ խաղաղ
էր, սիրալ հանգիստ, միտքը՝ անգորը, պա-
տիւր, արուոը՝ իրան տեղը։ — Իսկ այժմ...
Այժմ ամենքդ էլ տեսնում էք, ես էլ ինչ
խօսեմ։

Անշուշտ առարկողներ կը լինեն թէ
այս ամենը ժամանակաւոր երևոյթներ են,
թէ դրանք անցողական ընջանի ընական,

անխուսափելի հետևանքներ են և այն. համաձայն եմ, ընդունում եմ: Բայց անցողական շրջանի ընական և անխուսափելի հետևանքը կը լինի և այն, որ, օրինակի համար, մի մարդ իւր կողքին բորբոքւած բոցը տեսնում է և չհեռանալով՝ ինքն էլ բոցակիզում է: Մին ուրիշը՝ իւր փոքրիկ նաւակը դիտմամբ՝ կատաղած ծովի ծովացեալ կոհակների մէջն է նետում, որպէս զի նրանց ընկճէ, յաղթահարէ և այլն:

Լ.

Որպէս զի մարդիկ բացարձակ յոռետեսութեան մէջ ինձ չմեղադրեն, որպէս զի միմիայն մեր յետադիմական գործերովը և եթ նրանց սիրուր պղտորած չլինեմ, ինձ ստիպւած եմ գտնում անուշադիր չժողնել այն, յիրաւի, մեծ տիտանական յառաջադիմութիւնը, որ վերջին 7—8 ամսւայ մէջ գործեց մեղանում... լրագրութիւնը:

Համբենք, թուենք միթէ մեր նոր լրագիրների անուններն ու տեսակները:
Հարկ չկայ, մի և նոյն է՝ ճիշտ թւին չենք կարող համարել, վասն զի մինչև տողերիս դուրս գալը՝ ով զիտէ թէ քանի նոր լրագիրներ էլ են դուրս գալու:

Հարկ չկայ նմանապէս այդ լրագիրների ուղղութեան և իրանց ընթերցողների մտքի և սրտի վրայ գործած բարերար աղդեցութեան վրայ կանգ առնել: Բաւական

է, եթէ ասենք, որ ի շնորհս մեր այս արտակարգ յառաջադիմութեան այսուհետև:

ա) Հայ ընթերցողներ այլ ևս չեն լինիլ, որովհետև 21 տարին լրացած ամեն մի հայ՝ կամ արդէն խմբագիր է և գրող և կամ շուտով կը լինի:

բ) Հայ ուսանողներ էլ չեն լինիլ, որով 21 տարին լրացրած ամեն մի հայ՝ արդէն ուսած պրծած կը լինի:

գ) Մասնագիտական ամսագիր, կամ լրագիր, կամ գրքոյկ հրատարակելու կալպագիր, կամ գրքոյկ հրատարակելու կալպագիր, էլ չի լինիլ, որովհետև 21 տարին լրացրած ամեն մի հայ մարդ էլ արդէն քաջացածոթ է և առանց գժուարութեան վըճում է՝ քաղաքական, դիւանագիտական, գիտական, կրօնական-բարոյական, տնտեսական և ընկերավարական ամեն տեսակ հարցերն ու թեզիսները:

Խ.

Չմոռանամ յիշել՝ վերջին տարիներում մեր գործած և մի այլ մեծ յառաջացը կուսակցութիւնների կաղմակերպումը:

Այդ կուսակցութիւնների մասին ևս մենք չենք խօսիլ, այլ անկեղծ սրտով նրանց համար այն բարեմաղթութիւնն ենք դանում, ինչ որ Պօղոս առաքեալը, մի ժամանում, ինչ որ Պօղոս առաքեալը, մի ժամանակ, Գաղատացիներին էլ անում (Վլ. 15). «Եւպա եթէ զմիմեանս խածատիե.

ցիք և ուտիցէք, զգոյշ լերուք, ի միմեանց
սատակիցիք»:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Ա.

Մինչև հիմայ հայ ժողովուրդը ընտ-
րում էր իւր եկեղեցւոյ երեցփոխանին,
իւր դպրոցի հոգաբարձուներին և իւր ծխա-
կան քահանային:

Այսուհետև նա ընտրելու է, բաց ՚ի վե-
րոյիշեալ պաշտօնեաներից, նաև իւր ըր-
շանի գործակալին, իւր թեմի Առաջնորդին,
նրա փոխանորդին կամ փոխանորդներին:
Ընտրելու է նաև պատուիրակներ, թեմա-
կան և կենդրոնական ժողովների անդամներ
և այլն:

Այսպիսով ընտրութիւնը դառնալու է
մեր ժողովրդի համար՝ մի պարբերական,
անխուսափելի զբաղմունք, մի, այսպէս ա-
ռած, ազգային անհրաժեշտ գործունէու-
թիւն:

Բ.

Սահմանադրական, ինքնավար սկզբուն-
քին և կեանքին անծանօթ և անսովոր
մարդկանց համար՝ մեր այս դրութիւնը
տարօրինակ, նոյն իսկ ծիծաղաշարժ է.
թւում: Սակայն, փառք Աստուծոյ, որ մեր
մէջ այդպիսի անհատներ չկան: Եւ եթէ
կան էր՝ բացառութիւններ են կազմում:

Ըսդհանուր հայ ժողովրդին, նրա առանձին
համայնքներին՝ ընտրական սկզբունքը՝ յա-
տուկ է, սովորական և հաճելի: Այսպէս որ
մենք, ամենայն իրաւամբ, կարող ենք,
այդ առթիւ ևս, պարծենալ մեր հարևան-
ների և տիրապետողների առաջ:

Գ.

Պարծենալ պարծենանք, բայց մի և
նոյն ժամանակ չմոռանանք, որ ամենա-
լաւ, ամենաօգտակար սկզբունքն անգամ
ապարդին, մինչև անգամ վնասաբեր կը
լինի մի ժողովրդի, մանաւանդ մեր վիճա-
կում եղող մի ժողովրդի համար, եթէ որ
նա չգիտէ գործադրել նրան, չգիտէ օգտւել
նրանից:

Զէնքը, սուրը ինքնապաշտպանութեան
ամենալաւ գործիքն է, բայց անվտրժի,
անգիտակցի ձեռքում նա ինքեասպանու-
թեան գործիք է դառնում:

Հետևաբար՝ ինչպէս ամեն մի բանում,
նոյնպէս և ընտրելում, ընտրութիւնները
կայացնելում՝ անհրաժեշտ է, որ ընտրովը
կիտակցութիւն ունենայ զիտակցաբար վե-
րաբերութիւն:

Դ.

«Ամենքս միասին» մեր մի շարք յօ-
դւածներում մենք ասել ենք, որ մեր ժո-
ղովրդի կատարած ընտրութիւնները, գրե-
թէ ամեն տեղ, անյաշող են եղել և շատ
կամ սակաւ ցաւալի արդիւնքներ են ար-
կամ սակաւ ցաւալի արդիւնքներ:

տաղըել՝ անդադար աղզին տալով, ամենամեծ մասամբ, իրանց կոչման և պաշտօնին անհամապատասխան քահանաներ, տղէտ, հակառակասէր, անձնասէր հոգաբարձուներ և, — թող ուղղակի ասենք, — գող ու աւազակ երեցփոխաններ*):

Գոնէ այսպէս է եղել ցարդ, մինչև այսր: — թէ ինչպէս կը լինի վաղը, այսունետեւ, դժւար է մի հաստատ եղրակացութեան գալ ձեռաց: Միայն թէ ամեն կերպ պէտք է աշխատել, որ գոնէ այսունետեւ առաջւան նման չլինի, որ ժողովրդի մէջ ընտրական գիտակցութիւն զարթի ու զարդանայ:

Անյաջող, անպէտք քահանաների, երեցթեամբ՝ ցարդ տուժում էին մեր առանձին դպրոցները, եկեղեցիները և ծիսերը: Զարիքը՝ մասնական էր, դժբաղդութիւնը՝ տեղական: Իսկ այսունետեւ տուժողը կը լինեն ամբողջ թեմեր, ամբողջ ազգը, իւր ամբողջական շահերով: Զարիքը կը լինեն անայ, դժբաղդութիւնը կը դառնայ ազգայնական և սուսահայը՝ կանգնած կը լինի հարցի հանդէպ:

Ե.

Մեր եկեղեցական և դպրոցական պաշտօնեաների՝ իրանց պաշտօնի անհամապա-

*) Բացառութիւնները մէշտ յարգելի են,

տասխան, վսասակար լինելու բուն պատճառն ի՞նչ էր երէկ:

Նրանց ընտրող համայնքերի անզիւտակցութիւնը, միամտութիւնը:

Այսօր մենք ինչ միջոցների ենք ձեռնարկում՝ մեր ընտրողներին խելքի և զիտակցութեան բերելու համար:

Ոչ մի միջոցի: Որովհետև կրթող, դիտակցութեան բերող միջոց չէ կարելի համարել այն ագիտացիաներն, որոց այսքան սիրահար և հետամուտ են մեր այժմեան կուսակցական գործիչներն:

Զ.

Երէկ ժողովուրդը գործիք ու խաղալիք այս և այն իշխանի, իշխանաւորի, հաէր մատնացոյց արած անձին էր ընտրում: Նոյն ժողովուրդը այսօր էլ գործիք ու խաղալիք է այս և այն կուսակցութեան ձեղալիք դանձնական էրի, նրա վարձուն: Եւ նրա գործակալների, նրա կան ազենսաների մատնացոյց եղած անձին կան ազենսաների մատնացոյց: Եւ ընտրում: Ներողութիւն՝ չէ ընտրում, այլ կուսակցութեան թեկնածուների անւանական՝ նախօրօք պատրաստւած՝ ցուցակը տանում, ընտրական ժողովի նախագահին ներկայացնում:

Է.

Երէկւայ ընտրութիւն կայացնող ժողովուրդը՝ չէր համարձակել իշխանի, աղովուրդը՝ չէր համարձակել իշխանի:

Դայի առաջարկած թեկնտծուին ձայն չը-
տալ, վասն զի գա նրան էժան չէր նստիլ:
Իշխանը, աղան նրա գուքնի վարձը կաւե-
լացնէր, նրան պաշտօնից կրհեռացնէր, իւր
հովանաւորութիւնից, իւր պաշտպանու-
թիւնից նրան կը զրկէր և այլն:

Այսօրւայ ընտրութիւնն կայացնող ժողովուրդը՝ նոյնպէս չի համարձակուիլ կուսակցութեան առաջարկած թեկնածուին ճախն շտալ փասն գի կուսակցութեան ներկայացուցիչը, նրա վարձկան ճառախօսը՝ մէկին՝ իւր լեզւագարութեամբ, իւր ցնդաբանութիւններով է ընկճում, նւաճում, միւսի՝ միամտութիւնն ու բարեմտութիւնը անխղճօրէն շահագործում, երրորդին՝ աղմուկով և սկանդալով վախեցնում, չորրորդին ատրճանակի բերանը կամ բէյրութի ծայրը ցոյց տալիս և այն:

P.

Ոուս յայտնի հեղինակ Կարալենկօն
կարծեմ «Անձայն» վերնագրով մի սիրուն
պատկեր ունի: Երկու ոուս փախստական
մուժիկ Նիւ-Եօրկ հասնելով հազիւ հազ ա-
պաստանարան են գտնում մի նկուղում:
Խեղճերը ապրուստի ոչ մի միջոց չունին:
Նրանց բաղդից փոքր ինչ յետոյ նկուղն է
մտնում մի կուսակցական Ամերիկացի և
Ոուսաստանի նորեկ բաղաքացիներին կա-
շառելով նրանցից երկու ձայն է որսում

յօպւտ, կարծեօք, Մակենլէի պըեզիդենտ
բնարսելուն:

Ճիշտ այս ձևով են վարւում մեր կու-
սակցութիւնները հայ ռամբիկների, ամբոխի
հետ, այն գանազանութեամբ, սակայն, որ
Ամերիկացի, նմանապէս և Եւրոպացի կու-
սակցութիւնները, իրանց ռամբիկներին որ-
ուում են փողով, իսկ մեր կուսակցութիւն-
ները, իբրև կատարեալ ասխացիներ, հայ
ռամբիկներին որուում են բռնութեամբ.—
բռնութիւն թէ խօսքով և թէ գոբծով:

6

Քանի որ այսպէս է, և հաւանականաբար դեռ առ ժամանակ մի այսպէս էլ պէտք է շարունակի, ապա ուրեմն աւելի լրդ է յատուկ հրահանգներ հրատարակել, ընտրութիւնների աեղ ու ժամանակ որոշել: Այս, դա, եթէ աջքակապութիւն չէ, գոնէ ժամափաճառութիւն է, անմիտ ձևապահութիւն է:

պահութիւն է:
Աւելի խղճմտանքաւոր բան կը լինի,
եթէ որ այս ու այն պաշտօնէի ընտրու-
թեան դէպքում՝ լիազօրութիւն ունեցողը՝
փոխանակ ժողովրդին, ծխական համայն-
քին՝ ի ժողով հրաւիրելու՝ դիմէ ուղղակի,
օրինակի համար, «Դաշնակցութեան»: Եւ
նրա տեղական բիւրօներին՝ թող իրանք
նշանակեն պաշտօնէին: Եւ եթէ հաստա-
տութեան հարկ զգացւեց, թող կենդրոնա-
կան բիւրօն հաստատէ:

Արդէն «Դաշնակցութիւնը» այդ բանեւ-
լում, առհասարակ, վարժ է, ընդունակ:
Եւ այն աստիճան, որ օրինակի համար,
Ներսիսեան դպրանոցի հոգաբարձուի հա-
մար՝ Թիֆլիզում՝ իրանց կուսակցականնե-
րից դուրս, մի այլ արժանաւոր անձն ջը-
գտնելով՝ Բագւայ իրանց կուսակցութեան
ներկայացուցին ընտրել տւին, շատ լաւ
իմանալով, որ Բագւից հեռանալ պատրա-
ստող ճարտարապետ պ. Քաջազնունին,
այնուամենայնիւ, Թիֆլիզում չպիտի ապրի:

J.

Մեզ կասեն, —ինքներս էլ լաւ հասկա-
նում ենք, —որ ընտրութիւն եղած տեղում,
բնականաբար, կուսակցութիւններ պէտք է՝
որ լինեն. Եւ թէ ամեն մի կուսակցութիւն՝
իրան համակրող, իրան համակերպողներ
ճարելու համար՝ պէտք է որ ամեն մի հար-
կաւոր ու հնարաւոր միջոցի դիմէ՝ յաղթա-
նակը տալու: —Եթէ այսպէս են անում եւ-
րոպացիները, ամերիկացիները, ինչո՞ւ նոյնը
չփիտի անենք և մենք: Զէ՞ որ մենք էլ մի
և նոյն մարդիկն ենք, մի և նոյն Արարծ
արարածները:

Ճիշտ է՝ մենք եւ, ըստ կաղմածածի, նոյն
ենք, ինչ որ եւրոպացիները։ Բայց այս
դեպքում մեզ նրանց հետ համեմատելլը,
մեզ էլ նրանց հաւասար կշռելլ՝ անտեղու-
թիւն է, անմտութիւն է։

Ահա թէ ինչ ու ինչ պատճառներով:

JU.

Եւրոպացիների հետ մենք չենք կարող համեմատւել նախ և առաջ այն պատճառաւ, որովհետև նրանք ամեն բանով մեզանից շատ ու շատ բարձր են։ Նրանց և մեր մէջ սար ու ձորեր կան, որոց այն կողմնանցնելու համար անհրաժեշտ է քաղաքակրթութիւն—կուլտուրա, որ մենք չունինք, անհրաժեշտ է լուրջ տոկուն աշխատասիրութիւն, որից մենք խուսափում ենք։ Ինչպէս որ առանց քրտնքի կարելի չէ

Ինչպէս որ առանց քրտնքի կարով չէ
հալալ—արդար հաց ձեռք բերել այսպէս
էլ առանց նախապատրաստութեան, առանց
տքնման կարելի չէ այս և այն գաղափա-
րը իւրացնել, այս և այն վերանորոգու-
թիւնը մի ժողովրդի սեպհականութիւնը
դարձնել:

۶۷

Զեռքներդ սրաներիդ դրած ասացէք
ովքեր են մեր այսօրւայ՝ սնկի նման բաած՝
սօցիալ-դեմօկրատներն, կօմունիստ-անար-
խիստներն, հնչակականներն, դաշնակցա-
կաններն՝ չեմ ասում ամենքը, այլ նրանց
հարիւրին 99 մասը:—Դպրոցներին ոյն խոկ-
ատորին գասարանների մանուկ աշակերտ-
ներն, խեղճ ու մոլոր բանւոր ու մշակներ,
որոնք այսօր փայլ ու տոն են տալիս մեր
եկեղեցական-հասարակական ժողովներին
ի հարկէ ոչ գիտակցաբար (հազար երանի

ՀՅՐ, եթէ որ այդպէս լինէր), այլ անզիւտակցաբար, թութակաբար: Եւ փայլ ու տոն են տալիս՝ ոչ թէ իրանց օպտի համար (երանի չՔր դարձեալ եթէ այդպէս լինէր): Այլ ի փառս և նաև ի շահս իրանց խելքից հանող, իրանց պարացնող պարագլուխ-ներին, մեր ինքնակոչ ուամկավարներին—դէմագօգներին:

đq.

Ճիշտ մի և նոյն կատակերպութիւնն էր կատարվում մեղանում նաև բառորդ գար առաջ:

Իւր աղգի անցեալ պատմութեանը
միանգամայն անտեղեակ, նրա ժամանա-
կակից կացութեան պայմաններին խորթ,
օտար ցանկութիւններով և ձգտումներով
թէ և շատ բարի, բայց եսամոլ, փոռամոլ,
դիւրագրգիռ և դիւրախաբ՝ հանգուցեալ
Գրիգոր Սրծրունին՝ աչքերը փակած՝ մի
օր բաղաքական խաղերի հոսանքի մէջ զոր-
ւեցաւ: Եւ «վիթխարի հանճար» ու «ան-
զուգական վիպատան» հրատարակւած՝ ա-
ռասպելաբան և հէքիաթաբան Ռաֆֆու
հետ ձեռք ձեռքի տւած՝ այսպէս ատած՝
«յառաջադիմտկան», «աղատամտական»
կուսակցութիւնը կազմեց իւր «Մշակութ»:
Եւ... Սերգանտէսի գրչով մի անգամ ընդ
միշտ անմահացած հերոսի ազնւամիտ խի-
զախութեամբ՝ ոկտեց իւր... հողմարածու-
թիւնները:

Ազգի մէջ եղած բոլոր դասակարգերը,
մինչև անգամ ինտելիգենտ դասակարգը,
միանգամայն վեասակար, ապուշ, անդա-
մալոյն անւանեց ու համարեց միակ, պի-
տանացու, միակ «մեծ ոյժ հայ ամբոխի»
վրայ յոյս դրած՝ ձեռնարկեց Տաճկահայաս-
տանը աղատելու:

Այս ժամանակւայ դիւանագիտութիւնը՝ օգտւելով ժամանակի հոսանքից և Արծունու ու նրա թիւած վիպասանի տրամադրութիւնից՝ այդպէս էր թելազրում, ներշնչում մեր աղատամիտներին ու նրանք Տաճկա-Հայատանը աղատեցին... իրանց բուն բնակիչներից, հայ տարրից:

۶۷

Մեր այս ազգային տնաքանդութիւնը
այն ժամանակ շատ քչերն էին տեսնում և
բողոքում Եպովբոսի լեզով (վան զի զրա-
քննիչը բնաւ թոյլ չէր տալ, Արծրունուն
և Բագիփուն քննադատելիս՝ խորերը և բար-
ձրերը քրաքրել): Բայց հիմա, փառք Աստու-
ծոյ, հօ ամեն ոք էլ բաց աչքով տեսնում
է թէ մեր դժբաղդ Տաճկահայ եղբայրներն
ու քոյլերը՝ ինչ սկ ու մութ օրերի են
հասել, օրեր, երբ կովկասեան աշխարհին
պատիժ պատուհաս կողակների ոխրագոր-
ծութիւնները՝ Տաճկաց համիլիէների գոր-
ծածների նկատմամբ՝ «Ալիքի» Բասէնի
թղթակիցը (№ 41) փառք ու պատիւ է հա-
մարում:

ԺԵ.

Ի դէպ՝ «Ալիքը»:—«Մշակի» դերը՝ այժմ այդ թերթն է կատարում մեր մէջ, իսկ նախկին ազատամիտ մշակականներին՝ այժմ մեր յեղափոխական դաշնակցականներն են փոխարինում։ Միայն, ՚ի հարկէ, տարբեր աստառով, տարբեր ճանապարհով, ինչ որ ժամանակակից հոսանքն է թերթում։—Եւ դիտելով այդ հոսանքը, շոյելով և շահագործելով ժամանակակից ազատամիտների արամադրութիւնը՝ այժմեան դիւնագիտութիւնն էլ՝ իւր գործը այնպէս առաջ կը տանի, որ ոռւսահայերս էւ բացի թուրքերից (գուցէ վերջերում և ոռւս ամբոխից՝ եթէ հարկ լինի) նաև մենք ինքներս՝ մեր սեփհական ձեռքերով աւերենք, անհետացնենք այն ամենը, ինչ որ ազգային է, ինչի վրայ որ դեռ մենք կարող ենք յոյս դնել, ապաւինել։ Ինչով որ՝ ինչպէս մի նաւով, հայ ժողովուրդը՝ քաղաքական ծովի ալիքների յործանուտներում՝ կարող է դեռ ևս շառագւել, չնկամւել։

ԺԶ.

«Ալիքի» թղթակիցներից մէկը անցեալ օր՝ 14 միաբանների խնդրի մասին խօսելիս՝ գրում էր թէ ոռւսաց կառավարութիւնը այժմ «Եկեղեցակը չէ»։ Արդեօք երբ և իցէ կառավարութիւնները Եկեղեցակը եղել են, Եկեղեցակը

լինում են ժողովրդային մասսաները, որոց իրանց ճանկը ձգելու համար է, որ կառավարութիւնները իրանք էլ Եկեղեցամէր, Եկեղեցւոյն հովանի և պաշտպան են ճկանում։ Սակայն երբ տեսնում են, որ այդ ճանապարհով մասսան իրանց ճանկը չի ընկնում, այն ժամանակ իրանց գործունէութեան եղանակը փոխում են։ Եղանակները այլազան են, որոց ամենավերջինը, մօղնին ազատամտութիւնն է, ժողովրդի մէջ երևացող ազատամտական, ուամկավարական տրամադրութիւնն է այս ու այն անհատի կամ խմբի կողմից, որոնք և իրանց միամտութեամբ կամ մեծամտութեամբ՝ թալակն են ընկնում, և իրանց ձեռքով բռնում անմեղ որսը և տանում այսնձնում բռնաւորին, որի ճանկերից ազատելն էր իրանց նպատակը։

ԺԷ.

Թերթեցէք Վարշաւայի կալենդարը և դուք այնտեղ հայ ազգանուններ կրող տանեկաւոր պրօֆեսօրների, բժիշկների, փաստաբանների, դատաւորների և այլ պաշտօնեաների կը հանդիպէր։

Անշուշտ Վարշաւայում կան և հարիւրաւոր հայ կօմիսիօններներ, արհեստաւորներ, մանը վաճառականներ, բայց նրանց մասին, ՚ի հարկէ, կալենդարներում յիշամասին, չկայական չկայ։ Այժմ հարց. մեր քթի առաջ ապող

Վարշավայի այդ հայերը՝ ինչու համար ու
չինչ բանով հայ հրապարակի վրայ չեն ե-
րևում։ Գոնէ իրանց գոյութիւնը չեն յայտ-
նում։

Պատճառը պարզ է. Վարշաւայի լու-
սաւորչական հայերը՝ այսօր չունեն գէթ
այն չորս պատերը, եկեղեցին և իւր գա-
փիթը՝ բակը, ուր հայ մարդիկ կիւրակէնե-
ներին, սովորաբար, համախմբւում են ա-
ղօթում, միմեանց հետ տեսակցում, զրու-
ցում, մտքեր շօշափում, մտքեր փոխանա-
կում և երբեմն էլ աստւածահաճոյ և աղ-
գահաճոյ գործերի ձեռներէց լինում։

Մեր այժմեան ազատամտութիւնը,
կամ աւելի ճիշտ՝ ազատ անմտութիւնը,
կովկասի հայերին էլ այժմ աշխատում է
Վարշաւայի հայերի օրին հասցնել։ Եւ իւր
այդ խօլամիտ նպատակը, կարելին փու-
թով, իրականացնելու համար՝ ամենայն
տղիտութեամբ և անբարեխղճութեամբ
սկսել է զրպարտել, բամբասել մրոտել հայ
ժողովրդի առաջ՝ հայ հոգեորականու-
թիւնը։

ԺԸ.

Ընդհանուր զարգացմամբ, գիտակցու-
թեամբ, ի ներքուստ ոչինչ նմանութիւն
չունենալով եւրոպացիների հետ՝ այնու ա-
զում։ Է՛, նմանում էլ ենք, միայն թէ
արտաքուստ։

Վերցրէք, օրինակի համար, հայ հա-
րուստ վաճառականին և նրա կնոջը։ Երկու-
քըն էլ իրանց արտաքինով, իրանց գլխարկ
ու շորերով, թերևս իրանց «բօնժուր» կամ
կութմօրգան» կոտրտւածներով, ոչնչով չեն
զանազանուում փարիզեցուց կամ բերլին-
ցուց։

Բայց 2 ըոպէ խօսակցելուց յետոյ՝
դուք արդէն կըտեսնէք, որ ձեր խօսակից-
ները ոչ այլ ոք են, եթէ ոչ, օրինակի հա-
մար Քեաթուկ գիւղացի Գեափին և նրա
կին Զառափիլ աղաբաջին։

ԺԹ.

Մեծն Պետրոս սուսների երկար մօ-
րուքները խուզում էր, նրանց լայնքզանցք
շորերը կարճացնում, նրանց համար ժողո-
շաբաններ, — անսամբլ բաց անում, ինչ է
փարաններ, — անսամբլ բաց անում, ինչ է
թէ նրանք քաղաքակիրթ եւրոպացիներ
դառնան։

Սակայն Պետրոս Մեծից՝ աւելի քան
երկու հարիւր տարի է անցել ահա և այ-
նուամենայնիւ, ըստ վոլտէրի՝ «երր ուսու-
ների կաշին քորէք, տակից սկիւթացիներն
երևում են»։

Մինչդեռ ճարոնացիք, իրանց արտա-
քինով, մինչ օրս էլ նոյն են, ինչ որ 1000
տարի առաջ. իսկ իրանց ներքինով նոյն
տարի առաջ. միայն իրանց ներքինով նոյն
տարի իրանց ուսուցիչ անգլիացիների, գեր-
իսկ իրանց ուսուցիչ անգլիացիների հետ են
մանացիների և ամերիկացիների հետ են
մրցակցում։

Ահա թէ ինչ է նշանակում ամեն բանի, ամեն մի գաղափարի ներքինը՝ ամենից պիտառը՝ հոգին թողած, վերցնել միմիայն նրա արտաքինը, երկրորդականը, կաշին:

h.

Մենք՝ հայերս, առհասարակ, վերջին
կարգի արարածներիցն ենք։ Իբրև փաստ
վերցնենք, օրինակի համար, եւրոպական
անուններ կըող մեր այս կամ այն կուսակ-
ցութիւնը, թէկուզ «Դաշնակցութիւնը»։
Եւրոպայի մէջ ով է լսել, որ անգլիա-
կան եկեղեցւոյ ծխականը՝ կաթոլիկ ծխա-
կան գործերին միջամտե,

իսկ մեզանում բողոքական, աւետարանական և կաթոլիկ եկեղեցիների ծխական հայերը լուսաւորչական հայերի ծխական ժողովսերին միջամտում էլ են, մասնակցում էլ են: — Ո՞ր օրէնքով, իրաւաբանական կամ բարոյական որ հիմունքներով արդեօք: — «Դաշնակցական» պարոնները այդպէս են կամենում, այդպէս են պահանջում, այն էլ՝ լաւ լսեցէք, — յանուն ազատամտութեան, յանուն յեղափոխութեան:

hу.

Հանրածանօթ Ունանը՝ Քրիստոսի մասին իւր համոզմունքը փոխելիս՝ համալսարանի ամբիոնը թողեց՝ անձնական համոզմունքը՝ իւր անպատճառ անզարգացած

ունկնդիրների վզին փաթաթելը՝ անսագնեռութիւն համարելով։ Մեր փոքրիկ Որնանների փոքրագոյն ճտերը, զորօրինակ, սկրզբունքով եկեղեցի չեն ընդունում և իրանց աշակերտներին էլ չեն տանում, չեն թողնում։ Բայց... եկեղեցական տօները ճշտութեամբ պահում են՝ դպրոց չյաճախելով։ Այս մէկը՝ Վրայ Երկրորդ՝ հաւատացեալ-ների (եկեղեցոյ) կոպէկներով գոյացած գանձանակների և մոմագների, լուսագների գումարները, առանց որ և է խղճահարութեան վերջնում են իբրև ոռճիկ աման գործերից յե-

Եւ այս ու սրա նման գործարից յ-
տոյ, մեր դաշնակցական պարոնները դեռ
յաւակնութիւն ունին մեր վաճառականնե-
րին, բուրժուաներին դատել ու դատա-
փետել՝ իբրև հարստահարիչներ, իբրև ա-
նազնիւ ճանապարհով գանձ դիպողներ, իբ-
րև ուրիշների հաշւով ապրողներ: «Կեղծա-
ւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ»:

۱۶۳

Ել կանգ չեմ առնում այն մասին, երբ
եկեղեցական ծխական դպրոցի ուսուցիչը՝
եկեղեցւոյ Պետի, համայն հայութեան ներ-
կայացուցչի կոնդակը, — դպրոցական չկա-
յացած համագումարի մասին, — բօյկոտի է
ենթարկում, և, — լաւ լսեցէք — շարունա-
կում է ուսուցիչ մնալ նոյն դպրոցում։
Այս էլ կատարում է յանուն ազատամը-
տութեան, յանուն Դաշնակցութեան։

Եւ այսպիսի տպատամքութեան դասաւու մեր հրապարակախօսները, մասնաւորապէս գաշնակցական «Ալիքը», մեր գաշնակցական ուսուցիչների այսպիսի գործողութիւնը համարում է իրաւացի, ազգօգուտ, մինչդեռ միւս կողմից, 14 միաբանների իրանց իշխանաւորին մատուցած խնդիրը, որով նրանք կայանալի կենդրոն. համաժողովի մասին իրանց կարծիքն են արտայայտում, մեր ազատամիտ թերթը, իւր թութակների երաներով, հոչակում է անիրաւութիւն, մինչև անգամ ազգային «դաւաճանութիւն»:

Եւ մեր այս անբարոյական, անգիտապղեցութիւնն է, որ մեր փիլիսոփայութեան դօքթօրներից մէկի կարծիքով մենք՝ հայերս «փոքրիկ բայց հանճարեղ ժողովուրդ ենք և գիտակցելով մեր միջերկրականութեանը, մի նոր լոյս պէտք մուտք, դէպի հիւսիս և դէպի արեւելք մուտք, դէպի հիւսիս և դէպի հարաւ».

(«Ըսկեր. № 22): — Մի խօսքով մեր փոքրիկ երկրագնդի ամենափոքրիկ մի անկիւնում՝ մի վիթխարի և մի նոր արեգակնային համաստեղութիւն:

«Բայց պ. Ս. Թառայեանի մեծամատուեան այս փոքրիկ նմուշը՝ մի անմեղ բան որ երէկ քաղաքումս, հազարաւոր թուուցիկներով, ցըւեց «Հայ Յեղափոխական

Դաշնակցութեան բագւայ ընտրողական հ(յ)անձնաժողովը», օգոստոսի 15-ին կայանալի կենդր. համագումարի մասին:

Ահա այդ թուուցիկը, որոյ առթիւ մեր ասելիքը միւս անգամ:

Ի՞.

Եթէ այս թուուցիկի հեղինակը՝ հայ սոցիալ-դէմօկրատները լինէին՝ մենք չէինք զարմանալ: Որովհետև յայտնի է, որ սոցիալ-դէմօկրատութիւնը ազգութիւն ասած բանը կամ չէ ընդունում և կամ եթէ ընդունում էլ է, — այն էլ ոչ իբրև նպատակ այլ իբրև միջոց, որոշ նպատակին համակարգ մար:

Բայց երբ այսպիսի թուուցիկների տակ՝ մենք «Դաշնակցութեան» ստորագրութեանն ենք հանդիպում, — դա արդէն շատ ծիծառագործ է գաւանում:

Ահա թէ ինչու:

Ի՞.

Մեզանում առհասարակ ընդունւած է «Դաշնակցութիւնը» համարել ազգային կուսակցութիւն, ազգի շահերը, նրա կեանքընութիւնը ու գոյքը պաշտպանող ընկերութիւնը: Եւ անշուշտ մեր այդ ցաւալի մոլորութիւնն է պատճառը, որ այս կուսակցութիւնը պատճառը, որ այս կուսակցութիւնը, համեմատաբար, թեան անդամների թիւը, համեմատաբար, շատ շատ է մեզանում, ի բաց առեալ այն շատ շատ է մեզանում, ի բաց առեալ այն հանգամանքը, որ կուսակցութիւնը ամեն հանգամանքը,

մի դիմողի էլ անխտիր և զրկաբաց ընդունում է։ Եւ, ինչպէս ասում են, տեղից վեր կացողը՝ դաշնակցական է դառնում։

Հայ մարդը, իւր գերիշխող մեծամաս-նութեամբ, իւր բոլոր զատակարգերով, սի-րում է իւր ազգը, երբեմն գիտակցաբար, երբեմն էլ անզիտակցաբար, բնազդմամբ, իներցիայով։ Հայը, ընդհանրապէս, պահպա-նողական ազգ է։ Հետևաբար՝ երբ «Դաշ-նակցութիւնը» (կամ թէկուզ մի այլ կու-սակցութիւն) յանձն է առնում պահպանել հային, —սա էլ ՚ի հարկէ, սիրով կը յարի նրան, կը համակրէ, կը նպաստէ։

hb.

Ապացոյց, որ «Դաշնակցութիւնը» հայութեան պաշտպան է համարւում՝ այս-
տեղ արտագրենք նրա մի նամակը կամ
առաջադրութիւնը, որոյ նմանները, նա
մանաւանդ այս վերջին օրերումս, շատ
շատերն են ստագել:

«Մեծապատիւ պարոն, (անուն և ազգանուն) նկատելով այն ծանր պայմանները, որոնք կրկին խմբում են հայութեան շուրջը (ընդ գծումներն միշտ մերն են սոյն նամակում): Հ. Յ. Դաշն. Բագուի կենդրունական կօմիտէն հարկագրւած է արտակարգ կերպով հայ ունեոր անհատներից միանւագ գումարներ հաւաքելու: Այդ պատճառով ձեզ վրայ դրում է հազար-հինգհարիւր (1500) սուբլի գումար, որ

առաջարկւում է ձեզ Դօրւայ ընթացքում
հասցնել կենդրոնական Կօմիտէիս տեղական
ենթակօմիտէի միջոցաւ»:

Այդ գումարների գործադրութիւնը,
ի հարկէ, մեզ յայտնի չէ։ Մեզ միայն այս
լաւ յայտնի է, որ «Դաշնակցութիւնը» ար-
տակարգ կերպով ժողոված այդ գումարնե-
րը տառապեալ, սովեալ գիւղացիների օգ-
տին չպիտի գործադրէ, այլ թերևս, այդ-
պիսիների թիւը՝ նոր ի նորոյ շատացնելու
համար։ — Սակայն մենք հարցից շշեղւենք։

19

Ինչպէս ամեն մի ազգ, նոյնպէս և հայ
աղքը, կազմւած է այլ և այլ դասակարգե-
րից, որոց թւում, ի հարկէ, և աշխատա-
ւոր կամ բանւոր դասակարգը, որ քանա-
կութեան կողմից հազիւ $1\frac{1}{2}$ տոկոս է կազ-
մում և խոնւած է զիմաւորապէս Բագւում
և Թիֆլիսում:

Արդ՝ «Դաշնակցութիւնը» գումարներ
զջլելու համար, իւր տարածած թղթերով
հայութեան պաշտպան է հանդիսանում և
նրա ունեոր դասի աջակցութեանն է դի-
մում։ Իսկ կենդր. ժողովի առթիւ իւր ցըր-
ւած թուցիկներով՝ այդ դասի մասնակ-
ցութիւնը ոչ միայն ժխտում է, այլ նաև
նրանց ցեխի ու տղմի մէջ կոխուում։—
Նոյնպէս է վարւում ՚ի հարկէ, համաձայն
մօդայական պահանջի, նաև և հոգեորակա-
նութեան հետ։

Գումարներ վճարելիս՝ հայ ունեղընեւը «Դաշնակցութեան» աջքում «մեծապատիւ» պարոններ են, իսկ ուրիշ դէպքում՝ նրանք անպէտք, վսասակար ցեցեր են, որոնք եթէ համարձակուին ճշտութեամբ չկատարել «Դաշնակցութեան» առաջտրութիւնը՝ կը ծեծւեն, կը խարազանւին, կը բանտարկւին և կսպանուին*): Մի խօսքով իսկ և իսկ Սիկիլիոյ Մաֆիիան:

Կարծում ենք, որ վերջապէս պէտք է
պարզէի ու որոշէի թէ՝ «Դաշնակցութիւնը»
հայութեան համար է արդեօք, թէ, գուցէ,
հայութիւնը «Դաշնակցութեան» համար է,
ինչպէս որ կարծում են նրա ղեկավար-
ները:

*). Ախալցխայի «գաշնակցականները» շատ անգամ գումարներ են պահանջել յայտնի կալածատէր Մանուկ Բայրութցեանսից, որ միշտ բացառել է: Դաշնակցականների սպառնալիքներն էլ միշտ արհամարհել է՝ իրանից անբաժան ունենալով իւր զինած թի նապահերին: Անցեալ տորի այդ մարդը մեռաւ: Դաշնակցականները իրանց քաջութիւնը ցոյց տուին նրա... զիակի վրայ, որ չժողին թաղելու, մինչև որ հանգուցելոյ ժառանգները՝ զիջանելով իրանց ծխական քահանայի միջնորդութեանը՝ 5000 սուրլի վճարեցին «Դաշնակցութեանը:

Այդ քահանան էր՝ ծերունի կարտափետ քահանայ
Տէր-Դրիգորիանցը, որը անցեալ ամսում մի եռեկոչ
իւր տան բակում երեկոյեան ժամը 10-ին, զնդակա-
հար եղաւ անյայտ սրիկաների ձեռքով։ Ծան յօդ

16

Թոռւցիկում ասած չէ թէ՝ «Դաշնակ-
ցութիւնը», որ իւր ուսերի վրայ տանում
է հայ աշխատաւոր ժողովրդի կեանքի և
բռնաբարւած քաղաքական և սօցիալական
իրաւունքների պաշտպանութեան վեհ գոր-
ծը», — մինչ օրս ի՞նչ ծառայութիւն է մա-
տուցել հայ գիւղացիութեանը, որ մեզա-
նում ամենից ստար դասակարգն է:

Մեր տեսածով ու լսածով՝ հայ գիւղացիութիւնը «Դաշնակցութիւնից» որ և է իրական օգուտ չստանալուց զատ՝ այլ և մեծ մասսամբ նրա պատճառով և նրա երեսից աղէտների մէջ է ընկել: «Դաշնակցութեան» ինքնապաշտպանութեան սիստեմը գիւղացու տունը բանդեց, թէպէտ և «Դաշնակցութիւն»-ով լացած շատ և շատ աշքեր գեռ այս բանը չեն տեսնում: Եւ միամտաբար գեռ կարծում են, որ «Դաշնակցութիւնը» պաշտպանել է, կամ թէ կարող է հայութիւնը պաշտպանել:—Ինչ և իցէ: «Դաշնակցութեան»

Սպառութեամբ, ըստ «Իաշնակցութօնա»
դուրս է գալիս, որ հայութիւնը կազմւած
է միմիայն բանւոր գասակարգից։ Եւ մեր
ազգային կուսակցութեան առատածեռն
բարիքը՝ միմիայն այդ փոքրիկ գասակարգն
է վայելել։

۱۰۷

Բայց սակայն հայ բանւորութեան այդ
վայելած բարիքը արդեօք ողն է:

«Դաշնակցութեան» կազմած «արհեստակցական միութիւնների» միջոցաւ տեղի ունեցած պորձադուները՝ տնտեսական հողի վրայ։ Ահա այդ բարիքը:

Ճիշտ է այդ գործազուրները, ինչպէս
որ առանց «Դաշնակցութեանն» էին սկսւել
այնպէս էլ առանց նրան կարող էին զար-
գանալ, կանոնաւորւել: «Դաշնակցութիւ-
նից» շատ առաւել գիտակ անձինք ձեռնե-
րէց եղել էին և կան, որովհետեւ դա ժա-
մանակի ոգին, անհրաժեշտ, անդիմազբելի
պահանջն էր:—Բայց թէ՝ ժամանակի ոգին
հայ բանւորութեան մէջ մարմնացնողը,
այսպէս ասած՝ հայ յատուկ բանւորութիւն
ձևակերպողը, «Դաշնակցութիւնն» եղաւ:
Այս փառքը նրանից խլել երբէք չէ կարե-
լի:—Այսպէս էլ արձանագրենք:

hθ.

Մի և նոյն ձևով և մի և նոյն վասրբին
արժանացան, ճիշտ քառորդ դար առաջ,
Գրիգոր Արծրունու «Մշակը», նրա «զաղա-
փարների ամենամոլեսանդ քարողիչ» Բաֆ-
ֆին և առհասարակ բոլոր մշակականները:
— Դրանց կարծիքով հայ ազգը իրանցով էր
սկսւել և իրանցով էլ պիտի վերջանար,
եթէ նրանց խորհրդովը չշարժէր: Մի և
նոյնը կարծում են այսօր մեր դաշնակցա-
կանները և իրանց օրգան «Ալիքը»:
Եւ թէպէտ մեր խորին համոզմունքն

է, որ մշակականների աշխատանքի նման՝ դաշնակցականների աշխատանքը ևս հայութեան համար բացասական արդիւնքներ պիտի արտադրէ, — այնու ամենայնիւ փոքր ինչ մօտիկից զննենք «Դաշնակցութեան» կազմած միւթիւնների հետևանքը հայ բանւորութեան վրայ, — այն բանւորութեան, որ դժբաղդութիւն ունեցաւ ամենից առաջ ենթանկւել մեր ազգային կուսակցութեան ազգեցութեանը, նրա խնամակալութեանը:

1.

Ասցեալ տարւայ օգոստոսին տեղի ունեցած հրձիգութիւններից և կոտրածներից յետոյ՝ Բագւայ նաւթային շրջանում գտնւող հայ բանւորների թիւը կիսւեց և այժմ հազիւ 7000-ի է համարում:

Դրանք, գոնէ դրանց $\frac{9}{10}$ մասը, այժմ
տեղաւորած են բացառապէս 4—5 յայտ-
նի նաւթագործ հայերի գործերում։

Եւրոպացի, ոռւս և թուրք սաւթագործները, (Ասյնալէս և կտաւի գործարանատէր Թաղիեվը), հրաժարւելով հրաժարւում են հայ բանւորներ վարձելուց։ Իսկ եթէ վաղ ժամանակից ունեցել են մի քանի տասնեակ հայեր, — նրանց էլ հեռացնում են՝ կամ այս ու այն պատրւակով և կամ, փոփոխադարը համաձայնութեամբ՝ բաւարարութիւն տալով։

L.U.

Հայ վարձելուց հրաժարւելիս կամ եղածներին հեռացնելիս՝ օտարազգի նաւթագործները չեն ասում թէ՝ հայ բանւորը անպէտք է, անբարեխիղճ է, անհաւատարիմ է։ Ո՞չ քաւ իցի։

Հնդհակառակը՝ նրանք շատ լաւ իմաստում են և հրապարակօրէն էլ վկայում են հայ բանւորի արժանիքը, մինչև անգամ նրա ինչ-ինչ առաւելութիւնները իւր այլ ազգի բանւորակիցներից; Ի վերայ այսր ամենայնի՝ եղածներին հեռացնում են և նորերին չեն ընդունում:

— *husk*:

— Որովհետեւ, — ասում են այլազգի
նաւթագործները, — հայերը յեղափոխական
են: Եւ իբրև յեղափոխական տարր, կարող
են կամ իրանք, կամ իրանց պատճառաւ-
ուրիշները, մի օր, վտանգի ենթարկել նը-
րանց, — օտարազգիներու, — հանքը, գործա-
րանը, արհեստանոցը և այլն:

LFB.

Բայց իրօք հայ բանւորութիւնը, գէթ
նրա մեծամասնութիւնը, իսկապէս յեղա-
փոխական է միթէ:

— Երբէք, քաւ լիցի։ Իմ տեսածով և
իմացածով ոչ, հայը յեղափոխական չի եղել
և չէ։ Նոյն իսկ մեր «Դաշնակցութեան»
յեղափոխական լինելու, — այդ բառի իսկա-

L9.

կան նշանակութեամբ,—դեռ շատ կասկածելի է։ Սակայն ի՞նչ արած, որ այսօր ուսւ կառավարութիւնն էր, նրա պաշտօնէութիւն էր, նրա զինւորականութիւնն էր, նրա ինտելիգենցիան էր,—այն, նա էլ (մեր խօսքը՝ բացառութեանց մասին չէ), նրա ժողովուրդն էր, նրա հոգևորականութիւնն էր, վերջապէս մեր հարևան բոլոր այլ ազգութիւններն էր,—ամենքը, ամենքը համոզւած են, որ ողջ ազգը, ոտքից ցգութիւ, թունդ յեղափոխական է, էլ ուր մնաց նրա մի, թւով շատ աննշան, դասակարգ, —բանորութիւնը։

Կրկնում եմ սա սխալ է, զպարտութիւն է, մոլորութիւն է։ Բայց փաստ է, կենդանի իրողութիւն է։

Համանման մոլորութեան դէպքեր՝
շատ կան աղգերու պատմութեան մէջ։ Ես
նրանցից միմիայն մինը առաջ կը բերեմ
այստեղ։

այստեղ։ Յայտնի է ամենքին, որ հրեայ ազգը՝ իւր գոյութեան օրիցն սկսեալ մինչև օրս՝ ճշմարիտ Աստծուն է պաշտել։ Ճիշտ է ժամանակ առ ժամանակ՝ Պաղեստինի մի քանի տեղերում կռապաշտութիւնը մուտք գործել է, սակայն հրեայ ժողովուրդը, իւր ամբողջութեամբ, երբէք կռապաշտ չէ եղել։ Գալով կռապաշտութիւն ընդունող հրեանէրին, սրանք էլ, երկար կամ կարծ

ժամանակաւ, պաշտել են իրանց հարևանների չառածածներին, — Մօլովին, Աստարովին և այլն: Խոկ էշ հրէաները երբէք չեն պաշտել: Հրէայ իշապաշտ՝ ծիծաղելի է, չք: Մասնաւորապէս Երուսաղէմի տաճարը միշտ և հանապազ Եհովայի տունն է համարել:

L2.

Սակայն ի շնորհս մի անպատան հրէա-
ատեացի հնարած մի առասպելի^{*)} հին ազ-
գերի մէջ ընդհանրացած համոզմունք էր
իբր թէ հրէայ ազգը՝ իշապաշտ է:

Այս մոլորութիւնից զերծ չէին մնացել
այն ժամանակւայ զարգացած մարդիկն
անդամ, թագաւորներն անդամ։ Այնպէս
որ, -չեմ յիշում, — Ասորեստանի Սենեքե-
րիմ թէ Բաբելոնի Նաբուզոթոնոսօր թա-
գաւորն է, որ երբ տաճարը մտաւ, նրա
«Սրբութիւն Սրբոց» կոչւած մթին մասու-
մը՝ էշ էր պարտում։ Եւ չգտնելով՝ անդում
էր թէ տաճարի սպասաւորները իրանց
էշ-շաստուծուն տարել և ուրիշ տեղ են
թափցրել։

*) Ծան. Սինա անսալատում՝ կըք մի անդամ՝ ծառաւութիւնից հրէաները սաստիկ տանջւում էին, մի էշնրանց մի յարդ աղբիւրի տեղ է ցոյց տւել: Եւ անապայտ ժամանակից սկսեալ՝ հրէաները էշնրանց պաշտում իբր: Եւ Երուսաղէմի տաճարում շարունակ մի էշնրանց պահելիս որպէս թէ:

lb.

Հայ ազգի յեղափոխական լինելն՝ շատ
և շատ նման է հրէից՝ իշապաշտ լինելու
առասպելին։ Մի Գալիցին, մի Վիլեչկօ, մի
Ճաւճաւածէ հայերին յեղափոխական ան-
ւանեցին մի օր և այսօր ամբողջ Ռուսաս-
տանի աշքում նրանք թունդ յեղափոխա-
կաններ են դարձել։

Այս մոլար կարծիքը՝ բաւականին հար-
ւածներ տւեց մեզ մինչև այսօր ի միջի
այլոց՝ նա շատ յետաձգեց՝ հային յատուկ
նրան սիրելի ու հաճելի քաղաքակրթական
գործը: «Բայց, ըստ ս. Աւետարանի, այս
ամենայն սկիզբն է երկանց»:

ինձ թւում է (երանի ես սխալւած լինեմ, վոյթ չէ, թող այն ժամանակ «իմ լեզուն իմ քիմքին կպչի» չորանայ), որ մեզ համար նորանոր և աւելի ծանր հար- ւածներ են ծրագրւում, որոց տակ՝ դժւար, շատ դժւար կը լինի, գուցէ և անտանելի, այս ազատ շունչ բաշել:

այլու պատ է և և և
Եթէ ամենաքաղաքակիրթ ազգերից ոչ-
կի, — Ֆրանսիայի համար հարկաւոր էր 12
երկար տարիներ նահատակել մի Դրէջու-
սի, մինչև որ նրա անմեղութիւնը հաստատ-
վի, — արդեօք հայերս քանի տասնեակ տա-
րիներ պիտի նահատակւենք մեր անկիրթ
Ռուսաստանում, մինչև որ մեր անմեղու-
թիւնը ևս ապացուցվի: Եւ ով պիտի ապա-
ցուցանէ: — Ուր են, որոնք են մեր աղքի

անմեղութիւնը բարձրաբարբառ քարոզող
ու պաշտպանող մեր էմիլ Զօլաները:

ԼԶ.

Այժմ մի հարցը: Ըսդունելով հանդերձ,
որ Ռուսաստանում մարդիկ մեր մասին
մոլորած են, տեսնենք թէ այլոց այդ մո-
լորութեան մէջ մենք ևս, մեր կողմից, ո-
րոշ չափով մեղաւոր չենք միթէ: Արդեօք
այդ մոլորութեան տարածմանը և հաս-
տատմանը՝ մենք ևս չենք նպաստել և
չենք նպաստում:

ԼԷ.

Ցուցամոլութիւն, մնապարծութիւն,—
ահա թէ, ըստ իս, ինչով կարելի է բնորո-
շել մեր գործիչներից շատերի գործնէու-
թեան այն կողմերը, որոնցից այնքան գայ-
թակղում են հայատեաց ոռւս մարդիկ,
ըստ հետեւող ոռւս ամբոխը:

Դարերի ընթացքում ինքնուրոյն մը-
տածողութիւնից և գործնէութիւնից զըրկ-
հրամաններով և հրահանգներով ղեկավար-
ւելով ոռւս մարդու, ուղեղը, ընդհանրա-
պէս, չէ կարող մարսել մի միտք, գաղա-
փար, որ ինքնուրոյնութեան, անկախու-
թեան դրոշմ, հետք է կրում: Նա չէ կա-
րող անտարեր կամ հաշտ աչքով նայել մի

անհատի, մի համայնքի վրայ, որ հետա-
մուտ է որ և է տեսակ գործնէութեան՝
առանց նախրնթաց թոյլտութեան կամ
հրամանի: Ռուս մարդը չէ հետաքրքրում
որ և է գործնէութեամբ՝ ըստ նրա էու-
թեան, այլ այն ձևով ու եղանակով, որով
այդ գործունէութիւնը երևան է գալիս:

ԼԲ.

Եթէ ինքնուրոյն մտքի կամ գործնէու-
թեան հեղինակը ոռւս չէ, այլ՝ այլազգի, —
այն ժամանակ հօ ոռւս մարդու անհամբե-
րատարութեան աստիճանը իւր գագաթնա-
կէտին է համարում և փոքր ու մեծ ոճիր
ու աղէտներ առաջ բերում:

Թէ նախորդ ձիգ տարիների մասնաւոր՝
և թէ վերջին երկու տարիների ընդհանուր
կոտորածները — պօզոմները հետևանք են
աւասիկ ոռւս մարդու անհամբերատար
ոգւյն, նրա թանձրամտութեանը:

Գրգռչութիւնը — պրօվօկացիան որտե-
ղից ուղղում է թող լինի, — դա մի և նոյն է,
այն ժամանակն և եթ նպատակի կը հաս-
է գտնում:

Մաղձախտի քոլերայի բացիները՝ շատ
շատերի աղիքների մէջն են մտնում, սա-
կայն մեռնում են միմիայն այն մարդիկ,
կայն դրութեան տրամադրւած կազ-
որոնք հիւանդութեան տրամադրւած կազ-
որոնք ունին: Եւ մաղձախտը, առհասա-
մւածք ունին: Եւ մաղձախտը, առհասա-
մւածք ունին: Եւ մաղձախտը, առհասա-

նակ՝ երբ մի զիւղ, մի քաղաք, մի երկիր
բաղկացած է լինում թոյլ և անառողջ կազ-
կազմւածքի տէր մարդկանցից:

Ուստաստանը այդ տեսակ դժբաղդ եր-
կիրներից մինն է: Ժամանակ առ Ժամա-
նակ նրանում երնան եկող սովերն, կոտո-
րածներն և այն, արդիւնք են նրա ժողո-
վրդի մեծագոյն մասի տպիտութիւնից բըղ-
խող բարոյական հիւանդութեան այլ և այլ
տեսակներին:

ԼԹ.

Ապրելով մի այսպիսի ազգի հետ՝ նրա
երկրումը, գտնւելով նրա անմիջական ազ-
դեցութեան տակ, համարեա մեր ամեն մի
քայլափոխում նրանից կախում ունենա-
լով, — մենք՝ հայերս, ևս առաւել մեր գոր-
ծիչները, մեզ առաջնորդելու պատասխա-
նատու դերն ստանձնողները, պարտաւոր
ենք նախ և առաջ՝ լաւ ճանաչել և իմանալ
թէ մեր գործը ո՞ւմ հետ է, և ապա ըստ
այնմ՝ ձեռնարկել գործին, եթէ միայն ու-
ղում էր որ և է գործ շինել, այլ ոչ միմո-
սութիւններ կատարել, էժանագին ժողո-
վրդականութիւն և դափնիներ վաստակել:
Երկրորդ՝ պարտաւոր ենք, — և պարտա-
ւոր ենք, ըստ առաքելոյն, «ոչ միայն վա-
սըն բարկութեանն, այլ և վասն մտացն
խղճի», — յարգանքով վերաբերւել դէպի այն
ամենը, ինչ որ մի ազգի համար նուիրա-
կան է, անձեռնմխելի, սուրբ: Իսկական

աղատամտութիւնը ահա այստեղ է, այլ
ոչ ափեղցիեղ հայոյութիւնների, բացա-
կանչութիւնների մէջ:

Վոլտէրը աղատամիտ, մեծամեծ ար-
ժանաւորութիւնների տէր անձն էր: Բայց
նա շատ մեծ յիմարութիւն էր անում, մեծ
անհամբերատարութիւն էր ցոյց տալիս,
երբ եկեղեցի մտնելիս՝ ազօթաւորներին
հեղնում, ծաղրում էր Գրանսիական թե-
հեսոլիկութեամբ:

«Մեղանում «Դաշնակցութիւնը» շատ
յարգողներ ու համակրողներ ունի: Բայց
յագողներ ու համակրողներ ունի: Յի-
բագւայ գաշնակցականները շատ մեծ յի-
մարութիւն արին՝ Քրիստափոր Միքայէ-
լեանցի հոգեհանգստի ժամանակ՝ եկեղեցւոյ
միջին յայտնի սկանդալը սարքելով *):
Ես գաշնակցական չեմ. սակայն ձեռքս

*) Դործակալ Զաւէս վարդապետը բեմից մի սըբ-
տառուչ գամբանական խօսեց: Եւ իւր ողերութեան
տառուչ գամբանական խօսեց: Եւ իւր ողերութեան
այնքան առաջ գնաց, որ Միքայէլեանցին և Սա-
մէջ այնքան առաջ գնաց, որ Միքայէլեանցին և Սա-

սրտիս վըայ դբած վկայում եմ, որ այդ
սկանդալի հեղինակների մտքովն անգամ
չէր անցնում եկեղեցում Ընդունուած որոշ
կարգերը խափանել, խանգարել, հաւատա-
ցեալներին գայթակղեցնել, նրանց յուզել,
կամ թէ՝ դամբանախօս վարդապետին ժո-
ղովրդի աջքում նուաստացնել:

Այս քաւ լիցի այդպէս բան չի եղել:
Այլ սկանդալի հեղինակներին այդ ըովէ-
յում թելադրում էր մի ազնիւ ցանկու-
թիւն և եթ, այն է որքան կարելի է լաւ
և ճշգրիտ կերպով ծանօթացնել ժողովրդին
Քրիստոնքոր Միքայէլեանցի հետ, որ,
իրանց՝ դաշնակցականների՝ տեսակէտով,
նուիրական անձն է, անմահ և

Բայց սակայն ցուցամոլութեամբ, սնապարձութեամբ կուրացած բժ. Աթաբէկեանը՝ չկամեցաւ, աւելի ճիշտը՝ չկարողացաւ, ի նկատի առնել իւր ճառը խօսելու տեղը, ձեր, ժամանակը և այն, ուստի և իւր յարգած մարդու իշշատակին արջի ծառայութիւն միայն արաւ:

lv.

Եւ իրանց երեխայական ցուցամոլութիւններով, իրանց հիւանդոտ մոլեռանդութիւնով, մենք շատ Ասոն Աթարէկեան-ներ ունինք այսօր, որոց անմտութիւնները, ցնդաբանութիւնները և այլն՝ ուռաները հալած իւղի տեղ են ընդունում, այդ ամենը հայ ժողովրդի, նրա մեծամասնու-

թեան տրամադրութիւն և ձգտում համարում և հրատարակում։ Եւ այսպիսով՝ իրանց սրտում ատելութիւն, քէն, ոխ զարթեցնում, և արծարծում դէպի մի անմեղ և ամենահաւատարիմ ժողովուրդ, որպիսին է հայ ժողովուրդը, որի պատմութեան և հոգեբանութեան հետ, դժբաղդաբար, զեռ ծանօթ չէ ոչ ոռւս կառավարութիւնը և ոչ էլ ոռւս ժողովուրդը։

Այդ կառավարութիւնն ու այդ ժողովութիւնը՝ երբ շարունակ լսում են, նոյն իսկ փոխարքայի պալատում, պաշտօնական նստի ժամանակ, թէ «Դաշնակցութիւնը» լաւ մասւգէրներով գինւած զինւորների ահագին խմբեր ունի*), երբ նրանք հայ թերթերում կարդում են դաշնակցութեան «զինւորական շտաբի» պաշտօնական կարգադրութիւնները, որ գանձակեցւոց, օրինակ չի թոյլատրուի գաղթելու, երբ նրանք դաշնակցական դատաւորների տպագրեալ վըճիոնները կարդում են թէ՝ օրինակ, պարունակած արկւում է «10 ոռւբլի տուգանքի յօգուտ «Դաշնակցութեան կարմիր խաչի», պարոն Բ. Ենթարկւում է 5000 ոռւբլի տուգանքի յօգուտ իւր կնոջ»։ Երբ կառավարութիւնն ու այդ ժողովուրդը տեսնում է թէ մի յեղափոխական Քրիստովորութիւնը են բարձրացնում և նրա պատկերը մեծաշուք հանդիսով թիֆլիզի և Բարը

*) Կարծեմ Ա. Խատիսեան ու իսրայելցիները:

դւայ փողոցներումն են զջեցնում այն
ձևով, ինչ ձևով, որ ոռւս մարդը միմիայն
թագաւորի պատկերն զրջեցնելու սովոր է:
Երբ նրանք կարդում են, որ պատահաբար
թիֆլիսում հաւաքւած ուսուցիչներ և ու-
սուցչուհիներ՝ բաւական չեն, որ հայոց ու-
սուցչական համագումար են կազմում և
գուտ դպրոցական գործերից աւելի՝ կողմ-
նակի հարցերից են ճառում ու ճամարտա-
կում, որ յեղափոխական տարրին ցոյց տա-
լու համար թէ ահա «մենք էլ ենք հեր-
կում, վեր են կենում և 27 Մենքը եցինե-
րի օգտին Պետական Դումային հեռագիր
տալիս: Երբ ոռւս կառավարութիւնն ու
ոռւս ժողովուրդը՝ ամենայն օր լսում և
տեսնում են թէ ինչպէս մեր «Դաշնակցու-
թիւնը» ամենականոնաւոր կերպով ամսա-
վճարներ է ստանում ամեն մի հայ բան-
որից, ամեն մի հայ արհեստաւորից, ամեն
մի գիւղացուց, որին ստիպմամբ ծախել է
տալիս իւր կովը, զոմէշը, եղը և 50 ոռոր-
լիանոց հրացանը 150 ոռութիւնով գնել տա-
լիս: Երբ տեսնում են, որ «Դաշնակցութիւ-
նը» մինչև անգամ պարբերական ամսա-
վճարներ է ստանում նոյն իսկ, — ինչ էք
կարծում ումնից — Տաճկահայստանից փա-
գւայ անկելանոցներում, նրա կատակու-
կուչ եկած՝ թշւառներիցը ամենից թշւառ
հայերից, այն, նրանցից էլ եւ այս ամսա-

վճարներով, ևս և հարուստներից գջած
հազարներով և տամնեակ հազարներով՝ մի-
լիօնների գործառնութիւն, — աբարօտ» է ա-
նում, և այն և այն:

ԽԱ.

Մի խօսքով՝ երբ ոռւս կառավարու-
թիւնն ու ոռւս ժողովուրդը ամեն օր լը-
սում ու կարդում և տեսնում են մեր ազ-
գային գործիչ կարծւածների, մեզ պաշտ-
պան ձեացողների՝ այս ամենայն և սրանց
ման տեսակ-տեսակ այլանդակ, խելակո-
նման տեսակ-տեսակ այլանդակ, խելակո-
նման գործերն՝ միթէ իրաւունք չունին մե-
րոյս գործերն՝ միթէ իրաւունք չունին մե-
րոյս գայթագուելու, մեր հաւատարմու-
գանից գայթագուելու, մեր հաւատարմու-
գանից գայթագուելու և մեզ հետ թշշ-
նամանալու:

Մի բոպէ միտք արէք՝ ոռւս ժողովրդի
ատելութիւն և թշնամութիւն դէպ ի հայ
ժողովուրդը: Վերջինս կարող է արդեօք
ժողովուրդը: Վուխ պլրծացնել ապրել
շնչել:

Երբ թուրք խուժանը մեզ կոտորում է՝
մենք իսկոյն ոռւս կառավարութեան օգ-
նութեանն ենք ապաւինում: Իսկ եթէ
ոռւս խուժանը սկսի մեզ կոտորել և կա-
ռավարութիւնը աչքի տակով նայի այդ
ռավարութիւնը պուրակ մեր պօռ-
քանի վրայ, — այն ժամանակ մեր պօռ-
քանից «Դաշնակցութիւնը» կարող է ար-
տախօս «Դաշնակցութիւնը» կարող է ար-

Էին մտել, երբ անցեալ տարի հոկտեմբերին Բագւայ ոռւս խուժանը, նենդամիտ, վրիժառու թուրքերի առաջնորդութեամբ, 20 հատ հայկական փառաւոր տներ այրեց, կործանեց և 100-ից աւելի հայ մարդ սպանեց, կոտորեց: Ո՞րտեղ էին «Դաշնակցութեան» ռազմիկները՝ երբ Վարանդի և Խաչնի աղեխարշ տեսարաններն տեղի ունեցան:

Արդ՝ եթէ «հայութեան պաշտպան» կարծւած մեր մեծախօս «Դաշնակցութիւնը» մեր նեղ օրերին չպիտի կարողանայ մեզ օգնել, — ապա էլ ինչու իւր անմիտ, իւր ցնորսամիտ հակակառավարչական ցոյցերով, զրւածքներով կառավարութեանը մեր դէմ է զրգուում ամենայն օր:

«Դաշնակցութեան և նրա լէյբ-օրդան
«Ալիքի» կողմից՝ մի այսպիսի անգութ վե-
րաբերմունք դէպ ՚ի մի խեղճ և անմեղ
ժողովուրդ՝ արդեօք ի՞նչ է նշանակում, —
զբգոջութիւն—պրօվակացիա, թէ, գուցէ,
խելագարութիւն:

Թողնելով ընթերցողին իրան՝ այս հարցի պատճառամբ, ես վերադառնում եմ «Դաշնակցութեան» խնամատարութեանը ենթարկւած հայ դժբաղդ բանւորութեանը:

106.

Հայ բանւորական դասակարգը մեզա-
նում, գոնէ բազւում, իսկապէս պրօլետա-

լիա չէ կազմում։ Որովհեակ մեր բանւոր
ները, գրեթէ ամենքն էլ, եկտորներ են
գիւղերից, ուր նրանք ունին շատ ու քիչ
ապրանք, վարելահող, այգի, բանջարանոց,
որոց վարում և մշակում են Բագու եկող
բանւորի տանը մնացած բնտանիքը՝ հայրը,
եղբայրը, մայրը, կինը։ Որոշ ժամանակից
յետոյ՝ բանւորը վերագառնում է իւր տու-
նը։ Նրան փոխարինում է Բագւում հայրը,
եղբայրը։ Եւ կամ կրկին ինքն է գալիս։ Եւ
այսպէս շարունակ։

194.

Այսպէս՝ Բագուն իւր հանքերով և զոր-
ծարաններով հայ բանւորութեան ապրուս-
տի միակ աղբիւրը չէ։ Այլ մի կողմնակի,
օժանդակ աղբիւր։ Այդ աղբիւրի նւազ-
մամբ կամ ապառմամբ, ճիշտ է, հայ բան-
ւորը միանգամայն անձար կամ սոված չի
մնալ, ինչպէս որ այդ պատահում է եւրո-
պայի պրոլետարի հետ, — այնուամենայնիւ
երևոյթը՝ հայ բանւորի տնտեսութեան վր-
բայ ևս զգալի կերպով ներգործում է։

Եթէ հայ բանւորութիւնը այսու և
լետարիա չէ կազմում, դեռ այդ չէ երաշ-
խաւորում թէ՝ վաղն ևս չպիտի կազմէ:
Ըսդհակառակը՝ հոգի սակաւութիւնը, նրա
անքերիութիւնն, ուժասպառութիւնը, կա-
տարելագործւած գործիքների բացակայու-
թիւնը, ժողովրդի աճումը, նրա պահանջ-
ների, նմանապէս և պետական ու հասա-

ըակական հարկերի շատանալը և այն,
այն ամենը օր աւուր և ժամ առ ժամ հայ
բանւորութեանն ևս՝ պրօլետարիութեան
գիրկն է մղում:

Խ7.

Սնճրաժեշտ է ուրեմն, որ հայ բանւու-
րի վիճակն ևս լաւանայ, որ նա կարգին
մնունդ ու բնակարան ունենայ, որ նրա
ոռնիկն աւելանայ և այն:

Սակայն առնելով՝ ի նկատի, որ այս
հարցը ընդհանուր հարց է, թէկուզ մեր
փոքրիկ կովկասում, և նրա լիակատար ու
բաւարար լուծումը այս կամ այն ազգու-
թեան պատկանող բանւորութեան, ևս ա-
ռաւել սակաւաթիւ հայ բանւորութեան
միջոցաւ, զլուխ գալ չէ կարող, ուստի,
իմ համեստ կարծիքով, հայ բանւորութեան
համար ոչ մի հաշիւ չկար՝ բանւորական
շարժմանը պարագուխ հանդիսանալ: Նա
մանաւանդ որ 1903 թւականից սկսեալ՝
նա մի քանի անգամ տեսաւ թէ՝ ինչպէս
իւր բանւորակից այլ ազգին՝ նեղ ըովէում
կամ փախչում է, կամ յետ է մնում: Եւ
միւս կողմից՝ թէ ինչպէս կառավարութեան
զինուրը՝ իւր ազգակից ու հաւատակից
բանւորին չտեսնել ձևացնելով, իւր տինը
հայ բանւորի կրծքին է դէմ տալիս շարու-
նակ և առաւելապէս նրան տանում բան-
տարկում, յետոյ աքսորում:

Խ6.

Կրկնում եմ այս ամենը՝ ի նկատի առ-
նելով՝ հայ բանւորը Բագւայ բանւորական
շարժումների մէջ ներգործական դեր չպիտի
խաղար, — գոնէ դեկավար և առաջնորդ Հը-
պիտի դառնար:

Մի այսպիսի վարմունք նրա կողմից
ոչ ստորութիւն կր լինէր և ոչ էլ դաւա-
ճանումն ընկերներին, այլ կենցաղային
իմաստութիւն, առանց որոյ այս
պարզ իմաստութիւն, առանց որոյ պահեն
սոսկալի ժամանակներում գլուխ պահեն
անկարելի է լինում:

Եւ Բագւայ հայ բանւորութիւնը այդ
իմաստութիւնը կունենար՝ եթէ նրան իւր
խելքին, իւր բազգին, իւր փորձառութեանը
թողնէին:

Խ9.

Դժբաղդաբար հայ բանւորութեան
խելքից հանեցին, ոսկի սարեր խոստանա-
լով նրան մոլորեցրին. ընդհանուր բանւու-
րական հարցից՝ հայ բանւորութեան հարց
շինեցին, այլազան ծաղիկներից հիւսած
խոշոր փնջից միատեսակ ծաղիկները ջո-
կելով՝ մի յատուկ փնջիկ կազմեցին իւր
տեսանաձնայատկութիւններովը, որոնք տես-
նողների աչքերին ընկնելով՝ իրանց գունե-
ղութեամբ մէկի աչքն են ծակում, միւսի
դութեամբ մէկի աչքն են ծակում, երրորդի՝ նախանձը
ախորժակը զրգուում, երրորդի՝ նախանձը

լարում, չորրորդի՝ ատելութիւնը բորբոքում և այս:

Եւ հայ բանւորութեան խելքից համոզ, նրան մոլորեցնողը ոչ այլ ոք էր, եթէ ոչ նոյն ցուցամոլ, մնապահծ «Դաշնակցութիւնը», նրա «արհեստակցական միութիւնները», նրա վարձկան և թութակաբան ճառախօսները:

Wk.

Երբ այդ միութիւնները, երբ այդ գործադրուները կազմւում են լոկ տնտեսական հիմունքների վրայ, — այդ տեղ գեռէլի միտք կայ, այդ դէպքում բանւորը, թէկուզ ժամանակաւոր, թէկուզ առ երեւոյթս, մի քանի շահի, ոռութիւնի օգուտ ունի: Բայց երբ նրանք քաղաքական հիմունքների վրայ են կազմում, — այստեղ արդէն «Դաշնակցութեան» գործունէութիւնը՝ հայ բանւորութեան նկատմամբ՝ միանգամայն կորստաբեր է լինելու եթէ ոչ այսօր՝ անշուշտ վաղը, եթէ ոչ վաղը՝ անշուշտ միւս օր: — Որովհետև այն սումբուրները, ինչով որ «Դաշնակցութիւնը» ճակատն ի քիրայ աշխատում է հայ միամիտ բանւորի վլուխը լեցնել և նրա վրայ՝ ինչպէս մի հօտի վրայ նայելով՝ ամենայն արեւստականութեամբ, յաճախակի նա և բոնութեամբ, նրան դէպ ՚ի պղպատեայ խցանների աքացումն ու խորտակումն է մղում, — մի օր անշուշտ, — ասում

եմ, — հայ բանւորի գլուխը այդ խթաններից պիտի ջախջախվի, ըստ օրինակի զըժը բաղդ գուրիխացիներին։ Մի օր անշուշտ հայ բանւորութիւնը նաւթային շրջանի հանրերից և գործարաններից պիտի վտարվի, հեռացնեի։

Եւ կը վտարւի թերևս ոչ այսքան կտուավարութեան, ոստիկանութեան անմիջական կարգադրութեամբ, որքան ոռւս, վրացի և թուրք բանւորութեան յայտնի կամ գաղտնի պահանջմամբ կամ ինտրիգներով։ Իսկ եթէ այդ էլ չեղաւ, — այն ժամանակ, փառք Ալլահին, թուրք՝ պլիւս ոռւս խուժանը՝ հօ կայ ու կայ։

bL

Դեռ ևս երկար չեմ ուզում խօսել այն
մասին, որ «Դաշնակցականներն», — կարծես
իշխան Գալիցինի ցանկութեամբն ու նպա-
տակաւը ներշնչւած, — իրանց կողմից ևս
շարունակ աշխատում, նպաստում են, որ-
պէս զի նաւթային շրջանից հայ յայտնի
նաւթագործներն, յայտնի արդիւնաբերող-
ներն՝ որքան կարելի է փութանակի՝ իրանց
փասա-փուսէն հաւաքեն, հրապարակից
հեռանան և նրանց գործառնութիւնները
այլագիների ձեռքն անցնեն՝ ի փառս և
ի պայծառութիւն հայկական անմտու-
թեան, և դաշնակցական ցուցամոլութեան:
Յօդւածներիցս մէկում ես տսել էի,
որ այժմ Բագւում միմիայն 7000 հայ

բանւոր կայ, որոնք մի քանի հայ նաւթագործների գործերումն են բացառապէս:

Արդ՝ երբ այդ գործարաններն ու հանըերն ևս ծախւեցան կամ եւրոպացիներին կապալով տրւեցան և կամ հայ կառավարչների ու այլ մասնագէտների պաշտօնները ուսւաների և եւրոպացիների յանձնւեցան, — այն ժամանակ նաւթային շրջանում կարող է արդեօք մի հատիկ հայ բանւոր մնալ: Ի հարկէ ոչ:

Խթ.

Այս հանգամանքը գուցէ բանւորութեանը համար ձեռնոտու կը լինի: — Բայց արդեօք «Դաշնակցութեան» իրան համար էլ ձեռնոտու կը լինի, որ հայ նաւթագործներն ու հայ բանւորներն այսպէս կամ այնպէս նաւթային հրապարակից հեռանան կամ հեռացնեն:

Այն ժամանակ «Դաշնակցութեան» կմնդրոնական կօմիտետներն ու ենթակօմիտետները, նրա ուազմիկներն ու հարկահանները ումնից պիտի գանձեն այն տասնեակ հաղարաւոր ուութիներն, որ այժմ, ամեն ամիս, նաւթային շրջանում գործող հայ տարրն է միայն պարբերաբար մատակարարում «Դաշնակցութիւնը»:

ԼԳ.

Ճշմարիտ է՝ այդ միլօնի համար գումարները «Դաշնակցութիւնը» միմիայն հա-

յութեան պաշտպանութեան» գործի համար չէ ծախսում: Այլ նա և հայ բանւորութեան, այսպէս ասած, քաղաքական կրթութեանը համար, բայց բանը նրանումը է, որ այդ կրթիչներն, գոնէ մեր տեսածներն ու ճանաչածները, իրանց մետուտիքայով շատ և շատ նման են Բաֆֆունկարագրած Տէր Թօդիկին: Եւ իրանց անկարագրած արած սումբուրներով են քաղաքակրթում իրանց ունկնդիրներին:

Այս կարգացէք, օրինակի համար, Միրգարէգեանի գործարանում իրեւ թէ բանգարէգեանի կազմած միտինդինկարագրութիւնը՝ «Ալիքի» 69 Նում: Եւ գուք իսկոյն կը համոզւիք, որ «Դաշնակցութիւնը» հայ բանւորութեանը միմիայն մոլորեցնում հայ անմշակ գլխում, ինչպէս ստամոքէ, նրա անմշակ գլխում, որից նա ոչ մի սումբուրներով ամեն բան, որից նա ոչ մի սումբուրներով չստանալուց զատ, գեռ պէտք է խանգարւի, վասուի էլ:

Տողերիս գրովը Միրգարէգեանի գործարանի հայ բանւորներից շատերին ճանաչում է: Եւ ճանաչում է մօտից, իրեւ իւր ծխականներին:

Հաւատացնում եմ ձեզ, որ այդ մարդիկը, մեծ մասը Շամախւոյ և Գեօքչայ գիկը, մեծ մասը Շամախւոյ և Գեօքչայ գիկը հայ գիւղերից, սրտեղից որ է գտւառների հայ գիւղերից, սրտեղից որ է ինքը՝ գործարանատէր Միրգարէգեանը իրանց հասկացողութեամբ, իրանց կարիքներով և ցանկութիւններով՝ ոչ մի առներով և ցանկութիւններով՝ ոչ մի առներով չութիւն չունին «միտինդ բացանող դաշտութիւն չունին

Նակցական ընկերի» (աւելի պարզ ասելով՝ ամսական 50 ռ. «Դաշնակցութիւնից» ռոճիկ ստացող գիմնազիստի) և սրան ընդիմախօսութակ-գեմական հայ սօցիալ-գեմականի խօսած ճառերի և դրանց «փոխադարձ համաձայնութեամբ» կայացրած «ոչզօլիւցիայի» հետ:

Եւ եթէ այդ բանւորները իրանց բան
ու գործը թողած խմբւել են միասին և
երկար ժամերով «լսելով լսել են և չեն
լսել», — զբա համար նրանք ունեցել են եր-
կու պատճառ:

Առաջինը այն է, որ նրանք կարծել են
և կարծում են, որ դրանից իրանց ոտքի
վրայ մի բան կաւելանայ: Եւ երկրորդ՝
որովհետև բանւորները գիտեն, որ միտինք
կազմելն և գործադուլ հրատարակելն՝ «Դաշ-
նակցութիւնն» է կարգադրել, հրամայել:
Իսկ «Դաշնակցութեան» հրամանը չկատա-
րել, —սա միթէ կարելի բան է:

8

Բայց փորձեցէք բանւորների միջից
հեռացնել «Դաշնակցութիւնից» ոռճիկներ
ստացող մեծ և փոքր պետերին, ոազմիկ-
ներին, հարկահաւաքներին։ Սյսինքն թո-
ղէք, որ միտինզը կազմւած լինի միմիայն
բանւորական տարրից և այն ժամանակ, —
միմիայն այն ժամանակ, — կերևայ թէ
բանւորները «միաձայն» այս «ուղղովուցիան»

«Այիք»-ում:

«Դաշնակցութեան» մասին խօսքս վեր-
ջացնում եմ յարակցելով, որ եթէ նա իւր
ընթացքը չփոխի, եթէ իւր գոյնն ու կեր-
պարանքը չպարղի,—ահա ինչ հետեանք
առաջ կուգայ նրա գործունէութիւնից:

«Դաշնակցականների մէջ զիտակցութիւն կը զարթի հետզհետէ: Եւ նրանց մէջ խիստ ընդհարութիւններ տեղի կունենան: Հայ հասարակութիւնը «Դաշնակցութիւնից» միանգամայն երես կը դարձնէ: Դաշնակցութիւնից»

իսկ եթէ, գժբաղդաբար, «Դաշնապյութիւնը» իւր ծաւալը աւելի ընդարձակեց և իւր լէյպ-օրգանի «Ալիքի» պրօվակատօրական ուղղութեան ազգեցութեան տակ՝ պահպանողական հայ ժողովուրդը՝ յեղափոխական տարր կը դառնայ, — այդ հօքիւրօկրատիայի ցարդ որոնած՝ բայց չըգտածը կը լինի: Եւ ահա այն ժամանակ՝ իւր թնդանօթներով և գնդակացիրներով՝ ուրախութիւնիցը բեխերը ոլորելով՝ առաջ կուգայ այդ բիւրօկրատիան, — նա որի գէմ «Ալիքը» խօսքերով թէպէտ և կոիւ է մըդում, բայց զործով իսկապէս նրա հացին կարագ է քսում:

կարագ է քսում։
Զեմ ասում զիտութեամբ, ոչ քաւ
լիցի, այլ այն պարզամտութեամբ, որով
որ միևնույն «Ալիքը»-ը ամիսներ առաջ՝
պարծենում էր թէ՝ գերմանիայի ոստիկա-
նութեանը թէ մինիստրութեանը համոզել

է, որ «Դաշնակցութեան» գործունէութեան մէջ Տաճկա-հայաստանում ոռւս դիւանագիտութիւնը ոչ մի առնչութիւն չունի; Եւ կամ թէ՝ «Ալիքի» զեկավարները Փարիզում պայմանակցել են, — չեմ յիշում ում հետ, — որ Օսմանցին իրաւունք չպիտի ունենայ՝ Զէյթունի մէջ նոր զօրք մըսցներու

σU.

ՄԵՆՔ գիտենք, որ երբ մեր հասարակական եկեղեցական պաշտօնեաների թիւնը ու տեսակը քիչ էր, հայ ժողովուրդը քւէատուփին մօտենում էր անզիտակցօրէն և ազգեցիկ մարդկանց ձնշման տակ:

Այժմ՝ երբ այդ գործիչների թէ թիւն
է աւելացել և թէ աեսակը՝ ոչ ընտրող ժո-
ղովրդի գիտակցութիւնն է աւելացել և ոչ
էլ ճնշումը վերացել, կամ գոնէ պակա-
սել:

Ընդ հակառակը՝ շնորհիւ մեր այժմեան
կուսակցութիւնների, ևս առաւել «Դաշ-
նակցութեան» ձնշումը, արւեստականու-
թիւնը, ուղղակի կամ անուղղակի բռնու-
թիւնը՝ կատարելագործւել, սիստեմի տակ
է մտել, այն էլ,—մեղայ, մեղայ.—յանուն
ազատամտութեան:—Ես գոնէ ուրիշ ոչ մի
քան չեմ կարող ընդունել, քան ձնշում,
բռնութիւն՝ «Դաշնակցութեան» գործա-
դրած միջոցներից թէկուզ ամենից անմեղ
միջոցը, — գունաւոր թղթերով իրանց թեկ-

Նածուների անուններն նախօրօք հրատա-
րակելի:

σφ.

Եւ որովհետև մի ամբողջ ժողովուրդ
գիտակցութեան բերելու, նրան անկախ,
ազատ հայեացքների վարժեցնելու համար,
շատ կամ քիչ ժամանակ է հարկաւոր,—
ուստի որ և է ընտրական գործի ձեռնար-
կելուց առաջ գոնէ՝ անհրաժեշտ է ժողո-
վրդին գործի էութեանը հետ ծանօթա-
ցնել լրագրական յօդւածներով, քարոզնե-
րով, դասախոսութիւններով, գրքոյկներով
և այլն:

Այս ամէնը անհրաժեշտ է նա մանաւանդ այն ժամանակ, երբ հրապարակի վրայ գրած հարցը անմշակ է, հումեփ և հապճէպ, որպիսին է օգոստոսի 15-ին կայանալի կենդրոնական ժողովը, որը կայացնելու կամ չկայացնելու համար, իմ կարծիքով, ի զուր այսպան խօսում և զըռւում է մեր մէջ։ Որովհետև նախ՝ «հարկ է գալ գայթակղութեան»։ Եւ երկրորդ՝ այդ ժողովը ոչ մի լուրջ էական, հիմնական բան չի կարող վճռել։ Եւ եթէ վճռեց, բնաւ չի կարող գործադրել։ Զարմանաւով գարմանալ պէտք է թէ ինչո՞ւ մարդիկ այն ամենահասարակ բանը չեն ուղում հասկանար, որ երբ մեզ աիրող տէրութեան մէջ այս կամ այն հիմնական, արմատական օրէնքը չկայ, մեզ մօտ և չէ կարող

լինելու եւ եթէ արւեստականօրէն, խելքներիս զօռ տալով արինք, կը տուժենք: -ինչ և իցէ:

σφ.

Յօդւածներից, դասախոսութիւններից
և այլն՝ անկախ անհրաժեշտ է նաև ընդհա-
նուր ծխականների և ընտրութիւններին
մասնակցելու իրաւասու ծխականների
թիւր ճշգել և նրանց անւանական մանրա-
մասն մայր ցուցակները ունենալ մէն մի
եկեղեցւոյ մէջ, մէն մի եկեղ. ծխական հո-
գաբարձութեան գործերի մէջ, պարտաւո-
րելով քահանաներին ծխականների թւերի
մէջ եղած փոփոխութիւնները, — ծնունդը և
մահը, — ճշտութեամբ նշանակեն ամէն
անգամ:

Դարձեալ՝ անհրաժեշտ է ընտրութեան
ձեր, տեխնիկան մշակել, կանոնաւորել և
միաձև հրահանգ սահմանել՝ երբէք շեղում-
ներ չթոյցարելով ում և իցէ կողմից:
Առանց ոռնէ.

Առաջարկելով ուժ և իցէ կողմից:
Առանց գոնէ այս տարրական պայման-
ներին կատարւած ընտրութիւնները՝ բաց
՚ի այն, որ ժողովրդին, գործին օգուտ չեն
բերել, այլ նաև անակնունելի վնասներ
կարտադրեն:

ση.

Երբէք չպիտի մոռանանք, որ մեր ներքին գործերի, առաւել ևս նրանցից գիշաւորների, տնօրէնութեան ժամանակ մենք

լի ու լի ազատութիւն չենք վայելում, իսկ
եթէ վայելենք եւ, — դա լինում է խափու-
սիկ, առ երևոյթս միմիայն։ Դա էլ այն
պարզ պատճառաւ, որ մեր գործերով՝ մե-
զանից աւելի երբեմն մեզ տիրող իշխանու-
թիւնն է լինում շահագրգուած։

Փաստերը շատ են թէ անցեալում և
թէ ներկայումս Վերցնենք, օրինակի հա-
մար, մեր կաթուղիկոսական ընտրութիւն-
ներն, թէկուզ նրանցից ամենավերջինը, —
ամենից փառաւորը, ամենից կանոնաւորը,
իսկապէս համազգայինը, որի ժողովը ընտ-
րեց այժմեան Վեհափառին. Սակայն Խրի-
մեան Հայրիկը ընտրւած էր տակաւին իւր
նախորդի կենդանութեան ժամանակ:

Ապարագութեան կամ Տաճարի համապատասխան կառավարութեան թեկնածուներն էին և ընտրւեցան ճիշտ այն ձևով, ինչ որ նախօրօք ծրագրուած էր:

իսկ եթէ հայ ժողովուրդը և նրա գրական գործիչները՝ Մակարի վրայ ուրիշ աշքով էին նայում և Խրիստեան Հայոթիկի վրայ՝ ուրիշ աշքով, — դրա պատճառը այնէ, որ նախ քան Մակարի ընտրւելը՝ ժողովրդի մէջ ձեռքից ձեռք պտտւում էր Բարօն Նիկոլայի, — Կովկ. փոխարքայութեան գլխ. կառավ. պետի, — զեկուցագիրը, որով էջմիածնի կաթուղիկոսացուն անշուշտ ոււսահայ եպիսկոպոսներից պէտք է լինէր։ Եւ եղաւ Մակարը, — Մինչդեռ այդ ծրագրի

փոխւած լինելուն և ըստ առաջնոյն, կաթողիկոսացուն Տաճկահայ եպիսկոպոսներից ընտրել տալու մասին եղած գեկուցագրից՝ ցարդ գեռ ոչ մի տեղեկութիւն չունի հայ ժողովուրդը:

στ.

Մեր օրերի պատմական փաստերից՝
այս մէկ կտորը առաջ բերելով այստեղ՝ ես
ոչ մի այլ նպատակ չունեմ, բայց եթէ
այն, որ ցոյց տամ մեր ազգասէրներին,
մեր գործիչներին և մասնաւորապէս մեր
«Թաշնակցութեանը», որ թող նրանք այն-
քան էլ չպարծենան իրանց ինքնուրոյնու-
թեամբ, իրանց խիզախ գործողութիւննե-
րով, իրանց ազատամտութեամբ, իրանց
ժողովրդավարական ծրագիրներով ու թու-
ցիկներով:

Այդ ամենը դեռ ապացոյց չեն, ոչ էլ գրաւական, որ «Դաշնակցութեան» գործունէութեամբ և եթի հայ ժողովուրդը կարող է փրկւել, եւ թէ՝ արտաքոյ «Դաշնակցութեան» շիք փրկութիւն հայ առողի:

Գրիգոր Արծրունու և նրա կուսակից-
ների զգացմունքների սբռութեան վրայ ոչ
ոք չէր կատկածում նրանց կենդանութեան
ժամանակ։ Նրանց մտաւոր տհասութիւնը,
նրանց քաղաքական խակութիւնն էր մի-
մրայն, որ մարդիկ դատապարտում էին։
Մի և նոյն վիճակին ենթակայ են այժմ
«Դաշնակցութիւնը» և նրա կուսակիցները։

—Երկուսի էլ զործունէութեան եղանակը
էապէս նոյնն է։ Նոյնն է լինելու, հարկաւ,
և հետևանքը։

Այս երկու գործիչների մէջ եթէ ազգի
ընկնող տարբերութիւն կայ, — դա այն է,
որ Արծրունին և նրա կուսակիցները՝ ինչ-
պէս իրանց գործունէութեան, Կոյնպէս ի-
րանց անձի, իրանց ստամոքսի նկատմամբ,
կատարեալ իդէալիստ էին: — Նիւթապէս նը-
րանց անձը միշտ տուժում էր, երբեմն նը-
րանք պատառ հացին կարօտ էին մնում:
Մինչդեռ «Դաշնակցականները», — մասնա-
ւորապէս նրանց ղեկավարները՝ իրանց ան-
ձի ու ստամոքսի նկատմամբ, շատ ուշալ
հողի վրայ են կանգնած: Եւ «հայութեան
պաշտպանութեան» մասին խորհելիս՝ իրանց
անձն ևս չեն մոռանում: — Այսպէս գոնէ
ասում են շարունակ շար լեզուները: Ինչ
որ ինձ է վերաբերում, — այդ մասին՝ իմ
հայեացքը ահա ինչ է:

02

Հայկական առաջն աստված է՝ «Փեթակին խառնողը՝ մատները մեղրոտում է»:
Ս. Գիրքն էլ պատւիրում է՝ «Եզի ցոռվը
(գունչը) կալի միջին մի կապել»:

(դուռչը) զալլ մ' ու Ամէն մի հասարակական գործիշ իրաւունք ունի այդ հասարակութեան հաշւով ապրելու: Եւ եթէ իւր խիղճը թոյլ է տալիս՝ նաև իւր ապագան ապահովելու: Կարևոր բանը դա չէ. այլ ամենակարևորը

այն է, որ հասարակութեան նւիրւած անձը,
կուսակցութիւնը, հիմնարկութիւնը նախ և
առաջ՝ ունենայ իւր դաւանանքը, իւր ծրա-
գիրը, կանոնադրութիւնը և գիտակցօրէն
ու հաւատարմութեամբ իրագործէ նրան,
առանց շեղւելու, առանց տատանւելու և
առանց այլ և այլ տէրանց ծառայելու:
Հակառակ դէպքում՝ այն հասարակութիւ-
նը, որի բաղզը ձեր ձեռքին խաղալիք էք
շինել՝ վերջ ՚ի վերջոյ, գիտակցութեան
կուգայ և տիրական ձայնով ձեր երեսն
՚ի վեր կը գոչէ՝ «աստ կացցես, և ընդ այն
մի անցանիցես, այլ անդրէն ՚ի քեզ փըշ-
րեսցին ալիք քո».

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ

Եկեղեցական ծէսերի, արարողութիւն-
ների մէջ այս և այն բարեփոխութիւնը
մտցնելու, սրբազնագործ և ստորին պաշ-
տօնեաների նիւթական վիճակը բարելաւե-
լու, այրիացած քահանաների նորից ամուս-
նանալու հարցերով՝ վերջերումս մեր մա-
մուլը շատ զբաղւեց և դեռ զբաղւում է
աւելի քան թէ ժամանակն էր, քան թէ
պէտք էր և անհրաժեշտ:

՚ի վերայ այսր ամենայնի, մենք կար-
ծում ենք, որ յիշեալ հարցերից ոչ մէկն
էլ, իւր ամեն մասով և պարտուպատշաճ
ուսումնասիրութեամբ, իրական և գործ-
նական ապացոյցներով՝ տակաւին լուսա-

բանւած չէ: Այլ ամեն մի գրողի՝ գրեթէ
ամեն մի պարբերութիւնից արտացոլում
է միմիայն գրողի իրան միակողմանի հաս-
կացողութիւնն ու հարցի ըմբռնումը, իւր
մասնակի փորձառութիւնը, իւր անձնական
ցանկութիւնը, երբեմն էլ. — թող փակագծի
մէջ ասենք, — իւր անձնական քմահաճոյքը,
կիրքը:

Մինչդեռ վերոյիշեալ հարցերը՝ այն-
քան էլ թեթև հարցեր չեն, ինչպէս սովո-
րաբար կարծւում է մեր մէջ, այլ նրան-
ցից ամեն մէկը, իբրև հասարակական հարց,
անմիջական, սերտ կապ ունի ժողովրդի, —
հայ մասսայի աշխարհահայեացքների,
նրանում միս և արիւն դարձած այս և այն
գաղափարի հետ, որին վայր ՚ի վերոյ կեր-
պով ձեռը տալուց՝ կարող է փոքր ՚ի մեծ
պով ձեռը տալուց՝ կարող է փոքր ՚ի մեծ
փոթորիկ ծագել բոլորովին անակնունելի
կերպով նոյն իսկ ՚ի շնորհս յայտնի կամ
գաղտնի գրգոչութեան — պրօվակացիայի:
Գլուխ նիկոլ պատրիարքը նախատեսնէր,

Եթէ նիկոլ պատրիարքը նախատեսնէր,
որ ս. Գրքի տառամսաներն ուղղելը՝ ա-
հագին աղանդաւորութիւն առաջ պէտք է
հարկէ Ռուսաստանում, ՚ի հարկէ նա իւր
բարի ցանկութեան իրագործումը՝ աւելի
պատեհ ժամանակի կը թողնէր:

Մեր ծէսերի և արարողութիւնների
մէջ էլ, արդարէ, կան վերացնելի շատ բա-
նակ բայց թող զբանք իրանք իրանց վե-
ներ. բայց թող զբանք իրանք իրանց վե-
նանան: Եւ անշուշտ կը վերանան: Մենք
բանանց բոնազբօսիկ կերպով ձեռը չտանք:
նրանց բոնազբօսիկ կերպով ձեռը չտանք:

Քրիստոնէութիւնը, հայ ազգը, լուսաւ-
ուորչական կրօնը, գիտութիւնը, լուսաւո-
րութիւնը, ազգի բարեբաղդութիւնը,—ինչ
ուզում էք վերցրէք, —մազի չափ չեն տու-
ժիլ, եթէ որ, օրինակի համար, փոխանակ
երեխան ջրի մէջ կոխելու և ըստ Քրիստո-
սի «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սըր-
բոյ» ասելու և մկրտութեան խորհուրդը
վերջացած համարելու*), քահանան Մաշ-
տոցում սահմանած աղօթքներն ևս կար-
դայ, երբ այդ աղօթքների, այդ հայրապե-
տագիր կարգերի սիրահարների թիւը չա-
փազանց շատ է մեր մէջ:

Բայց և այսպէս եթէ անհրաժեշտ է
հէսց այժմ, մեր այս տագնապալից և ար-
հաւրալից օրերում, յիշեալ հարցերը մեր
մէջ արծարծւեն և որ և է գործնական ար-
դիւնք ունենան,—արդեօք լաւ չէր լինիլ,
որ այդ առթիւ մի յանձնաժողով կազմւէր
մեզանում և նրան յանձնւէր ինչպէս այդ
հարցերի մանրամասն լուրջ ուսումնափ-
րութիւնը և քննութիւնը, նոյնպէս և ցան-
կալի բարեփոխութիւնների ուրագծումը,
մշակումը:

Մամուլը, իւր կողմից, ի հարկէ կա-
ջակցէր յանձնաժողովին՝ հնար եղածին
չափ, արդիւնաւոր կացուցանելու իւր աշ-
խատանքը:

ԾԽԱԿԱՆ ԺՄՂՈՎՆԵՐԻ ՇՈՒՐԶԸ

Լըազրական թղթակցութիւններից, տեղեկութիւններից, պաշտօնական ծանուցումներից և կենդրոնական ապագայ ժողովին տրւած յանձնարարութիւններից, — մանդատներից՝ երկում է, որ շատ տեղերում ժողովուրդը ցանկութիւն է յայտնում դպրոցների պահպանութեան համար՝ ծխական տուրք սահմանել: Տեղ-տեղ արդէն սահմանած էլ է:

Սակայն երբ հերթը խօսքից գալիս է գործի՝ ժողովրդից անկութիւնը թուլանում, չքանում է, նոյն իոկ Բագրի նման քաղաքում, որոյ եկ.-ծխ. հոգաբարձութեան պաշտօնական յայտարարութիւնները «Եակ» օրագրում թէ սեպտեմբերին գպրոց-ները չեն բացւիլ, եթէ ծխական տուրքը չվճարէ հասարակութիւնը, շատ անմիտ-թար տպաւորութիւն է թողնում ընթեր-ցողի վրայ:

6

Սկզբունքով միանգամայն համակիր
լինելով ծխական տուրքին՝ մենք այսուա-
մենայնիւ, ամիսներ առաջ, «Հովհան»-ի մէջ
պնդում էինք և հիմի էլ պնդում ենք, որ
ծխական տուրքի վրայ յոյս դնելով՝ կարե-
լի չէ գպրցներ բանալ, այն ևս ընդարձակ

*.) Կարծեօք «Մշակի, թղթակիցն»:

ծաւալով։ Թէ՛ առ հասարակ հոգաբարձութիւնների կողմից ամենուրեք՝ մեծ սխալ կը լինի դպրոցների պահպանութեան նախկին եղանակը թողնելով՝ մէկ զլուխ նոր եղանակ սահմանել։ Թէ՛ երբէք չպէտք է շահնակ ծխական ժողովներում լուած առատ-առատ խոստումներից։

Դան իրականութիւնը շատ շուտով
եկաւ արդարացնել այն ռամկական առածը
թէ՝ «փլաւը խօսքերով չի եփւիլ, հարկա-
ւոր է իւղ և բրինձ»:

— Շատ լւա, բայց հապա ինչի՞ ժողով-
ներում մարդիկ ամեն տեսակ պատրաստա-
կամութիւն ցոյց էին տալիս հոգաբարձու-
ներին, խոստանում, յուսադրում էին նը-
րանց։ Այս ցաւալի հակասական վարմուն-
քի պատճառը ի՞նչ է արդեօք։

9

Երբ ծխական ժողով է գումարւում՝
մարդիկ գալիս են իրանց առաջարկւած
հարցի մասին՝ սառնասրտութեամբ խոր-
հըրդակցելու, միմեանց հետ մտքեր փոխա-
նակելու, որպէս զի այս կամ այն գործ-
նական որոշումը կայացնելով անցկենան
գնան իրանց բան ու գործին:

Բայց հէնց որ ժողովները բացւում են՝
առաջ են գալիս մի շարք ճառախօսներ։ Եւ
խօսում են հա, խօսում երկար, շատ եր-
կար։ Ուր էր թէ խօսածներն էլ մի բանի

Նման լինէր, ժողովի առաջ դրւած խնդիրը
լուսաբանէր, այս կամ այն գործնական
միջոցը առաջարկէր։ Քաւ լիցի, ոչ այս և
ոչ էլ այն։

Այլ... Մարքսի տէօրիա, էնգէլսի տեսութիւն, Դարվինի սիստեմ, Հէգէլի փիլիսոփայութիւն, աօցիալ-դեմօկրատութիւն, բուրժուականութիւն, կղերականութիւն, հոգի համայնացումն և այլն,—մի խօսքով իսկ և իսկ Բաբելոնիան խառնակութիւն:

f.

Այն ժողովականները, որոնք ճառա-
խօսներից եթէ ոչ առաւել՝ գոնէ նրանցից
ոչ պակաս ծանօթ են վերոյիշեալ հեղինա-
կաւորութիւնների և հարցերի հետ՝ հետըզ-
հետէ թողնում, հեռանում են ժողովսերից:
Հեռանում են նմանապէս ժողովականների
և այն ստւար բազմութիւնը, որ ճառախօ-
սութիւններով չի հետաքրքրուում, սովոր-
չէ, որ աւելի գործնականութեամբ է անց-
կացրել իւր օրերը, քան վերացական տե-
սութիւններով, որ իրան հասկացածի չափ
իւր պարտքը սրբութեամբ կատարում է
առանց խօսելու, առանց աղաղակելու և
որի նպաստներովն ու տուրքերովն է առա-
ւելապէս, որ պահպանւում են մեր եկեղ.՝
հասարակական հիմնարկութիւնները: — Այս,
դրանք էլ ձանձրացած, զգւած հեռանում
են և էլ ժողովի չեն գալիս:

Մէջտեղում մնում են ճառախօսելու
սէր և ընդունակութիւն ունեցողները և
նրանց ծափահարողները, որոնք և, վերջ
ի վերջոյ, այնպիսի որոշումներ են կայա-
ցնում, որ գուցէ իրանց տեսակէտով շատ
լաւ է, բայց ծխականների ամենամեծագոյն
մասի ցանկութեան, հասկացողութեան հա-
կառակ է: Վերջապէս հակառակ, անհամա-
պատասխան է նրանց թէկուզ լոկ գրպա-
նին, գրպան, որ պ. պ. ճառախօսները
կամ իսպառ չեն ունենում և կամ այդպի-
սի դէպքերում, սովորաբար, պինդ փակ-
ւած է լինում:

Ե.

Սնշուշտ այսպիսի ժողովներումն են
կայացել մեր դպրոցների պահպանութեան
համար ծխական տուրքի սահմանումը, որ
գործնականութեան մէջ մեծամեծ արգելը-
ների է հանդիպում այժմ: Եւ, մեր կարծի-
քով, միշտ էլ կը հանդիպի՝ եթէ որ մեր
ծխական ժողովները լեզւագարութեան,
իմաստականութեան ասպարէզ լինելուց
չեն դադարի և այսպէս կամ այնպէս կը
շարունակին դարձեալ ճնշելու, խեղդելու
մեծամանութեան ձայնը, կարծիքը, ցան-
կութիւնը:

Մետաղի միւս կողմը շուռ տանք:

Զ.

Ոչ մի խելքը գլխին մարդ չէ կարող
ուրանալ, որ երիտասարդ սերունդի՝ հա-
սարակական այս ու այն գործերում՝ ունի
այս ու այն առաւելութիւնը, և այս ու
այն ասպարիզում իւր անհրաժեշտութիւ-
նը, նախապատռութիւնը: Ուստի և այդ-
պիսի դէպքերում հասարակութիւնը պար-
պատառ է մատնացոյց լինել ըստրել երի-
տասարդ սերնդի ներկայացուցիչներին ա-
ռաւելապէս, որպէս զի գործը լաւ առաջ-
գնայ, ցանկալի արդիւնք արտադրէ:

Է.

անշնչացրած՝ նոյն իսկ մաս-
նագէտ ուսուցիչը կարող չէ, օրինակի հա-
համար, օրական 3, 4, 5 ժամ պարապել
բազմաթիւ մանուկ և պատանիների հետ:
Մինչդեռ թարմոյժ՝ նոյն իսկ ոչ մասնա-
գէտ ուսուցիչը՝ աւելի օգտակար կը լինի:
50—60 տարին անցկացրած հերոս
գնդապետը, զօրապետը՝ կարող չէ ոյլ ևս
20—25 վերստ հետիւստ ընթանալ իւր զի-
նուորների հետ: Կարող չէ բերդի պարիսպն
ի վեր մաքլցել:

Հասակն առած կնոջ աչքերը՝ այլ ևս
չեն զօրում ասղնեգործութեան ծոպերը,
ծալքերն ու հիւսկէնները՝ առաջւայ նման՝
յարդարել և յօրինել, և այլն և այլն:

Ը.

Ոչ մի խելքը զլիախն մարդ կարող չէ
ուրանալ, որ հին սերնդի մարդիկ հասա-
րակական այս ու այն գործերում՝ ունին
իրանց առաւելութիւնը, այս և այն աս-
պարէզում իրանց անհրաժեշտութիւնը,
սախապատութիւնը։ Ուստի և այդպիսի
դէպքերում հասարակութիւնը պարտաւոր
է մատնացոյց լինել, ընտրել հին սերնդի
սերկայացուցիչներին առաւելապէս, որպէս
զի գործը լաւ առաջ գնայ և ցանկալի ար-
դիւնք արտադրէ։

Թ.

Հինաւուրց, ծեր, նոյն իսկ անյայտ
բժիշկը՝ աւելի քիչ մարդ է սպանում,
քան նոր սկսնակ՝ նոյն իսկ յայտնի բժշկա-
պետը։

Թշնամու ամրոցներն ու մարտկոցնե-
րը խլում, տիրում են երիտասարդ զինւոր-
ները՝ սակայն վրաւման ծրագրողը, ճա-
կատամարտի ղեկավարողը՝ միշտ ծեր, փոր-
ձառու զինւորները, զօրապետներն են լի-
նում։

Դպրոցները, — տարրականից սկսեալ
մինչև բարձրագոյնները, — անհրաժեշտ են:
Նրանցում սովորողներից, նրանց դասըն-
թացը աւարտողներից՝ հասարակութիւնը
պէտք է օգտւի։

Կեանքը, մարդկային կենցաղավարու-
թիւնը նոյնպէս ունի իւր տեսակ տեսակ
դպրոցները, որտեղ սովորողներից, որոց
դասընթացը աւարտողներից՝ հասարակու-
թիւնը նոյնպէս պէտք է օգտւի։

— Ո՞ւմ և ինչի՞ համար են՝ նոյն իսկ
ծծկերներին յայտնի այս մտքերը։ Հայ
ընտրող ժողովրդի համար՝ կասեմ ես՝ նը-
րան, որ թէև խելք ունի, սակայն իւր խել-
քովը չէ ընթանում, այլ ստրկամ տութեամբ,
թէ անտարբերութեամբ, թէ հաճոյամոլու-
թեամբ արդեօք՝ խաղալիք է դարձել այս
ու այն անհատի կամ խմբակի ձեռին։ Եւ
այսպիսով իւր իսկ սեպհական գործերը՝
փոխանակ շինելու՝ քանդում է, փոխանակ
յառաջանալու՝ յետ-յետ է գնում։

Միտքս պարզեմ։

Փ.

Մեր դպրոցները՝ թէ ծխականները և
թէ թեմականներն ու ճեմարանը՝ մինչև
այսօր պահպանւել են եկեղեցիների և վան-
քերի նպաստներով, ևս և ժողովրդական
տուրքերով, — թոշակադրամներով, նուիրա-
դրամներով։

Առաջին և երկրորդ կարգի արդիւնք-
ներով ուսանող և ուսանողուհիների, այն
է ձրիավարժների, թիւը, ճիշտ է անհամե-
մատ շատ է եղել քան թոշակատուների, —
այնուամենայնիւ՝ առանց թոշակադրամնե-
րի անկարելի էր նոյնքան դպրոցներ պա-
րի անկարելի էր նոյնքան դպրոցներ

հել, որքան որ պահւում էին՝ նախ քան
դպրոցների փակումը:

ԺԱ.

Այժմ, երբ ընդհանուր ծխական տուր-
քի խնդիրն է առաջ գալիս, որ պէտք է
հայթհայթւի բոլոր ծխականներից, որ, որ-
քան էլ որ գժւարութիւնների է հանդի-
պում առ այժմ, բայց,—եթէ մեր գժբաղդ
դպրոցների կոյր բազդը էլի շուռ չտեց,—
ժամանակին անշուշտ պիտի իրականանայ,
—այժմ,—ասում եմ ես,—աւելի քան ա-
ռաջ անհրաժեշտ է, որ մեր դպրոցների հո-
գաբարձուներ ընտրւին ոչ թէ բացառա-
պէս այս կամ կուսակցութեան, դաւանան-
քի կամ գասակարգի մարդիկ, այլ հայու-
թեան ամէն մի դասակարգին և խաւին
պատկանող մարդիկ:

Որպէս զի այսպիսով ամէն մէկը իւր
շջանում կարողանայ նպաստել դպրոցնե-
րի բարոյական, մանաւանդ նիւթական շա-
հերին, կարողանայ ժողովրդականացնել
դպրոցը, հսկէ, չթոյլ տայ, որ դպրոցի գո-
յութեանը վտանգ սպառնացող մարդիկ,
մաքեր, գաղափարներ մուտք չգործեն ժո-
ղովրդի մէջ, ազգի մէջ:

Վեր առնենք թէկուղ դպրոցի լոկ նիւ-
թական կողմը:

ԺԲ.

Ինչով որ կուզէք՝ զրագ կուզամ, որ
եթէ ներախեան դպրանոցի հոգաբարձա-

կան կազմի մէջ՝ չլինէր պ. Աղէքսանդր
Մելիք-Ազարեանցը՝ հազիւ թէ դպրանոցը
կարողանար վերջին երկու տարիները իւր
գոյութիւնը պահպանել: Թէպէտ ճիշտ տե-
ղեակ չեմ, բայց հաւատում եմ, որ այդ
հայ բուրժուան կամ իրանից և կամ իւր
դասակարգի մարդիկներից փոքր և մեծ
գումարներ հայթհայթելով՝ կարողացաւ
դպրանոցի փակման առաջն առնել:

Մի և նոյն բանը պէտք է ասել և մեր
միւս դպրանոցների և ճեմարանի մասին,
ևս և վեհարանի, էջմիածնի միաբանութեան
պահպանութեան մասին: Դրանք էլ մի
կերպ պահեցին և մեր միւս բուրժուանե-
րի աջակցութեամբ:

Բայց սակայն ժամանակակից պոռօ-
տախօս մեր գործիչները՝ մեր Մելիք-Ազա-
րեանցներին ոչ միայն արհամ արում են,
ըեանցներին ոչ միայն արհամ արում են,
այլ և անւանարկում են և միանգամայն
անհիմն ու անբարեխիղ կերպով նրանց
վրայ զանազան էպիտեաներ կպցնում:

ԺԳ.

Հենց այս թերթի մէջ, ուրիշ առիթով,
ես ասել եմ, որ առանց մեր հարուստնե-
րին, առանց մեր վաճառական և հոգեսոր-
դակարգի մանակցութեանը՝ ինչպէս
դասակարգի մանակցութեանը՝ ինչպէս
հետեւ էլ չպիտի կարողացել, նմանապէս այսու-
ցարդ չենք կարողացել, նմանապէս այսու-
ցարդ չենք կարողացել: Նիմնել ու պահպանել:
Ուրեմն եթէ ուզում ենք, որ եղած

Դպրոցները կանգուն մնան և նորերը բաց-
ւին՝ հոգաբարձական կազմի մեջ անշուշտ
պէտք է, մտցնենք և հոգեորական և վա-
ճառական և բժիշկ և մանկավարժ և իրա-
ւաբան և արհեստաւոր և գործաւոր:

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՈՒՐԶԸ
Ա.

Արդէն մի տարի անցաւ այն օրից, երբ
կառավարութիւնը մեր դպրոցները մեզ վե-
րադարձեց աւելի ընդարձակ իրաւունք-
ներով, քան թէ նրանց գրաւմանից առաջ
էինք վայելում:

Անցած մի տարումը՝ մեր այն քաղաք-
ների և գիւղերի դպրոցներն և եթ վերա-
բացւեցան, որոնք որ շատ կամ քիչ պատ-
րաստի դրամ ունէին կամ դպրոցների ի-
րանց՝ և կամ տեղական եկեղեցիների ա-
նունով:

Իսկ այդպիսի միջոցից զուրկ եղած
դպրոցներն թէ քաղաքներում և թէ մա-
սաւանդ գիւղերում՝ զեռ փակ են: Եւ բա-
ցանող պաշտօնական անձն կամ հաստա-
տութիւն չկայ մէջ տեղում:

Բ.

Գալով վերաբացւած դպրոցներին՝ նր-
անք էլ անկերպարան, անորոշ դրութիւ-
նումն են խարխափում իրանց թէ ուսում-

նական և թէ առաւելապէս տնտեսական
մասերովը:

Մի տեղ ուսուցչին դասագին վճարում
են 20, մի այլ տեղ, 30, 40, 50 մինչև ան-
գամ 75 ըուբլի:

Մինչև բարեյիշատակ Մակար կաթու-
ղիկոսի հրատարակած կանոնադրութիւնը՝
ճիշտ այդպէս էր մեր ծխական դպրոցների
վիճակը, որ, ի հարկէ, գովելի չէր:

Գ.

Մեր կարծիքով՝ կառավարութիւնից
դպրոցների յետ ստանալիս՝ մենք պարտա-
կան էինք կամ Մակար կաթուղիկոսի «կա-
նոնք»-ով բացանել մեր դպրոցները մինչև
նոր կանոնադրութեան մշակելն ու հաս-
տատելն և կամ ժամանակաւոր ծրագիր
և կոպար,—ոռնկի չափ սահմանել և նրանց
բացմանը ձեռնարկել:

Մենք ոչ մէկն արինք և ոչ էլ միւ-
սը: Այլ ամէն բան թողինք հոգաբարձու-
ների հասկացողութեանն ու կամքին,

իսկ եթէ հոգաբարձուների մեծագոյն
մասը, նա մանաւանդ գաւառներում, դըպ-
րոցական գործում շատ բորիկ է,—դըպ-
րում ոչ կասկած կայ և ոչ էլ նրանց հա-
մար վիրաւորանք:

Դ.

Մեր ընտրւած և ընտրելի հոգաբար-
ձուները, շատ և շատ տեղերում, դեռ այն

պատրաստութիւնը, հմտութիւնը, նոյն
իսկ հնարաւորութիւնը չունին, որ իրանք
իրանց գլխի կարողանան դպրոցներ բաց
անել և կառավարել:

Այլ, բաց ՚ի կանոնադրութիւնից, բաց
՚ի ծրագրից, անհրաժեշտ է նաև նրանց
ուղղութիւն տւող, նրանց վրայ հակող պաշ-
տօնական անձինք կամ հաստատութիւն-
ներ: Հարկաւոր են բարձրագոյն ինստան-
ցիաներ: Հակառակ դէպքում՝ վերաբաց-
ւած դպրոցների հոգաբարձուները՝ երբ
իրանց արամադրութեան տակ եղած գու-
մարներն ծախսեն, սպառեն—կը փախչեն,
կը հրաժարեն:

Ամէն մի գործի մէջ՝ տաք տաք վրայ
ընկնողը շուտ էլ կը սառչի: Մեր դպրոց-
ների հոգաբարձուները առհասարակ ամէն
տեղ՝ շատ տաք կազմ դպրոցական գործին:
Երևոյթը իսկապէս ուրախալի պէտք է հա-
մարել: Բայց մի մոռանաք, որ ասուպները,
—մէտէօրները՝ միմիայն ըովէական փայլ
են արտադրում, այլ ոչ տեական լոյս ու
ու ջերմութիւն:

Ե.

Մենք միշտ այն կարծիքի ենք եղել,
որ մեր ծխական դպրոցների պահպանու-
թեան աղբիւները՝ պէտք է անփոփոխ
թողնել: Իսկ դպրոցների թիւը շատացնե-
լու համար՝ այնպիսի աղբիւներ որոնել և
սահմանել, որոնք այս կամ այն կերպով

կապւած են եկեղեցւոյ կամ եկեղեցական
հաստատութիւնների հետ:— Այդպիսի աղ-
բիւների մի քանիսը՝ մենք մեր կողմից
արդէն ցոյց ենք տւել «Հովիւ» ի ընթեր-
ցողներին:

Դարձեալ՝ մենք միշտ այն կարծիքի
ենք եղել, որ մեր ծխական դպրոցները
միշտ և հանապաղ եկեղեցւոյ հովանույն
տակ պէտք է գտնւին և իրրե տարրական
դպրոցներ՝ գրագիտութիւն տարածելու
նպատակին ծառայեն հայ մասսայի մէջ
գլխաւորապէս:

Եկեղեցւոյ հովանի ասելով՝ ես միմիայն
հոգևորականներին չեմ հասկանում, այլ
ծխականին,— եկեղեցւոյ աշխարհիկ անդամ-
ներին, այն է ընտրւած հոգաբարձուներին,
ճիշտ այնպէս, ինչպէս սահմանել էր բա-
րեյիշատակ Մակար կաթուղիկոսը:

Զ.

Ոչ մի դէպքում և ոչ մի հանգաման-
քում չպէտք է մեր ծխական, — և նաև թե-
մական, — դպրոցներին, այն ուղղութիւնը
տալ, ինչին որ ձգտում են մեր ազատա-
միտ կուսակցութիւններն ու գործիչները:
Դրանով մենք մեր ձեռքով կը փակենք
մեր դպրոցները:

Եկեղեցւոյ հովանույն տակ գտնելով
հոգաբարձական կազմի մէջ մի կամ երկու
ընտրովի հոգևորական ունենալով՝ մեր
դպրոցները երբէք բթացնող կամ հակաժո-
դպրոցները

Դովրդական ուղղութիւն չեն ստանալ նախ՝
նրա համար, որ մեր հոգևորականները հա-
կաժողովրդական չեն, և եթէ լինեն ոչինչ
չեն կարող անել իրանց մէկ կամ երկու
ձայնով:

Այլ բան է, եթէ որ աշխարհական հո-
գաբարձուներն ամէն ուրեք իրանց կրթու-
թեամբ և հմտութեամբ միանգամայն ան-
համապատասխան լինեն իրանց պաշտօնին:
Իսկ եթէ այդ այդպէս է, հապա էլ ինչ
խելքով միմիայն դրանց էք յանձնում դրպ-
րոցները: Գործին անպատճառա պաշտօ-
նէից՝ բաց ՚ի վնասից՝ ուրիշ ինչ կարելի է
սպասել:

Բարեբաղդաբար մենք այդ աստիճան
յուետես չենք: Եւ համոզւած ենք, որ եթէ
ընտրւած հոգաբարձուները ժողովրդի՝
մարդիկը, նրա խսկական ներկայացուցիչ-
ները լինեն, — նրանք ընտրովի հոգևորական
հոգաբարձուների հետ ձեռք ձեռքի և խելք
խելքի տւած կարող են սիրով և խաղաղու-
թեամբ՝ տարրական կրթութիւնը տարածել
ու զարգացնել մեր մէջ:

Է.

Բայց եթէ զուք ուզում էք զուտ աշ-
խարհիկ դպրոցներ ունենալ և նրանց այս
և այն ուղղութեամբ առաջ տանել, փառք
Աստուծոյ, ասպարէզը, — ասում են, — այժմ
ամէնքի համար բաց է:

Թող այս կամ հայ համայնքը, այս կամ

այն ընկերութիւնը, կուսակցութիւնը, ան-
հատը բաց անեն ինչ տիպի դպրոցներ, որ
ուզում են՝ տարրական, միջնակարգ, բարձ-
րագոյն: Եւ թող պահպանեն այն աղբիւր-
ներով, ինչով որ կարող են կամ ուզում
են, — համայնական տուրք սահմանելով, թէ
ուսման վճարներով, թէ համայնքի կողմից
գանձարանին տրւած տուրքից բաժին պա-
հանջելով և այն և այն:

Ահա թէ մեր ոամկավարական հերու-
ները, մեր ժողովրդական ասպետները և
մեր անկրօն լուսամիտները որտեղ պէտք է
մործալլեն իրանց սկզբունքները, իրանց
գործալլեն իրանց լուսամտութիւ-
քաջութիւնները և իրանց լուսամտութիւ-
նը: Այլ ոչ թէ խեղճ հոգևորականների և
հաւատացեալների (եկեղեցւոյ) կոպէկսերով
պահպանւող մեր դպրոցների գլխին:

ԿՐՈՆՈՒՄՈՅՑՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ա.

Կովկասեան Ռւսումնական Շրջանի հո-
գաբարձուն ուղարկել է օրերումս ՚ի գոր-
ծազրութիւն իրան ենթարկւած դպրոցնե-
րում՝ լուսաւորութեան նախարարի հաս-
տատած և կովկասի փոխարքայի հաւանու-
թեանը արժանացած «Առ ժամանակեայ
կանոններ», որոց համեմատ պէտք է այ-
սուհետև աւանդուի այլադաւան ազգերի

կրօնը պետութեան միջնակարգ և ստորին
դպրոցներում:

Բ.

«Առ ժամանակեայ կանոնների» տրամադրութեամբ այլաղաւան ազգեր (ուրեմն և հայերին) կրօնը պարտադիր առարկայ չէ համարւում պետական դպրոցներում: Եւ նրա աւանդելն կամ չաւանդելն՝ այսուհետև կախւած է լինելու ծնողների կամքից *), և, թերևս, նրանց առանձին և յատուկ վճարից, թէպէտ և կանոններում այդ կէտը շեշտած չէ: Այդ կանոնների հետ ընթերցողը կըծանօթանայ «Հովիւ»-ի 36 և ուլում:

Այստեղ ահա ինչ բանի վրայ ենք մենք ուզում փոքր ինչ կանգ առնել:

*) Ծանօթ. Շնորհաւորում ենք հայ ազատամիտ թերթերի տարած յաղթանակը այս հարցի առթիւ: Նատ և շատ հաւանական է, որ լուսաւորութեան նախարարը «կանոններն» խմբագրելիս՝ ի նկատի և ՚ի յարգանս է առել այն բուռն ցանկութիւնը, որ ահա մի տարուց ՚ի վեր արտայայտում էին յիշեալ թերթերը,

Գալու էջմիածնի գլուխ չեկած կենդրոնական ժողովի ցանկութեանը թէ որոշմանը՝ նա էլ կարող է իրան մխիթարւած համարել՝ տեսնելով, որ թէպէտ Հայոց կաթողիկոսը ժողովի որոշումը խարանելով՝ կրօնը պարտադիր հրատարակեց ծխական դպրոցների համար, սակայն ահա լուսաւորութեան նախարարը կանխել է ժողովի որոշումը իրագործել պետական դպրոցների հայ աշակերտաների վերաբերմամբ: Ծ. յօդ.

Չ.

Ինչպէս մինչև հիմայ, նմանապէս այսուհետև էլ կրօնը պետական դպրոցներում աւանդելու են հոգևորական անձինք, որոց մեծամասնութիւնը դրա համար հարկաւոր պատրաստութիւն չունի դժբաղդաբար:

Վերջերումս վեհ. Կաթողիկոսը կարգադրել էր, որ ներկայ 1906/07 ուսումնական տարւանից սկսեալ՝ պետական դպրոցների հայ կրօնուսոյցներն՝ ճեմարանը և թեմական դպրոցներն աւարտած քահանաները լինեն:

Բայց կարծեօք, այդ կարգադրութիւնը հէնց այդպէս էլ մնայ՝ թղթի վրայ: Պատճառը պարզ է:

Հարկաւոր թուով մենք չունենք ճեմարանաւարտ կամ դպրանոցաւարտ քահանաներ: Ուրեմն՝ ուզենք չուզենք՝ պէտք է եղածներով բաւականանանք *):

Դ.

Ինչպէս մինչև հիմայ, նմանապէս այսուհետև էլ, այլաղաւան ազգերի կրօնու-

*) Ճիշտ է, որ մենք չունենք բաւական թուով ճեմարանաւարտ ու դպրանոցաւարտ քահանաներ, որոնք ստանձնէին կրօնի դասաւանդութիւնը պետութիւնը գլուխ է, որում բայց շատ տեղերում, թէև կան բոլոր գլուխներում, բայց շատ տեղերում, թէև կան վերոյիշեալ դպրոցներից ընթացաւարտներ, դաբանալ հոգմոր իշխանութեան անտարբերութեամբ կրօնուսուց չութեան պաշտօնը տգէտների ձեռք է ընկնում: Ոմք,

սուցչին դպրոցի վարչութիւնն է նշանակելու՝ մէն մի զաւանութեան հոգևոր իշխանութեան նախընթաց համաձայնութեամբ:

Մինչև հիմայ՝ հայ կրօնուսոյց գոնէ՝ անխտիր նշանակւում էր ամեն մի քահանայ, որ վարչութեանը դիւր էր դալիս, որ իւր անպատրաստութեամբ, իւր ծուլութեամբ և կամ այլ, ոչ գովելի, յատկութիւնով՝ համապատասխանում էր վարչութեան բուն նպատակին, այն է՝ հայ աշակերտների աջըում և ատելի և արհամարնելի կացուցանել հայ կրօնն ու կրօնաւորը:

Ըստ երկոյթին՝ այժմ հայեացքը փոխած է: «Առ ժամանակեայ կանոնների» Դ-րդ պարբերութեամբ՝ մեր կրօնուսոյցներից ևս այսուհետեւ որոշ ցենզ է պահանջւելու:

Ե.

Եթէ մինչև անգամ ընդունենք, որ այդ պարբերութեան գործադրութիւնը պահանջւելու է, — այսուամենայնիւ որտեղից գտնենք, հարկաւոր թւով, այնպիսի հոգևորականներ, որոնք կամ «աստւածաբանական բարձր կրթութիւն ստացած լինեն և կամ ուսուցչական կոչում ունեցողներ»: Ուրեմն՝ Վեհափառ կաթուղիկոսի կարգադրութեան նման՝ լուսաւորութեան նա-

խարարի կարգադրութիւնն ևս անգործադիր պիտի մնայ:

Եւ կամ «աստւածաբանական բարձր կրթութիւն ունեցողների» բացակայութիւնը յարմար առիթ կը լինի միջնակարգ դպրոցներից իսպառ վտարել հայ կրօնի աւանդումը:

Գալով ստորին դպրոցների հայ կրօնուսոյցներին, — նրանց էլ շարքը, ըստ առաջնոյն, Էլի խտացած պիտի այնպիսի քահանանաներով, «որոց հոգևոր իշխանութիւնը կը թոյլատրէ»:

Զ.

Բայց եթէ ճեմարանաւարտ կամ դպրանոցաւարտ հոգևորականներ շատ չունենք, գոնէ այդպիսի աշխարհականներ ունենք բաւականաչափ:

Մեր դպրոցների փակմամբ՝ դրանք կրթական ասպարէզը թողել էին:

Այժմ հետզհետէ յետ են դառնում: Եւ շատ էլ լաւ են անում: Նրանք անհրաժեշտ են մեր ծխական դպրոցների մէջ՝ կրօնի և այլ առարկաների համար:

Սակայն նրանք, նրանց մի մասը, կարող են պետական դպրոցներում ևս կրօնուսոյց լինել: Այսպիսով ահա մենք կարող կը լինենք այդ դպրոցների մուտքը՝ մեր անպատրաստ քահանաների առաջ փակել:

Է.

Գալով «Առ ժամանակեայ կանոնների» պահանջին թէ՝ կրօնուսոյցը հոգևորական անձն պէտք է լինի, — այդ պահանջն ևս կարելի է կատարել:

Առա թէ ինչպէս:

Յայտնի է, որ եկեղ. աստիճաններից՝ առաջին չորս աստիճաններն ունեցողը՝ հոգևորական է համարւում, թէպէտ և իւր ազատ կամքիցն է կախւած մինչև վերջը մնալ կամ չմնալ այդ կոչման մէջ:

Հոգևորականի զգեստ հազնելու պարտաւորութիւնից ևս՝ նա զերծ է:

Թող ուրեմն հոգևոր իշխանութիւնը հրաւէր կարդայ մեր ճեմարանաւարտ կամ դպրանոցաւարտ երիտասարդներին՝ կրօնի դասեր ստանձնելու պետական դպրոցներում: Եւ ցանկացողներին չորս աստիճան տալով՝ հայ կրօնուսոյցների մի նոր կօնտիգենդ կազմէ նրանցմով:

Աւելի լաւ կանեն երիտասարդները՝ եթէ իրանք պահանջեն իրանց ցանկութեամբ:

Մի այլ կարծիք բայց միւս անգամ:

Ը.

Բաց ՚ի այն, որ կրօնուսոյցները, մեծ ժամամբ պատրաստութիւն չեն ունեցել, այլ նաև հաստատուն ծրագիր էլ չեն ունեցել: Այլ առարկան աւանդել են կամ

ոռւսաց կրօնի ծաւալով և կամ իրանց սեպհական ծրագրով:

Ճիշտ է պետական դպրոցների հայ աշակերտների՝ մայրենի լեզվի մէջ ունեցած զարգացումը՝ է որ աննշան է, և է որ շատ տարբեր, բայց և այսպէս կրօնի ընդհանուր ծրագիր պէտք է սահմանել և յառաջադրել կրօնուսոյցներին՝ ի գործադրութիւն: Վերջիններիցս՝ իրանցից կախւած կը լինի արդէն այս և այն յապաւումը անել՝ ըստ զարգացման աշակերտների, կամ դասարանի:

Պետական դպրոցների հայ կրօնի ծրագիր ունենալն՝ թոյլատրւած է նաև «առժամանակեայ կանոններով»:

Թ.

Սակայն լոկ ծրագիր սահմանելն ու հրատարակելը բաւական չէ: Հարկաւոր է նաև ծրագրի գործադրման վրայ հսկել:

«Առժամանակեայ կանոններ»-ի Զ-րդ պարբերութիւնը՝ ի պաշտօնէ իրաւունք է տալիս հոգևոր իշխանութեանը, իւր ներկայացուցիչների միջոցաւ, այցելել կրօնի դասերին, տարեկան հարցաքննութիւններին ներկայ լինել և իրանց դիտողութիւնները, իրանց անմիջական իշխանութիւնների միջոցաւ, որ են թեմակալ Առաջնորդները, հաղորդել դպրոցային վարչութիւններին:

Սակայն ովքեր են հայ հոգևորականու-

թեան տեղական ներկայացուցիչները:—
Փոխանորդներ և գործակալներ.—վարդա-
պետ և քահանայ:

Չենք ժխտում, որ դրանց մէջ կը լի-
նեն բանիմաց և զարգացած մարդիկ, ո-
րոնք ներկայացուցչեան գործը՝ կարող
են պատւառը կերպով առաջ տանել: Բայց
նախ՝ որ այդպիսիների թիւը, դժբաղդա-
բար ըիչ է և երկրորդ՝ նրանք կարող են
կրօնական և մանկավարժական հմտութիւն
չունենալ:

Դրանք,—իրանց անմիջական պարտա-
ւորութիւնների պատճառաւ, —երբեմն չեն
կամենալ, երբեմն էլ չեն կարողանալ նաև
պատշաճաւոր և անաշառ հսկողութիւն ու-
նենալ կրօնուայցների գործունէութեան
վրայ:

Ժ.

Բաց ՚ի հսկողութիւնից՝ կան և ուրիշ
պարտականութիւններ, որոնք հսկելուց ա-
ւելի օգտակար և անհրաժեշտ են: Մեր
կրօնուայցներին անհրաժեշտ է առաջնոր-
դել, սովորեցնել, ուղղութիւն տալ, հար-
կաւոր է նրանց համար օրինակելի դասեր
խօսել, ժամանակ առ ժամանակ, նրանց
համար և նրանցմով մատնական և ընդհա-
նուր ժողովներ գումարել և այլն, հարկա-
ւոր է վերջապէս պետական դպրոցների
վարչութիւնների հետ՝ կանոնաւոր կազ և
յարաբերութիւն ունենալ, այլ ոչ թէ ա-

մեն բան թողնել պատահական մարդկանց
պատահական յարաբերութիւններին:

Այս ամենը պուլս բերելու համար՝ մեր
կարծիքով պէտք է մի նոր հոգեոր պաշտօ-
նէութիւն սահմանել, ըստ օրինակի նախ-
կին թեմական, կամ նոր ծրագրւած զջա-
նալին տեսչութեան:

Բաց ՚ի պետական դպրոցների կրօնու-
այցներից՝ թող այս պաշտօնէութեանը
ենթարկելին նաև մեր եկեղեցական ծխա-
կան դպրոցների կրօնուայցներն ևս: Եւ
կան դպրոցների հաստատւին և արձակւին մեր
վերջիններս հաստատւին և արձակւին մեր
առաջարկած պաշտօնէութեան վետոյով,
այլ ոչ Առաջնորդի կամ հոգաբարձու-
թեան:

Իւր հերթում, պաշտօնեան, ՚ի հարկէ,
ենթարկելու է իրանից բարձր իշխանու-
թեան կամ իրաւասու մարմինին:

ԺԱ.

Պաշտօնեան հոգեորբական անձն է լի-
նելու և, ՚ի հարկէ, բարձրագոյն կրթական
ուսում և կրթութիւն ստացած անձն:

Թէպէտե սակաւաթիւ, այնուամենայ-
նիւ մենք էլի ունենք այդպիսի անձինք:
Նրանց անւանելու հարկ չկայ. բանիմաց
հասարակութիւնը նրանց ճանաչում է և,
մեծայոյս ենք, կը գնահատէ էլ եթէ որ
նրանք իրանց մատնագիտութիւնը գործա-
դրեն ժողովրդեան մէջ, կեանքում, այլ ոչ
այնպիսի զջանում, ուր կրօնական գիտու-

թիւնն ու կրթութիւնը խոտում, ծաղրում
են՝ ողջ իրանց կեանքում մի որ և է էաւ
կան և հաստատուն սկզբունք չունեցող
«շատաշրջիկ և խելաշրջիկ» մարդիկ:

Մինչդեռ կրօնական-բարոյական կրթութիւնը մեզ, հայերիս աւելի քան ում
և իցէ անհրաժեշտ է այժմ, որպէս զի կարողանանք այս գժոխային ժամանակներում ապրել և գործել և, եթէ հարկ լինի,
նաև մեռնել, բայց արդէն որպէս ինքնուրոյն, ազատ և անկախ հասարակութիւն,
ժողովուրդ, այլ ոչ որպէս այլոց նպատակներին զոհւող ոչխարներ—հոտ:

ԺԲ.

Այն, ոչ մի ազատ կառավարութիւն,
ոչ մի ինքնիշխանութիւն, ոչ մի քաղաքական այս կամ այն գաւանանք, ձգտում և
կազմակերպութիւն չէ կարող մարդուս
մէջ ներշնչել անկախութեան, ազատութեան այն ոգին, ինչ որ ներշնչում, տալիս
է քրիստոնէական կրօնը, նրա վարդապետութիւնը—ամբողջապէս հիմնւած ազատութեան և սիրոյ վրայ:

Դժբաղջաբար այդ կրօնի էութիւնից և
նրա վարդապետութիւնից ոչ մի տեղեկութիւն չունեցող մարդիկ այսօր վեր ին կացել և հակաքրիստոնէական գաղափարներ
են տարածում մեր ժողովրդեան և նրա
մատաղ սերնդի մէջ, միամտաբար, կարծե-

լով՝ որ նրան դէպ ի բարեկեցութիւնն ու
բաղդաւորութիւնն են առաջնորդում:
Շատ շատերիցը ահա մի օրինակ:
ԺՊ.

«Յառաջ» օրաթերթի գրադարանը այս
տարի մի գրքոյկ է հրատարակել: Հեղինակ՝
ոմն Կարմելիւկ: Խոերէնից թարգմանել
է Տ. Յ.: Գրքի անունն է «Նոր լերան քա-
րոզը»:

Սա մի պարօղիա է Մ. Աւետարանի
յայտնի լերան քարոզին.

Ողորմելի հեղինակը և նրա ողորմելա-
գոյն թարգմանիչն ու հրատարակիչը ծաղ-
րում են այն քարոզը, որ մի կատարեալ
բողոք, մի քննադատութիւն է Քրիստոսի
ժամանակակից կարգերի և հայեացքների
դէմ:

Բայց որովհետև Աստւածամարդի իւր
բողոքը չէ արտայայտում ճոճոան, հայնո-
յալից, շանթալից և որոտընդուտ բառերով
(առանց որոց մեր ազատամիտները բողոք և
քննադատութիւն չեն հասկանում), ուս-
տի և Կարմելիւկի նման հեղինակներն և
նրանց Alter-ego-ներն՝ հեգնում, ծաղրում
են այն գաղափարները, որոց պաշտպան և
ջատագով են համարում իրանք իրանց:

ԺՊ.

Արդ՝ ինչպէս որ տգէտ, անպատճառ
հեղինակներն և գրողներն վարկաբեկ են
անում կրօնը միամիտ ընթերցողի աշխում,
նոյնը անում են տգէտ, անպատճառ կրօ-

նուասոյցները՝ գպրոցների աշակերտ-աշա-
կերտուհիների վերաբերմամբ:

Հարկաւոր է լուրջ ուշադրութիւն դար-
ձնել զրոցներում ուսանող մատաղ սերնդի
կրթութեան, դաստիարակութեան վրայ:
Իսկ այս բանը որքան որ ծնողներից է կախ-
ւած, նոյնքան և աւելի կրօնուսոյցներից:

Մենք ներկայ ենք եղել կրօնի դասերի,
երբ ամբողջ դասարանը հոգեզմայլութեամբ
լսում էր կրօնուսուցչին, հրճւանքով պա-
տասխանում նրա հարցերին և հոգւով թաղ-
ծում, երբ դասր վերջացած լինելու զանդի
ձայնն էր լսում:

Եւ ընդհակառակը, կրօնուսոյցներ ենք
տեսել, որոց այդ տիտղոսը տալն՝ մահացու
մեղք է:

Հեռնե, հեռու այդպիսիները գպրոցնե-
րից: Մրանք նրանց տեղը չեն:

Կարծում ենք, որ կրօնուսոյցների հա-
մար յատուկ պաշտօնէութիւն սահմանե-
լով և եթ (այլ ոչ զրաւոր կարգադրութիւն-
ներ անելով) մենք կարող կը լինենք հայ
կրօնուսուցչի վարկն ու նշանակութիւնը
մասամբ ըարձրացնել նոր սերնդի աչքում:

Գալով պաշտօնեաների թւին, — դա թող
որոշեն աւելի ձեռնհաս անձինք: — Մեր կար-
ծիքով ամէն մի թեմ պիտի ունենայ մի այդ-
պիսի պաշտօնեայ, որին և պէտք է վար-
ձատրէ թեմսկան և կեկդասմական հասոյթ-
ներով:



ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱԾԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- | | | | |
|-----|-------------------------------------|---------|---|
| 1. | ԶԵՆԻԱՅԹ—ՂԵՆԻԱՅԹ | | |
| 2. | ԳԼԽԱՊԻՆ | | |
| 3. | Ա.ՊՈՐԻՆԻ ՊԱւակը | | |
| 4. | ԳԻՆԵԴԱ | | |
| 5. | ՌԱՓՓԻ «ԿԱՅՃԵՐԸ» | | |
| 6. | ԿԱՋԲԻՆԸ ՔԱՐԻՆ ԿՊԱՒ | | |
| 7. | ՄԱՊՐՈՒՄՆԵՐ | | |
| 8. | ՊԱՏՈՄԱԿԱՆ ՔԱՊԼԱՋՆԵՐ Ա. ԱԼՐԱԿ | | |
| 9. | » | Բ. | » |
| 10. | » | Գ. | » |
| 11. | » | Դ. | » |
| 12. | » | Ե. | » |
| 13. | » | Զ. | » |
| 14. | » | Է. | » |
| 15. | ԽԱՐԱՅՔ ՕՐԻՆ և իր ՔԱՊԱՔԱԿԱՆ | | |
| | | ՃՐԱՊԻՐԸ | |
| 16. | ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐՃԱՆԸ | | |
| 17. | ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՐՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐՃԱՆԸ | | |
| 18. | ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀՈՐԾՈՐԴ ՀՐՃԱՆԸ | | |
| 19. | ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀԻՆգԵՐՐՈՐԴ ՀՐՃ. | | |
| 20. | ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵցԵՐՐՈՐԴ ՀՐՃ. 30 կ. | | |
| 21. | ՊԱՏՈՄՈՒթեան ՊԱՍԵՐԸ | 15 կ. | |
| 22. | ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՆՔ | 30 կ. | |

ՀՀ Ազգային գրադարան



NL0191789

